# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս հաշվետվությունը պատրաստվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին (ՀԱՄՀ), ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի Դաշնային համագործակցությանը (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ-ը ներկայացնելու նպատակով: Այն պատրաստվել է Ալեքսանդր Պետրոսյանի կողմից՝ Գերմանիայի Դաշնային համագործակցության (GIZ) ծրագրի շրջանակներում:

Հաշվետվության մեջ ներկայացված տեսակետները հեղինակինն են, որոնք առաջացել են հետազոտության տվյալների ամփոփման ու վերլուծության արդյունքում և պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Նահանգների, Գերմանիայի Դաշնության կառավարությունների կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ու Գերմանիայի Դաշնային Համագործակցության տեսակետները:

2014**թ. Մարտ**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ-2014

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ* ..... 3

*ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ* ..... 7

1. **ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ** ..... **8**

**2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** ..... **9**

**3. ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ** ..... **11**

*3.1. Մեկնողների հետազոտություն* ..... 11

*3.2. Ժամանումների հետազոտություն* ..... 14

**4. ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** ..... **16**

*4.1. Մեկնողների հետազոտություն համառոտ նկարագիրը* ..... 16

*4.2. Քաղաքացիության և հիմնական բնակության երկրի նկարագիրը* ..... 18

*4.2. Տարիքը և սեռը* ..... 22

*4.3. Այցելության նպատակը* ..... 25

*4.4 Կացարանը և այցելության տևողությունը* ..... 31

*4.5. Ճամփորդական վարքագիծը* ..... 42

*4.6. Ուր են այցելել ժամանող զբոսաշրջիկները* ..... 45

*4.7. Այցելուների ծախսերը* ..... 52

4.7.1. Մեկ անձին ընկնող միջին ծախսերը և օրական ծախսերը ..... 52

4.7.2. Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած զբոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների ..... 57

*4.8. Այցելությունների հետ կապված այլ հարցեր* ..... 61

4.8.1. Հարմարությունների և ծառայությունների որակի գնահատում ..... 61

4.8.3. Հայաստան կրկին այցելելու ցանկությունը ..... 62

4.8.4. Հայաստանը որպես հանգստավայր խորհուրդ տալը ..... 64

4.8.5. Տրանսպորտի տեսակը և պատկանելիությունը ..... 64

5. ***ԺԱՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*** ..... 65

*5.1. Ժամանողների հետազոտություն համառոտ նկարագիրը* ..... 65

*5.2. Քաղաքացիության և հիմնական բնակության երկրի նկարագիրը* ..... 66

*5.3. Այցելության երկիրը* ..... 68

*5.4. Տարիքը և սեռը* ..... 70

*5.5. Ճամփորդական վարքագիծը* ..... 71

*5.6. Կացարանը և այցելության տևողությունը* ..... 73

*5.7. Այցելուների ծախսերը* ..... 77

5.7.1 Մեկ անձին ընկնող միջին ծախսերը և օրական ծախսերը ..... 77

5.7.2. Միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների ..... 79

*5.8. Այցելությունների հետ կապված այլ հարցեր* ..... 84

5.8.1. Ուղևորության ֆինանսավորումը ..... 84

5.8.2. Ստացվող եկամուտը ..... 85

5.8.3. Տրանսպորտի տեսակը և պատկանելիությունը ..... 87

6. ***ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** ..... 89

**ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՄԵԿՆՈՂԻ ՀԱՐՑՈՒՄ** ..... **94**

**ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԺԱՄԱՆՈՂԻ ՀԱՐՑՈՒՄ** ..... **98**

# ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Զբոսաշրջիկ**՝ է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս, քան 1 գիշերակացով և ոչ ավել, քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

**Ճանապարհորդներ**[1]՝ զբոսաշրջիկներ և աշխատանքի նպատակով մեկնողներ/ժամանողներ:

**Այցելուներ**՝ հասկացությունը իրենից ներկայացնում է ամբողջ զբոսաշրջության վիճակագրության համակարգի հիմնական բաղադրիչը, որը իր հերթին բաժանվում է երկու խմբի՝ "զբոսաշրջիկներ"(գիշերող այցելուներ) և "մեկօրյա այցելուներ" (որոնք ժամանման երկրի կոլեկտիվ կամ անհատական տեղավորման միջոցներում չեն գիշերում):

**«ՀՀ ռեզիդենտ»** ըստ Ազգային հաշիվների համակարգի և ԱՄՀ-ի վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության (BPM-6), ՀՀ ռեզիդենտ համարվում է ֆիզիկական անձը (տնային տնտեսությունը), որի հիմնական բնակության վայրը կամ կենսական շահերի հիմնական կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը:

**«Հիմնական բնակության վայր»** դա այն երկիրն է, որտեղ ֆիզիկական անձը, անկախ քաղաքացիությունից, անընդմեջ բնակվում է 1 տարուց ավելի: Ընդ որում 1 տարին հիմնականում օգտագործվում է պայմանականորեն և նախատեսված է միջազգային համադրելիության ապահովման նպատակով:

**Զբոսաշրջությունն ըստ նպատակի դասակարգվում է՝**

[1] Հետայսու ճանապարհորդ տերմինը օգտագործվում է այն ժամանակ, երբ ցուցանիշը ներառում է <Աշխատանքի> նպատակը, մնացած այլ դեպքերում «Զբոսաշրջիկ»:

- **Գործնական** (սարքավորումների տեղակայում, պայմանագրերի կնքում, խորհրդակցությունների, կոնգրեսների, ցուցահանդեսների, տոնավաճառների, դասախոսությունների, սպորտային միջոցառումների և համերգների մասնակցություն, կառավարական գործուղումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ այցելությունը կապված է ժամանման երկրում մշտական կամ ժամանակավոր աշխատանքի հետ),
- **բուժման**(այցելություն, առողջարաններ, հանգստյան տներ և այլ առողջապահական հաստատություններ առողջության վերականգնման նպատակով),
- **կրթության**(ուսուցման, վերապատրաստման կամ հատուկ մասնագիտական դասընթացների մասնակցություն),
- **հանգստի կամ ժամանցի** (հանգստի, տեսարժան վայրերի դիտում, խանութների այցելություն և այլն),
- **մարզական**, **մշակութային միջոցառումներին մասնակցություն** (սպորտային միջոցառումներին, համերգների, թատրոնների և այլ միջոցառումների մասնակցություն)
- **այցելություն հարազատներին** (տարբեր նպատակներով այցելություն ընկերներին, հարազատներին)
- **ուխտագնացություն** (կրոնական և այլ հոգևոր միջոցառումներին մասնակցություն)
- **այլ**:

**Զբոսաշրջային ծախսեր** դրանք ծառայությունների դիմաց այն վճարումներն են, որոնք զբոսաշրջիկների տեղավորման միջոցները մատուցել են այցելուներին՝ գիշերավարձ, սնունդ, տրանսպորտ, էքսկուրսիաներ, կենցաղսպասարկում(զբոսաշրջիկների տեղավորման միջոցների ենթակայության կետերից) և այլն:

**Նախկին ԽՍՀՄ երկրներ**՝ Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Տաջիկստան, Ռուսաստան, Բելառուս, Թուրքմենստան, Ուկրաինա,ինչպես նաև հարցվողների կողմից նշված՝ Աբխազիա և Արցախ:

**Եվրոմիության երկրներ**՝ Գերմանիա, Լեհաստան, Ֆրանսիա, Իտալիա, Չեխիայի Հանրապետություն, Միացյալ Թագավորություն, Բելգիա, Ավստրիա,

Նիդերլանդներ, Իսպանիա, Հունաստան, Շվեդիա, Դանիա, Բուլղարիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Էստոնիա, Ռումինիա, Լիտվա, Լատվիա, Սլովակիա, Մալթա, Պորտուգալիա, Խորվաթիա, Կիպրոս, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջությունը իրենից ներկայացնում է սոցիալական մշակութային և տնտեսական երևույթ, կապված մարդկանց հիմնական բնակության ու աշխատանքի վայրի տեղաշարժի հետ: Զբոսաշրջությունը, որպես մասսայական երևույթ կարիք ունի քանակական և որակական գնահատականի: Ինչպես նշվում է զբոսաշրջությանն առնչվող մի շարք միջազգային առաջարկություններում, այդ բնագավառի քաղաքականություն իրականացնող անձանց կողմից արդյունավետ որոշումների կայացման համար, շատ կարևոր է տնօրինել բազմաբնույթ ու հուսալի վիճակագրական տեղեկատվության: Եվ միայն արժանահավատ ու բավարար տվյալների առկայության դեպքում է հնարավոր իրականացնել զբոսաշրջության բնագավառին առնչվող տարբեր տեսակի վերլուծություններ: Ազգային տնտեսության շրջանակում զբոսաշրջության վիճակագրությունն անհրաժեշտ է մարքեթինգային ռազմավարության մշակման, միջգերատեսչական հարաբերությունների ամրապնդման, կառավարման որոշումների արդյունավետության գնահատման համար: Դրա հետ մեկտեղ զբոսաշրջության վիճակագրության հարցերը համարվում են բարդ և պահանջում են տվյալների հավաքագրման, մշակման ու վերլուծության մեթոդաբանության շարունակական բարելավում:

Զբոսաշրջությունը կարևոր դեր է խաղում երկրի տնտեսության և սոցիալական կյանքի համար, և դրա համար մեծ է վիճակագրական տվյալների պահանջը այդ բնագավառում:

Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության Համաշխարհային Կկազմակերպության(ԶՀԿ) վերջին տվյալների 2013 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունները գերազանցել են միլիարդի սահմանը՝ 1087 մլն. մարդ, նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 5%, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 9%, յուրաքանչյուր 12-րդ աշխատողը զբաղված է զբոսաշրջության բնագավառում, 1.3 տրիլիոն ԱՄՆ դոլարի զբոսաշրջային ծառայության արտահանում (Հայաստանի տեսակարար կշիռը կազմում է 0.1%): Միջազգային այցելությունների մեծ մասի հիմնական նպատակը հանդիսացել է հանգիստը և ժամանցը՝ 52%, գործնականը՝ 14% և առողջությունը, կրթությունը, ուխտագնացությունն ու այլ նպատակը՝ 34%:

Ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 5-6 մլրդ զբոսաշրջիկ:

**Հայաստանի համար վերջին տարիներին արձանագրվել են հետևյալ ցուցանիշները***

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|---|---|---|---|---|---|
| Ներգնա զբոսաշրջիկներ, մարդ | 575281 | 683979 | 757935 | 843177 | 957 240 |
| Արտագնա զբոսաշրջիկներ, մարդ | 509643 | 613770 | 714953 | 806905 | 906154 |
| Ներքին զբոսաշրջիկների թվաքանակը, մարդ | 435674 | 456432 | 489419 | 514771 | 669540 |
| Զբոսաշրջային ծառայությունների արտահանում, մլն ԱՄՆ դոլար | 366.44 | 445.45 | 473.31 | 473.94 | 470.0* |
| Զբոսաշրջային ծառայությունների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար | 306.74 | 352.52 | 415.02 | 416.75 | 420.0* |

*Աղբյուրը ՀՀ ԱՎԾ հրապարակումներ, 2013թ. գնահատական:

# 1. *ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ*

Սույն ընտրանքային հետազոտության նպատակը հանդիսացել է, մեկ տարվա ընթացքում Հայաստանի սահմանային անցման կետերում հարցում անցկացնելու միջոցով, նպաստել զբոսաշրջության նպատակով հանրապետություն ժամանողների և հանրապետությունից մեկնողների վերաբերյալ հնարավորինս հավաստի տվյալների հավաքագրման գործընթացին: Հավաքագրված տվյալները կբնորոշեն զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը, ժամանման/մեկնման նպատակը, զբոսաշրջիկների սեռատարիքային կազմը, ճամփորդության կազմակերպման տարբերակները, կատարված ծախսերի կառուցվածքը և այլն: Հավաքագրված տվյալների հիման վրա կիրականացվեն վերլուծություններ և կմշակվի վերջնական հաշվետվություն, որը հնարավորություն կտա բացահայտել Հայաստանի զբոսաշրջության ոլորտի դրական և բացասական կողմերը, վերանայել զբոսաշրջության ռազմավարությունը, մշակել զբոսաշրջային նոր փաթեթներ և բարելավել զբոսաշրջության ոլորտում իրականացվող ծառայությունների որակը:

Հետազոտության ձևաչափը և հավաքագրված տվյալները հետագայում օգտակար կլինեն զբոսաշրջության սատելիտային հաշվի կառուցման գործընթացի համար:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները հնարավորություն կտան կառավարության և մասնավոր հատվածի կողմից Հայաստանի զբոսաշրջության ոլորտն ավելի լավ հասկանալու, ինչպես նաև աջակցելու այդ

ոլորտում կատարվելիք աշխատանքների կանխատեսման, ապրանքների արտադրության, քաղաքականության մշակման և խթանման մեթոդների ստեղծման գործընթացին:

Հետազոտության ձևաչափի մշակումը և իրականացումը կատարվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ), Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի Դաշնային համագործակցության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (EDMC) ծրագրի կողմից:

Նմանատիպ հետազոտություն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել էր 2006-2007թթ. (12 ամիս տևողությամբ՝ 2006թ. սեպտեմբերից 2007թ. օգոստոսը ներառյալ) ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության և ԱՄՆ ՄԶԳ Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում ծրագրի համագործակցությամբ:

## 2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեկնող օտարերկրյա զբոսաշրջիկների և ժամանող հայաստանյան զբոսաշրջիկների հետազոտությունը մեկնարկել է 2013թ. հունվարի սկզբին և ավարտվել 2013թ. դեկտեմբերի վերջին: Հետազոտության հարցաթերթերը և մեթոդաբանությունը հաստատվել են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից:

Հարցազրույցներն իրականացվել են վերապատրաստում անցած 31 հարցազրուցավարների կողմից Երևանի Զվարթնոց և Գյումրիի օդանավակայաններում, Բագրատաշենի, Բավրայի ու Մեղրիի սահմանային անցման կետերում և «Այրում» երկաթուղային կայարանում: Հաշվի առնելով Գոգավանի և Պրիվոլնիի սահմանային անցման կետերի համեմատաբար փոքր տեսակարար կշիռը և այցելուների միօրինականությունը (հիմնականում ազգակցական կապերի վրա հիմնված այցելություններ), դրանք հետազոտությամբ չեն ընդգրկվել: Հարցվողների հետ շփումն ավելի դյուրին դարձնելու համար, մեկնողների համար նախատեսված հարցաշարը թարգմանվել է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, պարսկերեն, իսպաներեն

լեզուներով: Հարցաթերթերի հավաքագրումը, ստուգումը, կոդավորումը և դրանց հիման վրա ելքային աղյուսակների կազմումը կատարվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

Հետազոտության ընթացքում կիրառվել է պատահական ընտրանքի սկզբունքը, իսկ հարցազրույցներն անց են կացվել ժամանող և մեկնող զբոսաշրջիկների ընդհանուր թվի մոտ 1.5%-ի հետ յուրաքանչյուր ամիս 7 ամբողջական օր տևողությամբ, նպատակ ունենալով հարցումն անցկացնել յուրաքանչյուր ամսվա մեջ ընդգրկված շաբաթվա բոլոր օրերը (հետազոտության օրը սահմանային անցման կետը հատող յուրաքանչյուր 15-րդ մարդը): Հարցվողները իրենց պատասխաններում ազատ են եղել և պատասխանել են ոչ բոլոր հարցերին: Հետևաբար, ելքային աղյուսակներում ընդգրկված ցուցանիշներն ամփոփված են ստացված պատասխանների հիման վրա և բնականաբար հարցաթերթի հարցերի գծով ստացված պատասխանողների թվաքանակը հավասար չեն: Հետազոտության հարցաթերթերը կցված են սույն հաշվետվությանը: Հետազոտությունը և մեթոդաբանությունը մշակվել են ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության սահմանման «զբոսաշրջիկ»[2] համարվող անձանց համար, չնայած այս դեպքում՝ զուտ վիճակագրական նպատակներից ելնելով (վճարային հաշվեկշռի ճանապարհորդություն հոդվածի համար) հավաքագրված տվյալները վերաբերվում են նաև աշխատանքի նպատակով ուղևորություններին, որը առավել բնորոշ է Հայաստանի արտագնա ճանապարհորդությանը: Հետայսու, եթե տեքստում օգտագործված է «ճանապարհորդ» տերմինը, ապա այն ներառում է նաև աշխատանքի նպատակ ունեցող այցելուներին, եթե «զբոսաշրջիկ», ապա առանց այդ խմբի այցելուներին:

[2] Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ԶՀԿ) մեթոդաբանության, "զբոսաշրջիկ" է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս քան 1 գիշերակացով և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ նույն մեթոդաբանության, բոլոր ճանապարհորդները, ովքեր զբաղվում են զբոսաշրջությամբ, համարվում են "այցելուներ", որոնք էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ "զբոսաշրջիկներ" (գիշերող այցելուներ) և "մեկօրյա այցելուներ" (առանց գիշերակացի):

# *3. ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ*

## 3.1. Մեկնողների հետազոտություն

Մեկնողների հետազոտությունն իրականացվել է Հայաստան այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Դիտարկման պահը ընտրվել է մեկնման ժամանակը այն պարզ պատճառով, որ այցելուները ավարտել են իրենց ճանապարհորդությունը և հնարավորություն ունեն պատասխանելու հարցաշարում ընդգրկված գրեթե բոլոր հարցերին:

Հարցմանը մասնակցած 23658 մեկնողներից ՀՀ ոչ ռեզիդենտի կարգավիճակ են ունեցել 12634-ը, ընդ որում թվով 1844 ՀՀ քաղաքացիներ (ոչ ռեզիդենտների 17.5%-ը ) պատասխանել են, որ իրենք հանդիսանում են այլ երկրի ռեզիդենտ կամ հիմնական բնակության վայրը Հայաստանը չէ:

***Առաջնորդվելով ՄԱԿ-ի ԶՀԿ մեթոդաբանությամբ հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ ընդհանուր հարցվողներից, բացառելով հարցմանը մասնակցած բոլոր ոչ զբոսաշրջիկ համարվող անձանց, ընդամենը մեկնող 10448 անձինք կամ 44.2%-ն են համարվել Հայաստան ժամանող՝ ներգնա զբոսաշրջիկներ:***

Ինչպես և սպասվում էր, Հայաստանը, որպես զբոսաշրջային երկիր, հիմնականում գրավիչ է այն երկրների համար , որտեղ առկա է հայկական մեծ սփյուռք, մասնավորապես Ռուսաստան, Վրաստան, Իրան, ՈՒկրաինա, Գերմանիա, ԱՄՆ, ընդ որում վերը նշված երկրներից ժամանողների մեջ, բացի Գերմանիայից և Իրանից գերակշռող են հայկական ծագում ունեցողները

Ակնհայտ ու տրամաբանական է, որ պայմանավորված զբոսաշրջիկների ընդհանուր քանակում մեծ է հայկական ծագում ունեցող զբոսաշրջիկների մասնաբաժնով, «Այցելությունն հարազատներին և ընկերներին» նպատակը նշվել է Հայաստան կատարած ուղևորությունների հիմնական նպատակ:

Հարազատներին և ընկերներին այցելությունից հետո մյուս առավել նշանակալի նպատակներ են նշվել «Գործնական» և «Հանգստի ու ժամանցի» նպատակով կատարված այցելությունները: Պատասխանողների կողմից հանգստի կամ ժամանցի անցկացման նպատակով Հայաստանը, որպես զբոսաշրջային ուղղություն ընտրելու հիմնական պատճառներ են նշվել երկրի բնությունը, պատմամշակութային վայրերը կամ արկածային շրջագայությունը:

Հարկ է նշել, որ ներգնա ճանապարհորդների հիմնական մասը տղամարդիկ են, իսկ կանայք հիմնականում ժամանում են Հայաստան «Բուժման» և «Կրթության» նպատակով, իսկ մնացած բոլոր նպատակներով տղամարդիկ ունեն գերակշիռ մաս: Ինչ վերաբերվում է տարիքային խմբին, ապա հիմնական ժամանողների տարիքային խումբը 36-63: Պետք է նշել, որ հայկական ծագում ունեցողների մոտ նույնպես տղամարդիկ ունեն ավելի մեծ տեսակարար կշիռ և նրանց մոտ նույնպես հիմնական տարիքային խումբը 36-63 տարիքի միջակայքն է:

Ուղևորության պլանավորման նպատակով ճամփորդական գործակալությունների ծառայություններից օգտվել են հիմնականում Ճապոնիայից, Ֆիլիպիններից, Կորեայից և եվրոպական երկրներից ժամանած զբոսաշրջիկները, որոնց նպատակը եղել է հանգստի կազմակերպումը: Բացի այդ, նշված երկրներից և Իրանից ժամանած զբոսաշրջիկները ավելի հակված են հանգրվանել հյուրանոցներում: Մինչդեռ, Ռուսաստանից և Վրաստանից ժամանած զբոսաշրջիկների մեծ մասը հանգրվանում է ընկերների և հարազատների տանը, նույնը կարելի է ասել նաև ընկերներին ու հարազատներին այցելության նպատակով ժամանած, ինչպես նաև հայկական ծագում ունեցող զբոսաշրջիկների համար:

Այցելության ամենաերկար ժամանակահատվածն ընկնում է աշխատանքի, կրթության, բուժման և ընկերներին ու հարազատներին այցելության, իսկ ամենակարճը՝ հանգստի և գործնական նպատակով ժամանած զբոսաշրջիկներին: Զբոսաշրջիկների մեծ մասի այցելության տևողությունը 4-7 գիշեր է, որին հաջորդում է մինչև 3 գիշեր պատասխանը: Ռուսաստանից ժամանածների ուղևորության տևողությունը, հիմնականում 22 և ավելի գիշեր է, իսկ հարևան երկրների՝ Վրաստանի զբոսաշրջիկների դեպքում՝ 1-3 գիշեր և Իրանի դեպքում՝ 3-7 գիշեր:

Այցելությունների ամենամեծ թիվն ընկնում է Երևանին, իսկ ամենափոքրը՝ Լեռնային Ղարաբաղին և Սյունիքի մարզին: Երկրի տարբեր վայրեր ավելի հաճախ այցելել են հանգստի նպատակով ժամանած զբոսաշրջիկները, ինչը զարմանալի չէ, մինչդեռ աշխատանքի նպատակով ժամանածներն ամենաքիչն են այցելել մեկից ավելի վայրեր: Հայաստանում ամենաինտենսիվ ուղևորություններն ընկնում են Սլովենիայի, Իսրայելի ու Ճապոնիայի ճանապարհորդներին, որոնց մոտ այցելության վայրերի քանակն ամենամեծն է՝ 5 և ավել վայր, իսկ երկրի ներսում ամենափոքր քանակով ուղևորություններ կատարողները Վրաստանից, Թուրքիայից, Լիբանանից, Բուլղարիայից և Իրանից ժամանած զբոսաշրջիկներն են՝ 1-2 վայր:

Զբոսաշրջիկների կողմից երկրում անցկացրած գիշերների քանակի առումով առաջին տեղում Երևանն է, որին հաջորդում է Արմավիրի, Գեղարքունիքի ու Շիրակի մարզերը: Ինչևէ, Շիրակի մարզ այցելող զբոսաշրջիկները, հիմնականում, ժամանել են Հայաստան ընկերներին և բարեկամներին հանդիպելու նպատակով, այդ իսկ պատճառով կացարանի վրա նրանց կատարած ծախսերը նշանակալի չեն: Բացի այդ, պարզվում է նաև, որ հայկական ծագում ունեցող և ընկերներին ու բարեկամներին այցելող զբոսաշրջիկներն ավելի քիչ ժամանակ են ծախսել Երևանում:

Հայաստանը, ընդհանուր առմամբ, զբոսաշրջիկների կողմից լավ է գնահատվել: Լավագույն գնահատականները տրվել են զբոսավարների ծառայություններին, տեսարժան վայրերին և սննդի կազմակերպմանը(ռեստորաններ), իսկ ամենացածր գնահատականները՝ ճանապարհներին և գների մակարդակին: Այցելուների գերակշռող մեծամասնությունը կրկին Հայաստան այցելելու ցանկություն ունի, չնայած Կորեացի, ճապոնացի և Թայվանցի զբոսաշրջիկների մոտ կրկնվող այցելությունների ցանկության դրույքաչափն ավելի ցածր է, քան զբոսաշրջիկների մյուս խմբերի մոտ: Բոլոր այցելուների մեծամասնությունը նշել է, որ խորհուրդ կտա իր ընկերներին ու հարազատներին այցելել Հայաստան, իսկ Սլովենիայից,Կորեայից ու Ճապոնիայից ժամանած զբոսաշրջիկների դեպքում այդ դրույքաչափն ավելի ցածր է՝ ելնելով հարցման պատասխաններից:

Ճամփորդական փաթեթով Հայաստան այցելող զբոսաշրջիկներն ամենաշատ են գումարներ ծախսում և’ ընդհանուր և’ օրական ծախսերի առումով: Հայաստանում իրենց այցելության ժամանակ առավելագույն գումարներ ծախսող զբոսաշրջիկները ԱՄՆ-ից, Կանադայից, Կորեայից, Հնդկաստանից ժամանած զբոսաշրջիկներն են, իսկ նվազագույնը՝ Վրաստանից և Իրանից ժամանածները: Ինչպես նշված է հաշվետվության այլ մասերում, հայկական ծագում ունեցող և ընկերներին ու բարեկամներին հանդիպելու նպատակով ժամանողները, ընդհանուր առմամբ, ավելի քիչ են ծախսում ավելի երկար ժամանակահատվածում: Արձակուրդների նպատակով այցելող զբոսաշրջիկները ծախսում են ամենաշատը, նրանց այդ ծախսերը ավելանում են ճամփորդական փաթեթով ճանապարհորդելու դեպքում:

Այցելուների ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում է միջազգային տրանսպորտային ծախսերին ու կացարաններին, մինչդեռ ռեստորանների, կազմակերպված ճամփորդականների և հուշանվերների վրա կատարված ծախսերը մեծ չափերի չեն հասնում: Հանգստի նպատակով ժամանածներն ավելի շատ են ծախսում միջազգային տրանսպորտի և կացարանների վրա, քանի որ նրանք, մեծամասամբ, ժամանում են հեռու երկրներից և նրանց մեջ ավելի քիչ են այն զբոսաշրջիկները, ովքեր

հանգրվանում են իրենց ընկերների ու բարեկամների տանը: Նշանակալի թվեր են ստացվել «Այլ ծախսեր» մասով, հատկապես Ռուսաստանից և ԱՄՆ այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների մոտ:

## 3.2. Ժամանումների հետազոտություն

Ժամանումների հետազոտությունն իրականացվել է Հայաստանի բնակիչների միջազգային ուղևորությունների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Այդ իսկ պատճառով էլ զարմանալի չէ, որ հարցմանը մասնակցած Հայաստանի ռեզիդենտների 93.6%-ն ունի Հայաստանի քաղաքացիություն: Հայաստանի բնակիչների մեծ մասը ճանապարհորդում են Վրաստան, Ռուսաստան և Իրան, ինչը զարմանալի չէ՝ ելնելով այն հանգամանքից, որ Վրաստանը և Իրանն ուղղակիորեն սահմանակցում են Հայաստանին, իսկ Ռուսաստանում կա մեծ սփյուռք և աշխատանքի հնարավորություն:

Հարցմանը մասնակցած 22100 ժամանողներից ՀՀ ռեզիդենտի կարգավիճակ են ունեցել 12397-ը, ընդ որում թվով 859 ՀՀ քաղաքացիներ (ՀՀ ռեզիդենտների 6.8%-ը ) պատասխանել են, որ իրենք հանդիսանում են այլ երկրի ռեզիդենտ կամ հիմնական բնակության վայրը Հայաստանը չէ:

***Առաջնորդվելով ՄԱԿ-ի ԶՀԿ մեթոդաբանությամբ հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ ընդհանուր հարցվողներից, բացառելով հարցմանը մասնակցած բոլոր ոչ զբոսաշրջիկ համարվող անձանց, ընդամենը ժամանող 9628 անձինք կամ 43.3%-ն են համարվել Հայաստանից մեկնող՝ արտագնա զբոսաշրջիկներ:***

Արտագնա ճանապարհորդների մեծամասնությունը տղամարդիկ են, բացառությամբ նրանց, ովքեր ճանապարհորդում են ընկերներին ու բարեկամներին հանդիպելու, կրթություն ստանալու կամ ուխտագնացության նպատակով: Զբոսաշրջիկների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է 36-63 տարիքային խմբին, վերջինիս դեպքում նաև ավելի մեծ է բիզնեսի և աշխատանքի նպատակով ճանապարհորդողների դրույքաչափը, մինչդեռ հանգստի/ժամանցի մեկնողների տարիքային խումբը 18-35 տարեկանն է, իսկ հարազատներին այցելության մեկնողները պատկանում են 36-63 տարեկանից բարձր տարիքային խմբին:

Ճանապարհորդողների մեծ մասը չի օգտվում ճամփորդական գործակալությունների ծառայություններից ուղևորության կազմակերպման նպատակով, մինչդեռ Արաբական Միացյալ Էմիրություններ, Եգիպտոս, Թայլանդ և Իտալիա մեկնողներն ամենաշատն են դիմում ճամփորդական գործակալությունների օգնությանը զբոսաշրջային ուղղություն հանդիսացող բոլոր երկրների մեջ: Ուղևորության նախապես պատվիրման համար ճամփորդական գործակալություններին ավելի շատ են դիմում նաև արձակուրդների նպատակով ճանապարհորդող զբոսաշրջիկները:

Հայաստանի ճանապարհորդների համար արտասահմանում օգտագործվող կացարաններից ամենատարածվածը բարեկամի կամ ընկերոջ տանը հանգրվանելն է: Ինչը, թերևս, հիմնականում պայմանավորված է աշխատանքի և կրթության նպատակով ճանապարհորդողների հետ, ովքեր երկար ժամանակով են այցելում տվյալ երկիր: Վարձակալվող բնակարաններից հետո երկրորդ տեղում են հյուրանոցներ: Սակայն պատկերը հակառակն է, երբ ուսումնասիրում ենք օգտագործվող կացարաններն ըստ մնալու տևողությունից ելնելով: Այսպես՝ հայաստանյան ճանապարհորդներն ամենաշատ օրեր մնացել են բարեկամի տանը, այնուհետև վարձով բնակարաններում և այլ հանգրվաններում, իսկ հյուրանոցների ընկնում է ամենակարճ ժամանակահատվածը, ինչը, ամենայն հավանականությամբ կապված է նրա հետ, որ բիզնեսի, սպորտային և մշակութային միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև հանգստի նպատակով ճանապարհորդողները շատ հաճախ կարճ տևողությամբ ուղևորություններ են կատարում: Ամենակարճ տևողությունն ունեն հարևան երկրներ կատարվող (Վրաստան և Իրան) ուղևորությունները, իսկ ամենաերկարը՝ Ռուսաստան, Հունաստան ԱՄՆ կատարվողները:

Հայաստանի բնակիչների առավելագույն ծախսերն ընկնում են կատեգորիային և մերձբալթյան, սկանդինավյան ու հյուսիսային Ամերիկայի երկրներին, իսկ Վրաստանին, Ռուսաստանին և ընդհանրապես նախկին ԽՍՀՄ երկրներին ընկնում են նվազագույն ծախսերը: Ծախսերն ավելի շատ են ճամփորդական փաթեթով ճանապարհորդողների դեպքում:

Չինաստան, Թուրքիա և Արաբական Միացյալ Էմիրատներ այցելողների կողմից կատարված ծախսերում նշանակալի մասնաբաժին են կազմում վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքներին ընկնող ծախսերը, չնայած սա հիմնականում, վերաբերվում է «գործնական» և «այլ» նպատակներով ճանապարհորդողներին: Բացի այդ, ծախսերի բարձր դրույքաչափը ևս ընկնում է գործնական նպատակով ճանապարհորդողներին, իսկ առավելագույն ընդհանուր ծախսերի առումով բարձր մակարդակ է արձանագրվել կրթության և բուժման նպատակով ճանապարհորդողների մոտ: Մինչ Հայաստանից մեկնելը կատարված ծախսերը, հիմնականում, վերաբերվում են միջազգային տրանսպորտին և տեղավորման ամրագրումներին, հատկապես Հայաստանից հեռու գտնվող վայրեր ճանապարհորդող զբոսաշրջիկների դեպքում: «Այլ» ծախսեր խումբը ևս բավականին մեծ մասնաբաժին ունի մինչ ուղևորությունը կատարված ծախսերում: Այն ամենաբարձրն է ընկերներին ու բարեկամներին այցելող զբոսաշրջիկների մոտ: Արտասահմանում կատարված ծախսերում մեծ է նաև վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների դրույքաչափը:

Հարցազրույցին մասնակցած ճանապարհորդների մեծամասնությունն ինքն է ֆինանսավորել իր ճանապարհորդությունը, սակայն մի նշանակալի խմբի (հատկապես ընկերներին ու բարեկամներին այցելության և բուժման նպատակով մեկնած ճանապարհորդները) ուղևորությունը ֆինանսավորվել է ընկերների ու բարեկամների կողմից: Ճանապարհորդների մի զգալի մաս արտասահմանում ստացել է որոշակի եկամուտ, որը բնականաբար բարձր է եղել հատկապես աշխատանքի և գործնական նպատակով ճանապարհորդների շրջանում:

# *4. ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

## 4.1. Մեկնողների հետազոտություն համառոտ նկարագիրը

Ինչպես նշվեց վերևում մեկնողների հետազոտությունն իրականացվել է Հայաստան այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Դիտարկման պահը ընտրվել է մեկնման ժամանակը այն պարզ պատճառով, որ այցելուները ավարտել են իրենց ճանապարհորդությունը և հնարավորություն ունեն պատասխանելու հարցաշարում ընդգրկված գրեթե բոլոր հարցերին:

Ըստ հարցմանը մասնակցած այցելուների պատասխանների ամփոփված արդյունքների, որոնց գծով արդեն իրականացվել են ստուգաճշտման և շեղումների գծով հարթեցման, միջինացման աշխատանքները, ուսումնասիրված 12 ամիսների ընթացքում սահմանային անցման կետերում հարցմանը մասնակցել են 23658 մեկնողներ, ընդ որում, ակնհայտ սխալներով և մեծ շեղումներով թվով 1133 հարցաթերթեր ճանաչվել են անվավեր: Միևնույն ժամանակ, առանձին հարցերի պատասխաններ, որոնք ակնհայտ սխալներով ու մեծ շեղումներով են եղել, նույնպես համարվել են անվավեր և չեն մուտքագրվել տվյալների բազա:

Հարցման արդյունքներով մեկնողների 37.7%-ը իրենց ճանապարհորդությունն իրականացրել են օդային տրանսպորտով՝ հիմնականում <Զվարթնոց> օդանավակայանից: Շատ ցածր է երկաթուղային տրանսպորտով ճանապարհորդների տեսակարար կշիռը՝ 2.5%-ի սահմաններում (Տես աղյուսակ N4.1):

**Աղյուսակ N4.1: Հարցմանը մասնակցած մեկնողների բաշխվածությունն ըստ սահմանային անցման կետերի, 2013թ. հունվար-դեկտեմբերին (առանց անվավեր ճանաչված հարցաթերթերի)**

| | Մեկնողներ | |
|---|---|---|
| | թվաքանակը, մարդ | տեսակարար կշիռը % |
| **Օդային տրանսպորտով** | **8937** | **37.78** |
| <Զվարթնոց> օդանավակայան | 7638 | 32.29 |
| <Գյումրի> օդանավակայան | 1299 | 5.49 |
| **Երկաթուղային տրանսպորտով** | **602** | **2.54** |
| <Այրում> կայարան | 602 | 2.54 |
| **Ավտոմոբիլային տրանսպորտով** | **14119** | **60** |
| Բագրատաշեն | 4083 | 17.26 |
| Բավրա | 9161 | 38.72 |
| Մեղրի | 875 | 3.70 |
| **Ընդամենը** | **23658** | **100** |

Հարցմանը մասնակցած 23642 մեկնողներից ՀՀ ոչ ռեզիդենտի կարգավիճակ են ունեցել 12634-ը, ընդ որում թվով 1844 ՀՀ քաղաքացիներ (ոչ ռեզիդենտների 17.5%-ը ) պատասխանել են, որ իրենք հանդիսանում են այլ երկրի ռեզիդենտ, կամ հիմնական բնակության վայրը Հայաստանը չէ:

## 4.2. Քաղաքացիության և հիմնական բնակության երկրի նկարագիրը

Քաղաքացիության առումով ամենամեծ թվով այցելուներ, ընդհանուր առմամբ, ժամանել են Ռուսաստանից, Վրաստանից, Հյուսիսային Ամերիկայից և Միջին Արևելքից (ներառյալ Իրանը), իսկ ամենաքիչը ժամանել են Աֆրիկայի, Ասիայի և Օվկիանիայի երկրներից, ինչպես նաև Լատինական Ամերիկայից: Հայաստան այցելող ճանապարհորդների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է Ռուսաստանին, Վրաստանին, Իրանին, Ուկրաինային (տես աղյուսակ[3] 4.2.1.):

**Աղյուսակ 4.2.1. Հայկական ու ոչ հայկական ծագմամբ ճանապարհորդների[4] բաշխվածության կառուցվածքն ըստ քաղաքացիության հատկանիշի,%**

| Երկիր | Ունեցել են հայկական ծագում | Չեն ունեցել հայկական ծագում | Ընդամենը | Հայկական ծագումով ճանապարհորդների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | **100.00** | **100.00** | **100.00** | **69.88** |
| Նախկին ԽՍՀՄ երկրներ | **93.63** | **45.48** | **79.13** | **82.69** |
| Ռուսաստանի Դաշնություն | 34.55 | 25.87 | 31.93 | 75.60 |
| Վրաստան | 32.55 | 10.68 | 25.96 | 87.61 |
| Հայաստան | 24.52 | 1.36 | 17.54 | 97.67 |
| Ուկրաինա | 1.43 | 4.23 | 2.27 | 43.93 |
| Բելառուս | 0.29 | 1.90 | 0.77 | 25.93 |
| Ղազախստան | 0.16 | 0.95 | 0.40 | 28.57 |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | **0.14** | **0.51** | **0.25** | **38.46** |
| Մնացած աշխարհ | **6.37** | **54.52** | **20.87** | **21.33** |
| ԵՄ երկրներ | **1.91** | **24.13** | **8.60** | **15.49** |
| Գերմանիա | 0.16 | 4.86 | 1.58 | 7.23 |
| Լեհաստան | 0.23 | 2.27 | 0.85 | 19.10 |
| Իտալիա | 0.07 | 2.18 | 0.70 | 6.76 |
| Ֆրանսիա | 0.26 | 1.61 | 0.67 | 27.14 |
| Միացյալ Թագավորություն | 0.11 | 1.86 | 0.64 | 11.94 |
| Չեխիայի Հանրապետություն | 0.07 | 1.52 | 0.50 | 9.43 |

[3] Յուրաքանչյուր աղյուսակի ցուցանիշները ստացվել են ելնելով տվյալ աղյուսակին համապատասխանող հարցի պատասխանների քանակից: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հարցվողները ազատ է եղել իրենց պատասխաններում և պատասխանել են ոչ բոլոր հարցերին և դրանով պայմանավորված, բնականաբար հարցաթերթի առանձին հարցերի գծով ստացված պատասխանողների թվաքանակը հավասար չեն միմյանց:

[4] Այս և հետագա աղյուսակներում օգտագործվում է «ճանապարհորդ» տերմինը, որը զոսաշրջիկների հետ միասին ներառում է նաև աշխատանքի նպատակով այցելուներին:

| Երկիր | Ունեցել են հայկական ծագում | Չեն ունեցել հայկական ծագում | Ընդամենը | Հայկական ծագումով ճանապարհորդների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ |
|---|---|---|---|---|
| Բելգիա | 0.27 | 0.95 | 0.48 | 40.00 |
| Ավստրիա | 0.03 | 1.26 | 0.40 | 4.76 |
| Նիդերլանդներ | 0.19 | 0.88 | 0.40 | 33.33 |
| Իսպանիա | 0.08 | 0.95 | 0.34 | 16.67 |
| Դանիա | - | 0.92 | 0.28 | - |
| Հունաստան | 0.20 | 0.44 | 0.28 | 51.72 |
| Շվեդիա | 0.08 | 0.66 | 0.26 | 22.22 |
| Բուլղարիա | 0.05 | 0.66 | 0.24 | 16.00 |
| Սլովենիա | 0.03 | 0.47 | 0.16 | 11.76 |
| Հունգարիա | 0.01 | 0.44 | 0.14 | 6.67 |
| Այլ ԵՄ երկրներ | 0.05 | 2.18 | 0.69 | 5.48 |
| **Այլ երկրներ** | **4.47** | **30.39** | **12.27** | **25.43** |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 1.58 | 18.57 | 6.70 | 16.48 |
| Միացյալ Նահանգներ | 1.12 | 2.02 | 1.39 | 56.16 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 0.41 | 1.39 | 0.70 | 40.54 |
| Թուրքիա | 0.07 | 1.67 | 0.55 | 8.62 |
| Կանադա | 0.26 | 0.54 | 0.34 | 52.78 |
| Իսրայել | 0.07 | 0.79 | 0.29 | 16.67 |
| Լիբանան | 0.35 | 0.13 | 0.29 | 86.67 |
| Ճապոնիա | 0.01 | 0.88 | 0.28 | 3.45 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | 0.30 | 0.06 | 0.23 | 91.67 |
| Հնդկաստան | - | 0.69 | 0.21 | - |
| Շվեյցարիա | 0.01 | 0.66 | 0.21 | 4.55 |
| Ավստրալիա | 0.08 | 0.41 | 0.18 | 31.58 |
| Չինաստան | - | 0.54 | 0.16 | - |
| Այլ | 0.20 | 2.02 | 0.75 | 18.99 |

* Այստեղ և հետայսու «Նախկին ԽՍՀՄ երկրներ» խմբավորման մեջ չեն ներառված մերձբալթյան երկրները, սակայն ներառված են Արցախն  ու Աբխազիան:

Քաղաքացիության առումով նշանակալիորեն բարձր է նաև Հայաստանի քաղաքացիների ներկայացուցչությունը (17.54%), այսինքն՝ հետազոտության իրականացման պահին բոլոր այս հայ ճանապարհորդների հիմնական բնակության վայրը և կենսական շահերի կենտրոնը հանդիսացել է արտերկիրը,

հիմնականում բնակվել են Ռուսաստանում (85%) և, ավելի քիչ, ԱՄՆ-ում, Վրաստանում, Ֆրանսիայում և Գերմանիայում:

Առկա միտումները ցույց են տալիս, որ նախկին Խորհրդային Միության և սփյուռքահայերի մեծ համայնք ունեցող երկրներից ժամանող ճանապարհորդներն ավելի են հակված այցելել Հայաստան:

Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ ոչ ռեզիդենտի կարգավիճակ(որոնց հիմնական բնակության վայրը Հայաստանը չէ) ունեցող հարցվողներից թվով 1775 մեկնող ուղևորներ ունեցել են այցելուի կարգավիճակ՝ ճանապարհորդությունը տևել է առանց գիշերակացի կամ 365 օրից ավել, կամ հանդիսացել են դեսպանատների հյուպատոսությունների, միջազգային կազմակերպությունների, զինվորական ստորաբաժանումների աշխատակիցներ, ուստի դրանք ըստ միջազգային մեթոդաբանության, չեն համարվում զբոսաշրջիկներ և նրանց հետ հետագա հարցերի վերաբերյալ հարցազրույցը չի շարունակվել: Հարկ է նշել, որ 411 մեկնողների ճանապարհորդության հիմնական նպատակը եղել է աշխատանքի արդյունքում եկամուտ ստանալը, որոնք նույնպես զբոսաշրջիկներ չեն համարվում, սակայն զուտ վիճակագրական նպատակներից ելնելով, նրանց հետ հարցումը շարունակվել է և հետայսու ներկայացված ելքային աղյուսակներում ներառված են նաև նրանց պատասխանները:

***Արդյունքում, բացառելով նաև աշխատանքի նպատակ ունեցող այցելուներին, հարցմանը մասնակցած ընդամենը մեկնող 10448 անձինք կամ 44.2%-ը համարվել են Հայաստան ժամանող՝ ներգնա զբոսաշրջիկներ:***

**Աղյուսակ 4.2.2. Հայկական ու ոչ հայկական ծագմամբ ճանապարհորդների բաշխվածության կառուցվածքն ըստ հիմնական բնակության վայր երկրի հատկանիշի.%**

| Երկիր | Ունեցել են հայկական ծագում | Չեն ունեցել հայկական ծագում | Ընդամենը | Հայկական ծագումով ճանապարհորդների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 100.00 | 100.00 | 100.00 | **65.88** |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | 90.48 | 51.76 | 77.27 | **77.15** |
| Ռուսաստանի Դաշնություն | 53.52 | 32.35 | 46.29 | 76.16 |
| Վրաստան | 34.06 | 12.83 | 26.82 | 83.68 |
| Ուկրաինա | 1.95 | 3.71 | 2.55 | 50.37 |
| Բելառուս | 0.52 | 1.62 | 0.89 | 38.30 |

| Երկիր | Ունեցել են հայկական ծագում | Չեն ունեցել հայկական ծագում | Ընդամենը | Հայկական ծագումով ճանապարհորդների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, |
|---|---|---|---|---|
| Ղազախստան | 0.26 | 0.84 | 0.46 | 37.50 |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 0.17 | 0.42 | 0.26 | 44.44 |
| **Մնացած աշխարհ** | 9.52 | 48.24 | 22.73 | 27.58 |
| **ԵՄ երկրներ** | 3.60 | 21.31 | 9.64 | 24.58 |
| Գերմանիա | 0.43 | 4.41 | 1.79 | 15.96 |
| Լեհաստան | 0.38 | 2.06 | 0.95 | 26.00 |
| Իտալիա | 0.16 | 1.87 | 0.74 | 14.10 |
| Ֆրանսիա | 0.43 | 1.39 | 0.76 | 37.50 |
| Միացյալ Թագավորություն | 0.14 | 1.53 | 0.62 | 15.38 |
| Չեխիայի Հանրապետություն | 0.20 | 1.45 | 0.63 | 21.21 |
| Բելգիա | 0.45 | 0.84 | 0.58 | 50.82 |
| Ավստրիա | 0.13 | 1.12 | 0.47 | 18.37 |
| Նիդերլանդներ | 0.27 | 0.84 | 0.47 | 38.78 |
| Իսպանիա | 0.26 | 0.84 | 0.46 | 37.50 |
| Դանիա | - | 0.78 | 0.27 | - |
| Հունաստան | 0.38 | 0.36 | 0.37 | 66.67 |
| Շվեդիա | 0.12 | 0.59 | 0.28 | 27.59 |
| Բուլղարիա | 0.06 | 0.59 | 0.24 | 16.00 |
| Սլովենիա | 0.03 | 0.45 | 0.17 | 11.11 |
| Հունգարիա | 0.01 | 0.36 | 0.13 | 7.14 |
| Այլ ԵՄ երկրներ | 0.14 | 1.84 | 0.72 | 13.16 |
| **Այլ երկրներ** | 5.92 | 26.94 | 13.09 | 29.80 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 1.66 | 16.40 | 6.69 | 16.36 |
| Միացյալ Նահանգներ | 1.60 | 1.73 | 1.65 | 64.16 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 0.61 | 1.48 | 0.90 | 44.21 |
| Թուրքիա | 0.20 | 1.45 | 0.63 | 21.21 |
| Կանադա | 0.33 | 0.47 | 0.38 | 57.50 |
| Իսրայել | 0.09 | 0.64 | 0.28 | 20.69 |
| Լիբանան | 0.40 | 0.11 | 0.30 | 87.50 |
| Ճապոնիա | 0.01 | 0.78 | 0.28 | 3.45 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | 0.29 | 0.06 | 0.21 | 90.91 |
| Հնդկաստան | - | 0.50 | 0.17 | - |
| Շվեյցարիա | 0.06 | 0.64 | 0.26 | 14.81 |

| Երկիր | Ունեցել են հայկական ծագում | Չեն ունեցել հայկական ծագում | Ընդամենը | Հայկական ծագումով ճանապարհորդների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, |
|---|---|---|---|---|
| Ավստրալիա | 0.16 | 0.33 | 0.22 | 47.83 |
| Չինաստան | 0.03 | 0.47 | 0.18 | 10.53 |
| Այլ | 0.48 | 1.87 | 0.95 | 33.00 |

Ինչպես և սպասվում էր, Հայաստանը, որպես զբոսաշրջային երկիր, հիմնականում գրավիչ է այն երկրների համար , որտեղ առկա է հայկական մեծ սփյուռք, մասնավորապես Ռուսաստան, Վրաստան, Իրան, Ուկրաինա, Գերմանիա, ԱՄՆ, Ֆրանսիա, ընդ որում վերը նշված երկրներից ժամանողների մեջ, բացի Գերմանիայից, Ֆրանսիայից և Իրանից, գերակշռող են հայկական ծագում ունեցողները (Տես աղյուսակ N4.2.1.):

Հետազոտությամբ արձանագրվել է, որ Վրաստանից ժամանողների մեջ հայկական ծագում ունեցել են 83.68%-ը, Ռուսաստանից՝ 76.16%-ը, ԱՄՆ-ից՝ 64.16%-ը, իսկ ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Սիրիայից ժամանողների շրջանում 90.91%, որը, թերևս, պայմանավորված է Սիրիայում ծավալված քաղաքացիական պատերազմի հետ: Բացառելով վերը նշված երկրներից այցելությունները, հայկական ծագումով այցելուների տեսակարար կշիռը կկազմի 27.7%, 65.9%-ի փոխարեն:

## 4.2. Տարիքը և սեռը

Հարկ է նշել, որ ներգնա ճանապարհորդների հիմնական մասը տղամարդիկ են՝ 57.5%: Կանայք հիմնականում ժամանում են Հայաստան բուժման (77.8%) և կրթության(51.7%) նպատակով, իսկ մնացած բոլոր նպատակներով տղամարդիկ ունեն գերակշիռ մաս: Ինչ վերաբերվում է տարիքային խմբին, ապա հիմնական ժամանողների տարիքային խումբը 36-63 տարիքն է և, հատկապես, այլ, բուժման, աշխատանքի և գործնական նպատակներով (տես աղյուսակ N4.2.1): Պետք է նշել, որ հայկական ծագում ունեցողների մոտ նույնպես տղամարդիկ ունեն ավելի մեծ տեսակարար կշիռ և նրանց մոտ նույնպես հիմնական տարիքային խումբը 36-63 տարիքի միջակայքն է: Ընդ որում՝ հայկական ծագում ունեցող կանայք Հայաստան ժամանում են գլխավորապես բուժման, կրթության և

ուխտագնացության նպատակով, մնացած նպատակներով տղամարդիկ ունեն ավելի մեծ տեսակարար կշիռ(տես աղյուսակ N4.2.2)

**Աղյուսակ N4.2.1: Ներգնա ճանապարհորդների[5] սեռատարիքային բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի,%**

| | Գործ-նական | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշա-կութային միջո-ցառումներին մասնակցություն | Այցելություն հարա-զատներին, ընկերներին | Ուխտա-գնացու-թյուն | Այլ | **Ընդա-մենը միջին** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տղամարդ | 81.09 | 93.67 | 48.26 | 22.19 | 63.29 | 69.37 | 53.35 | 53.33 | 58.24 | 57.49 |
| Կին | 18.91 | 6.33 | 51.74 | 77.81 | 36.71 | 30.63 | 46.65 | 46.67 | 41.76 | 42.51 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| Մինչև 17 տարեկան | 0.15 | 0.00 | 2.61 | 0.44 | 0.71 | 1.25 | 0.46 | 0.00 | 0.63 | 0.51 |
| 18-35 տարեկան | 35.66 | 17.03 | 83.48 | 30.46 | 44.64 | 56.88 | 31.21 | 33.33 | 32.18 | 34.65 |
| 36-63 տարեկան | 62.87 | 81.02 | 13.48 | 60.82 | 47.89 | 40.63 | 63.29 | 63.33 | 65.46 | 60.21 |
| 64 և բարձր տարիքի | 1.31 | 1.95 | 0.43 | 8.28 | 6.76 | 1.25 | 5.04 | 3.33 | 1.73 | 4.63 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

**Աղյուսակ N4.2.2: Հայկական ծագում ունեցող ներգնա ճանապարհորդների սեռատարիքային բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի,%**

| | Գործ-նական | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշա-կութային միջո-ցառումներին մասնակցություն | Այցելություն հարա-զատներին, ընկերներին | Ուխտա-գնացու-թյուն | Այլ | **Ընդա-մենը միջին** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տղամարդ | 79.31 | 91.55 | 46.31 | 22.00 | 60.22 | 64.44 | 54.25 | 41.67 | 59.06 | 52.52 |
| Կին | 20.69 | 8.45 | 53.69 | 78.00 | 39.78 | 35.56 | 45.75 | 58.33 | 40.94 | 47.48 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| Մինչև 17 տարեկան | 0.00 | 0.00 | 4.00 | 0.34 | 2.50 | 2.17 | 0.43 | 0.00 | 0.52 | 0.56 |
| 18-35 տարեկան | 34.99 | 37.14 | 86.67 | 30.88 | 52.86 | 47.83 | 29.37 | 28.00 | 32.06 | 32.32 |
| 36-63 տարեկան | 63.97 | 62.86 | 8.67 | 60.39 | 40.36 | 47.83 | 64.94 | 68.00 | 65.51 | 62.18 |
| 64 և բարձր տարիքի | 1.04 | 0.00 | 0.67 | 8.38 | 4.29 | 2.17 | 5.26 | 4.00 | 1.92 | 4.94 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

Եթե մինչև 17 տարեկան ճանապարհորդների հիմնական նպատակը հանդիսանում է կրթությունը և մարզական ու մշակութային միջոցառումներին մասնակցությունը, ապա և 64-ից բարձր տարիքի անձանց համար հիմնական նպատակ հանդիսանում է բուժումը, հանգիստը և ժամանցը, ինչպես նաև

[5] Հետադյունու ճանապարհորդ տերմինը օգտագործվում է այն ժամանակ, երբ ցուցանիշը ներառում է <Աշխատանքի> նպատակը, մնացած այլ դեպքերում «Զբոսաշրջիկ»:

հարազատներին այցելությունը: Նույն հարաբերակցությունը արձանագրվել է նաև հայկական ծագմամբ ճանապարհորդների շրջանում:

**Գծապատկեր 4.2.1. Ներգնա ճանապարհորդների սեռային բաշխվածության կառուցվածքն ըստ հիմնական շուկաների, %**




Հայաստանի զբոսաշրջային ոլորտի նպատակային շատ երկրներից (Ռուսաստան, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա), ինչպես նաև Հայաստան ճանապարհորդող մեծ քանակով զբոսաշրջիկներ ապահովող այլ երկրներից այցելած կին և տղամարդ զբոսաշրջիկների տոկոսային հարաբերություններում նկատվում է առնվազն 15%-ի տարբերություն, իսկ Թուրքիայից ու Իրանից 50% և ավել:

**Գծապատկեր**:4.2.2 **Ընդամենը և հայկական ծագմամբ հարցվողների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի**

**Ընդամենը** **Հայկական ծագումով**







## 4.3. Այցելության նպատակը

Ակնհայտ ու տրամաբանական էր, որ պայմանավորված Հայաստան այցելածների ընդհանուր քանակում մեծ հայկական ծագում ունեցող ճանապարհորդների մասնաբաժնով, «Այցելությունն հարազատներին և ընկերներին» նպատակը նշվել է Հայաստան կատարած ուղևորությունների հիմնական նպատակ՝ 51.22%, և եթե բացառենք մեծ հայկական սփյուռք ունեցող երկրներից այցելությունները (Ռուսաստան, Վրաստան, ՈՒկրաինա, ԱՄՆ և Ֆրանսիան), ապա «Այցելություն հարազատներին և ընկերներին» նպատակը կկազմի 22.4%:

**Աղյուսակ N4.3.1: Ներգնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի,%**

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության. | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **12.18** | **3.86** | **2.15** | **8.47** | **14.4** | **1.5** | **51.22** | **0.28** | **5.95** | **100** |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | **7.64** | **2.51** | **1.62** | **8.38** | **4.62** | **0.96** | **45.98** | **0.22** | **5.49** | **77.43** |
| Ռուսաստանի Դաշնություն | 3.97 | 0.5 | 0.41 | 0.98 | 3.44 | 0.57 | 31.42 | 0.12 | 4.94 | 46.36 |
| Վրաստան | 2.54 | 1.77 | 1.12 | 7.37 | 0.69 | 0.21 | 12.63 | 0.09 | 0.41 | 26.83 |
| Ուկրաինա | 0.68 | 0.2 | 0.06 | - | 0.24 | 0.07 | 1.28 | 0.01 | 0.06 | 2.6 |
| Բելառուս | 0.24 | 0.01 | 0.03 | - | 0.17 | 0.06 | 0.36 | - | 0.03 | 0.89 |
| Ղազախստան | 0.14 | 0.01 | - | 0.02 | 0.05 | 0.05 | 0.15 | - | 0.04 | 0.45 |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 0.06 | 0.03 | - | 0.02 | 0.03 | 0.01 | 0.15 | - | 0.01 | 0.3 |
| **Մնացած աշխարհ** | **4.54** | **1.35** | **0.53** | **0.08** | **9.78** | **0.53** | **5.23** | **0.06** | **0.47** | **22.57** |
**Գծապատկեր** 4.5.2. **Ուղևորության կազմակերպման կառուցվածքն ըստ ճամփորդական փաթեթ/ինքնուրույն կտրվածքի**,%




Ճամփորդական օպերատորների ծառայություններից, ինչպես և սպասվում էր, օգտվել են միայն հանգստի/ժամանցի նպատակով ժամանած զբոսաշրջիկները: Որևէ այլ նպատակով ժամանած զբոսաշրջիկներն իրենց ուղևորությանն առնչվող ամրագրումների 100%-ը կատարել են ինքնուրույն կամ իրենց ընկերության միջոցով: Հանգստի/ժամանցի նպատակով այցելած զբոսաշրջիկների ընդհանուր թվի 19.3%-ն օգտվել է ճամփորդական օպերատորների ծառայություններից, մինչդեռ հայկական ծագումով զբոսաշրջիկների մոտ այս դրույքաչափն ավելի ցածր է՝ կազմելով ընդամենը 4.3%: Այսպիսով, Հայաստան ժամանած բոլոր զբոսաշրջիկների ընդամենը 2.7%-ն է օգտվել ճամփորդական օպերատորների ծառայություններից:

Հարկ ՝ նշել որ տուր փաթեթով իրենց ճանապարհորդությունը կազմակերպող զբոսաշրջիկները հայաստանյան ճանապարհորդության ընթացքում այցելում են նաև այլ երկրներ: Ըստ հարցումների տուր փաթեթով իրենց ճանապարհորդությունը կազմակերպող զբոսաշրջիկների 37.1%-ը պատասխանել է, որ ճամփորդական փաթեթը ներառում է նաև այլ երկրներ այցելությունները: Ընդ որում, պատասխանների արդյունքում այցելության երկրներ նշվել են Ադրբեջանը, Վրաստանը, Բելառուսը:

## 4.6. Ուր են այցելել ժամանող զբոսաշրջիկները

Երևանը Հայաստանի առավել շատ այցելուներ ունեցող վայրն է: Պատասխանողների 44.1%-ը (հարցվողների կողմից տրվել է մեկից ավել պատասխան) առնվազն որոշակի ժամանակ անցկացրել է Երևանում: Մյուս մարզերի համեմատ այցելությունները նշանակալի

բարձր են նաև Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզեր[7]՝ 7.5-8.5 տոկոսի սահմաններում: Զբոսաշրջիկների այցելությունների ամենացածր դրույքաչափը գրանցվել է Արագածոտնի մարզի և Լեռնային Ղարաբաղի համար՝ համապատասխանաբար 2.8% և 1.4%(Տես Աղյուսակ N4.6.1):

**Աղյուսակ 4.6.1. Այցելության վայրերի կառուցվածքն ըստ շուկաների (%)**

| | Երևան | Արագած-ոտնի մարզ | Արմա-վիրի մարզ | Գեղար-քունիքի մարզ | Կոտայ-քի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավուշի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարա-տի մարզ | Սյունի-քի մարզ | ԼՂՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 44.10 | 2.83 | 8.35 | 8.17 | 7.35 | 5.29 | 7.85 | 4.60 | 2.77 | 3.58 | 3.68 | 1.42 |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | 32.72 | 1.85 | 5.00 | 4.59 | 4.10 | 3.80 | 6.91 | 2.90 | 1.36 | 1.78 | 1.45 | 0.97 |
| Ռուսաստանի Դաշնություն | 18.69 | 1.47 | 3.95 | 3.91 | 3.37 | 3.11 | 4.75 | 2.44 | 1.12 | 1.44 | 1.23 | 0.84 |
| Վրաստան | 12.06 | 0.25 | 0.57 | 0.29 | 0.31 | 0.51 | 1.96 | 0.26 | 0.09 | 0.11 | 0.01 | 0.02 |
| Ուկրաինա | 1.15 | 0.10 | 0.29 | 0.25 | 0.25 | 0.11 | 0.11 | 0.12 | 0.11 | 0.16 | 0.13 | 0.05 |
| Բելառուս | 0.45 | 0.02 | 0.13 | 0.10 | 0.12 | 0.04 | 0.05 | 0.05 | 0.03 | 0.03 | 0.06 | 0.03 |
| Ղազախստան | 0.22 | 0.01 | 0.05 | 0.03 | 0.04 | 0.02 | 0.02 | 0.02 | - | 0.02 | 0.02 | 0.01 |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 0.13 | 0.01 | 0.02 | 0.02 | 0.02 | 0.02 | 0.03 | 0.01 | 0.01 | 0.02 | 0.01 | 0.03 |
| **Մնացած աշխարհ** | 11.39 | 0.98 | 3.35 | 3.58 | 3.25 | 1.49 | 0.94 | 1.71 | 1.41 | 1.80 | 2.23 | 0.45 |
| **ԵՄ երկրներ** | 5.06 | 0.64 | 1.84 | 1.71 | 2.00 | 0.99 | 0.64 | 1.10 | 0.85 | 1.07 | 0.90 | 0.28 |
| Գերմանիա | 0.94 | 0.12 | 0.34 | 0.34 | 0.42 | 0.11 | 0.10 | 0.18 | 0.18 | 0.23 | 0.17 | 0.08 |
| Լեհաստան | 0.49 | 0.04 | 0.20 | 0.19 | 0.20 | 0.14 | 0.05 | 0.15 | 0.11 | 0.12 | 0.07 | 0.03 |
| Իտալիա | 0.37 | 0.05 | 0.16 | 0.17 | 0.15 | 0.10 | 0.05 | 0.13 | 0.07 | 0.11 | 0.11 | 0.01 |
| Ֆրանսիա | 0.39 | 0.06 | 0.18 | 0.16 | 0.17 | 0.10 | 0.09 | 0.10 | 0.07 | 0.09 | 0.11 | 0.05 |
| Միացյալ Թագավորություն | 0.33 | 0.04 | 0.12 | 0.09 | 0.16 | 0.05 | 0.04 | 0.07 | 0.07 | 0.06 | 0.05 | 0.01 |
| Չեխիայի Հանրապետություն | 0.34 | 0.06 | 0.16 | 0.16 | 0.16 | 0.09 | 0.06 | 0.09 | 0.06 | 0.08 | 0.08 | 0.03 |
| Բելգիա | 0.31 | 0.01 | 0.08 | 0.04 | 0.09 | 0.02 | 0.02 | 0.02 | 0.01 | 0.05 | 0.02 | 0.01 |
| Ավստրիա | 0.26 | 0.03 | 0.06 | 0.05 | 0.06 | 0.05 | 0.05 | 0.06 | 0.04 | 0.04 | 0.04 | 0.01 |
| Նիդերլանդներ | 0.23 | 0.05 | 0.08 | 0.06 | 0.08 | 0.04 | 0.03 | 0.04 | 0.03 | 0.06 | 0.03 | 0.01 |
| Իսպանիա | 0.25 | 0.03 | 0.07 | 0.09 | 0.11 | 0.07 | 0.05 | 0.06 | 0.06 | 0.04 | 0.03 | - |

7 Հարցումների ժամանակ մարզերում այցելության վայրեր նշվել են՝ Արագածոտնի մարզ՝ Արագած լեռ, Օշական, Արմավիրի մարզ՝ Էջմիածին, Սարդարապատ, Զվարթնոց, Գեղարքունիքի մարզ՝ Սևանա լիճ, Կոտայքի մարզ՝ Գառնի, Գեղարդ, Ծաղկաձոր, Լոռու մարզ՝ Վանաձոր, Աղթալայի, Հաղպատի, Սանահինի վանքեր, Շիրակի մարզ՝ Գյումրի, Մարմաշեն վանք, Տավուշի մարզ՝ Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք վանքեր, Մակարավանք , Վայոց Ձորի մարզ՝ Նորավանք, Ջերմուկ առողջարան, Արարատի մարզ՝ Խոր-Վիրապ , Սյունիքի մարզ՝ Տաթևի վանք, Խնձորեսկ, Զորաց Քարեր:

| | Երևան | Արագածոտնի մարզ | Արմավիրի մարզ | Գեղարքունիքի մարզ | Կոտայքի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավուշի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարատի մարզ | Սյունիքի մարզ | ԼՂՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դանիա | 0.14 | 0.03 | 0.06 | 0.06 | 0.06 | 0.02 | 0.03 | 0.03 | 0.02 | 0.03 | 0.03 | 0.01 |
| Հունաստան | 0.18 | 0.04 | 0.04 | 0.05 | 0.06 | 0.09 | 0.04 | 0.04 | 0.03 | 0.03 | 0.02 | 0.01 |
| Շվեդիա | 0.15 | 0.01 | 0.03 | 0.06 | 0.04 | 0.02 | 0.01 | 0.03 | 0.02 | 0.02 | 0.03 | 0.01 |
| Բուլղարիա | 0.13 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.01 | - | 0.01 | - | - | 0.01 | - |
| Սլովենիա | 0.09 | 0.04 | 0.07 | 0.07 | 0.06 | 0.03 | 0.01 | 0.04 | 0.05 | 0.04 | 0.06 | 0.01 |
| Հունգարիա | 0.07 | 0.02 | 0.04 | 0.02 | 0.03 | 0.02 | - | 0.02 | 0.02 | 0.02 | 0.02 | - |
| Այլ ԵՄ երկրներ | 0.40 | 0.04 | 0.13 | 0.10 | 0.15 | 0.06 | 0.03 | 0.05 | 0.04 | 0.05 | 0.06 | 0.03 |
| **Այլ երկրներ** | 6.33 | 0.33 | 1.51 | 1.87 | 1.25 | 0.50 | 0.30 | 0.60 | 0.56 | 0.73 | 1.33 | 0.17 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 3.04 | 0.03 | 0.47 | 1.04 | 0.30 | 0.03 | 0.01 | 0.04 | 0.19 | 0.20 | 0.89 | 0.06 |
| Միացյալ Նահանգներ | 0.86 | 0.09 | 0.32 | 0.24 | 0.32 | 0.15 | 0.10 | 0.15 | 0.09 | 0.12 | 0.15 | 0.04 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 0.47 | 0.01 | 0.08 | 0.06 | 0.07 | - | 0.01 | 0.06 | 0.04 | 0.03 | 0.03 | - |
| Թուրքիա | 0.33 | - | 0.01 | 0.01 | 0.03 | 0.02 | - | 0.01 | 0.01 | - | - | 0.01 |
| Կանադա | 0.19 | 0.01 | 0.06 | 0.06 | 0.05 | 0.02 | 0.01 | 0.03 | 0.03 | 0.03 | 0.02 | - |
| Իսրայել | 0.15 | 0.04 | 0.08 | 0.08 | 0.08 | 0.06 | 0.04 | 0.06 | 0.05 | 0.07 | 0.05 | - |
| Լիբանան | 0.16 | - | 0.03 | 0.03 | 0.02 | - | - | 0.01 | - | 0.01 | - | 0.01 |
| Ճապոնիա | 0.16 | 0.06 | 0.10 | 0.08 | 0.09 | 0.06 | 0.05 | 0.05 | 0.04 | 0.06 | 0.03 | 0.02 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | 0.11 | 0.02 | 0.06 | 0.03 | 0.04 | 0.02 | 0.02 | 0.02 | 0.01 | 0.02 | 0.01 | - |
| Հնդկաստան | 0.09 | - | 0.03 | 0.03 | 0.03 | 0.01 | - | 0.02 | - | 0.02 | 0.01 | 0.01 |
| Շվեյցարիա | 0.13 | 0.02 | 0.05 | 0.03 | 0.04 | 0.03 | 0.03 | 0.03 | 0.02 | 0.03 | 0.03 | 0.02 |
| Ավստրալիա | 0.10 | 0.01 | 0.04 | 0.03 | 0.04 | 0.02 | 0.02 | 0.03 | 0.01 | 0.04 | 0.03 | - |
| Չինաստան | 0.09 | 0.01 | 0.03 | 0.02 | 0.04 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.01 | - |
| Այլ | 0.45 | 0.05 | 0.15 | 0.15 | 0.13 | 0.08 | 0.03 | 0.10 | 0.09 | 0.11 | 0.09 | 0.02 |

*) «**Այցելություններ տեսարժան վայրեր**» **հարցին պատասխանողներն ունեցել են նշելու մի քանի վայրեր ընտրելու հնարավորություն**:

Առկա միտումները ցույց են տալիս, որ Երևանին մոտ տեղակայված վայրերն ավելի շատ այցելուներ են ունենում(բացառություն է միայն Արարատի մարզը), իսկ Երևանից առավել հեռու շրջաններն ամենամեծ դժվարություններն ունեն կապված զբոսաշրջիկներ գրավելու հետ:

Ինչ վերաբերվում է Հայկական ծագմամբ այցելություններին, ապա այն գրեթե նույն պատկերն է՝ երևանյան այցելությունները կազմում են 47.6%, ընդ որում այն բարձր է հատկապես Վրաստանից, Մոլդովայից, Լիբանանցի, ԱՄԷ-ից ժամանողների մոտ:

Եթե այցելությունները դիտարկում ենք առանձին շուկաների, ապա պատկերը հետևյալն է: Երևանյան այցելությունները առավել բարձր են Վրաստան՝ (Վրաստանից ամբողջ այցելությունների 73.4%), Բուլղարիա(72.2%), Թուրքիա(81.0%), Լիբանան(63.3%): Իսկ ամենացածր այցելությունները Երևան արձանագրվել է Սլովենիայից(15.9%), Իսրայելից(19.9%), Ճապոնիայից(20.3%): Եվրոմիության երկրների այցելությունները Երևան կազմել է ամբողջ այցելությունների 29.6%: Սա խոսում է այն մասին, որ Հայաստան ժամանող զբոսաշրջիկները գլխավորապես ժամանելով Երևան կատարում են նաև մարզային այցելություններ: Դա է վկայում նաև այն հանգամանքը, որ գիշերակացի առումով Երևանի մասնաբաժինն(51%) ավելի բարձր է քան այցելությունների քանակի ժամանակ(Տես աղյուսակ N4.6.2) :

Ընդհանուր առմամբ, այցելության վայրերի միջին քանակը կազմում է ընդամենը 1.8: Միջինում ամենաշատ թվով վայրեր այցելել են Սլովենիայից (5.6 վայր), Իսրայելից (5 վայր), Ճապոնիայից(4.9 վայր), Չեխիայից (4 վայր) ժամանած զբոսաշրջիկները, իսկ ամենաքիչ թվով վայրեր այցելել են Վրաստանից (1.1 վայր), Թուրքիայից (1.2 վայր),, Բուլղարիայից (1.4 վայր), և Իրանից (1.7 վայր) ժամանած զբոսաշրջիկները:

**Աղյուսակ** 4.6.2. **Այցելության վայրերում գիշերակացի կառուցվածքն ըստ շուկաների** (%)

| | Երևան | Արագած-ոտնի մարզ | Արմա-վիրի մարզ | Գեղար-քունիքի մարզ | Կոտայ-քի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավու-շի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարա-տի մարզ | Սյունի-քի մարզ | ԼՂՀ | Միջին այցերի քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 50.52 | 2.38 | 3.90 | 5.24 | 4.61 | 8.16 | 14.63 | 3.82 | 1.24 | 2.77 | 1.51 | 1.22 | 1.83 |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | 36.89 | 2.25 | 3.66 | 4.83 | 4.20 | 7.72 | 14.32 | 3.60 | 1.13 | 2.59 | 1.14 | 0.95 | 1.59 |
| Ռուսաստանի Դաշնություն | 28.96 | 2.10 | 3.44 | 4.54 | 3.81 | 7.11 | 12.92 | 3.39 | 0.99 | 2.35 | 1.04 | 0.84 | 1.83 |
| Վրաստան | 5.50 | 0.05 | 0.14 | 0.02 | 0.14 | 0.27 | 1.15 | 0.06 | 0.06 | 0.05 | 0.00 | 0.01 | 1.12 |
| Ուկրաինա | 1.77 | 0.06 | 0.05 | 0.19 | 0.13 | 0.22 | 0.10 | 0.13 | 0.05 | 0.14 | 0.06 | 0.05 | 1.99 |
| Բելառուս | 0.41 | 0.00 | 0.02 | 0.01 | 0.10 | 0.04 | 0.04 | 0.01 | 0.02 | 0.02 | 0.02 | 0.02 | 2.27 |
| Ղազախստան | 0.17 | 0.03 | 0.01 | 0.07 | 0.02 | 0.02 | 0.08 | 0.00 | - | 0.01 | 0.01 | 0.01 | 1.83 |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 0.09 | - | - | - | - | 0.06 | 0.02 | 0.00 | 0.01 | 0.02 | - | 0.03 | 1.91 |
| **Մնացած աշխարհ** | 13.63 | 0.13 | 0.24 | 0.41 | 0.41 | 0.44 | 0.31 | 0.21 | 0.11 | 0.18 | 0.37 | 0.27 | 2.64 |
| **ԵՄ երկրներ** | 4.83 | 0.04 | 0.08 | 0.21 | 0.24 | 0.27 | 0.19 | 0.12 | 0.07 | 0.14 | 0.11 | 0.19 | 3.26 |

| | Երևան | Արագած-ոտնի մարզ | Արմա-վիրի մարզ | Գեղար-քունիքի մարզ | Կոտայ-քի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավու-շի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարա-տի մարզ | Սյունի-քի մարզ | ԼՂՀ | Միջին այցերի քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գերմանիա | 0.80 | 0.00 | 0.00 | 0.02 | 0.04 | 0.02 | 0.01 | 0.02 | 0.00 | 0.02 | 0.01 | 0.11 | 3.32 |
| Լեհաստան | 0.36 | 0.02 | 0.00 | 0.01 | 0.02 | 0.02 | 0.00 | 0.01 | 0.01 | 0.04 | 0.02 | 0.03 | 3.50 |
| Իտալիա | 0.27 | - | - | 0.04 | 0.01 | 0.01 | 0.00 | 0.01 | 0.00 | - | 0.01 | 0.00 | 3.69 |
| Ֆրանսիա | 0.49 | 0.00 | 0.01 | 0.06 | 0.03 | 0.01 | 0.07 | 0.01 | 0.00 | 0.01 | 0.02 | 0.02 | 3.69 |
| Միացյալ Թագավորություն | 0.51 | 0.00 | 0.00 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.03 | - | 0.01 | 0.00 | 3.25 |
| Չեխիայի Հանրապետություն | 0.28 | 0.00 | 0.00 | 0.01 | 0.02 | 0.02 | 0.01 | 0.02 | 0.00 | 0.01 | 0.01 | 0.01 | 4.00 |
| Բելգիա | 0.23 | - | 0.01 | 0.00 | 0.01 | 0.02 | 0.04 | 0.01 | - | 0.04 | 0.00 | 0.00 | 2.11 |
| Ավստրիա | 0.29 | - | 0.01 | 0.00 | 0.00 | 0.02 | 0.00 | 0.01 | 0.00 | - | 0.00 | 0.00 | 2.86 |
| Նիդերլանդներ | 0.33 | 0.00 | 0.02 | 0.01 | 0.02 | 0.00 | 0.00 | 0.00 | - | 0.01 | 0.00 | 0.00 | 2.88 |
| Իսպանիա | 0.33 | - | 0.00 | 0.00 | 0.01 | 0.01 | 0.03 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.00 | - | 3.44 |
| Դանիա | 0.08 | - | - | - | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | - | 0.00 | 0.00 | 3.46 |
| Հունաստան | 0.27 | 0.02 | 0.00 | 0.00 | 0.04 | 0.09 | 0.00 | 0.00 | - | - | 0.00 | 0.00 | 3.00 |
| Շվեդիա | 0.14 | - | 0.00 | 0.00 | - | 0.00 | 0.00 | - | - | - | 0.00 | 0.00 | 2.83 |
| Բուլղարիա | 0.06 | - | - | 0.01 | 0.00 | 0.00 | - | 0.00 | - | - | 0.01 | - | 1.38 |
| Սլովենիա | 0.05 | - | - | 0.01 | - | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | - | 0.00 | 0.00 | 5.63 |
| Հունգարիա | 0.05 | - | 0.01 | 0.00 | 0.00 | 0.01 | - | 0.00 | - | - | - | - | 3.71 |
| Այլ ԵՄ երկրներ | 0.29 | 0.00 | 0.00 | 0.03 | 0.02 | 0.03 | 0.01 | 0.01 | 0.00 | - | 0.00 | 0.01 | 2.79 |
| **Այլ երկրներ** | 8.80 | 0.08 | 0.16 | 0.20 | 0.17 | 0.18 | 0.13 | 0.09 | 0.05 | 0.05 | 0.26 | 0.09 | 2.18 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 2.14 | - | 0.01 | 0.05 | 0.02 | - | - | - | 0.02 | 0.00 | 0.11 | 0.02 | 1.72 |
| Միացյալ Նահանգներ | 2.09 | 0.02 | 0.03 | 0.03 | 0.07 | 0.12 | 0.11 | 0.06 | 0.01 | 0.04 | 0.02 | 0.01 | 2.90 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 0.66 | - | 0.03 | 0.01 | 0.02 | - | - | 0.01 | - | - | 0.01 | - | 1.75 |
| Թուրքիա | 0.32 | - | 0.00 | - | 0.01 | 0.01 | - | 0.00 | 0.02 | - | - | 0.03 | 1.16 |
| Կանադա | 0.33 | 0.01 | 0.03 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | - | - | - | 0.00 | - | 2.43 |
| Իսրայել | 0.14 | - | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | - | 5.03 |
| Լիբանան | 0.29 | - | 0.01 | 0.00 | 0.00 | - | - | 0.00 | - | - | - | 0.00 | 1.58 |
| Ճապոնիա | 0.07 | - | 0.00 | 0.00 | 0.00 | - | 0.00 | 0.00 | - | - | 0.00 | 0.00 | 4.94 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | 0.85 | 0.05 | - | 0.00 | 0.00 | - | 0.00 | 0.00 | - | - | - | - | 3.10 |
| Հնդկաստան | 0.70 | - | 0.00 | 0.00 | 0.00 | - | - | - | - | - | 0.00 | 0.01 | 2.50 |
| Շվեյցարիա | 0.16 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | - | 0.01 | 0.01 | 0.00 | 3.15 |
| Ավստրալիա | 0.13 | - | 0.00 | - | 0.02 | 0.00 | 0.00 | 0.01 | - | - | 0.03 | - | 3.09 |
| Չինաստան | 0.13 | - | 0.04 | 0.00 | 0.00 | - | - | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | - | 2.42 |

| | Երևան | Արագած-ոտնի մարզ | Արմա-վիրի մարզ | Գեղար-քունիքի մարզ | Կոտայ-քի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավու-շի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարա-տի մարզ | Սյունի-քի մարզ | ԼՂՀ | Միջին այցերի քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ | 0.78 | - | 0.01 | 0.10 | 0.02 | 0.04 | 0.01 | 0.01 | 0.00 | 0.00 | 0.07 | 0.01 | 3.02 |
| **Միջին գիշերակացը, օր** | **10.8** | **7.9** | **4.4** | **6.0** | **6.0** | **14.5** | **17.5** | **7.8** | **4.2** | **7.3** | **3.9** | **8.2** | **9.4** |

Մարզային այցելությունների միջին գիշերակացը կազմել է 9.4 օր, ընդ որում ամենաերկար գիշերակացը արձանագրվել է Շիրակի և Լոռու մարզերում՝ համապատասխանաբար 17.5 և 14.5 օր, իսկ ամենակարճը՝ Սյունիքի՝ 3.9 օր, Վայոց Ձորի՝ 4.2 օր և Արմավիրի՝ 4.4 օր մարզերում: Երևանում այն կազմել է 10.8 օր:

Տրամաբանական է, որ Հայաստան աշխատանքի և բուժման նպատակով ժամանած այցելուներին ընկնում է տարբեր վայրեր այցելությունների ամենափոքր միջին քանակը (1.1 յուրաքանչյուր դեպքում), մինչդեռ հանգստի/ժամանցի նպատակով ճանապարհորդողներն այցելել են առավելագույն թվով վայրեր (3.4): Գործնական և կրթության նպատակով այցելած զբոսաշրջիկները նույնպես այնքան էլ միտված չեն այցելել տարբեր վայրեր, և երկու խմբերում էլ զբոսաշրջիկները միջինում այցելել են 1.5-ից պակաս վայրեր:

Հանգստի/ժամանցի նպատակով ճանապարհորդող զբոսաշրջիկներն ունեն Երևանից դուրս բոլոր այլ վայրեր այցելության ամենաբարձր տոկոսային հարաբերությունը:

Գործնական, աշխատանքի ու կրթության նպատակով այցելության եկած ճանապարհորդներն ամենաշատն են հակված ժամանակ անցկացնել Երևանում: Միջին այցելուի և հայկական ծագումով այցելուների միջև չկան նկատելի տարբերություններ այցելած վայրերի առումով:

**Աղյուսակ 4.6.3. Այցելության վայրերի կառուցվածքն ըստ այցելության նպատակի**, (%)

| | Երևան | Արագած-ոտնի մարզ | Արմա-վիրի մարզ | Գեղար-քունիքի մարզ | Կոտայ-քի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավու-շի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարա-տի մարզ | Սյունի-քի մարզ | ԼՂՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գործնական | 13.21 | 4.16 | 8.28 | 3.94 | 7.86 | 4.07 | 6.12 | 3.22 | 2.58 | 3.42 | 10.28 | 3.64 |
| Աշխատանքի | 3.69 | 0.72 | 0.37 | 0.56 | 1.04 | 1.06 | 0.98 | 1.33 | 1.10 | 1.14 | 8.89 | 0.36 |
| Կրթության. | 2.37 | 1.63 | 1.41 | 1.13 | 1.18 | 1.06 | 1.50 | 0.78 | 1.10 | 1.28 | 0.69 | 0.36 |
| Բուժման | 9.56 | 0.54 | 0.67 | 0.50 | 0.70 | 0.97 | 6.19 | 0.78 | 1.84 | 1.14 | 0.28 | 0.36 |
| Հանգստի և ժամանցի | 16.92 | 31.83 | 33.44 | 41.86 | 37.65 | 23.91 | 12.77 | 36.29 | 51.93 | 48.07 | 42.50 | 30.18 |
| Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | 1.71 | 2.17 | 2.21 | 1.25 | 2.78 | 1.55 | 1.63 | 1.55 | 1.47 | 1.85 | 1.11 | 2.18 |
| Այցելություն | 48.18 | 52.08 | 49.57 | 48.06 | 45.09 | 56.63 | 56.29 | 52.61 | 37.94 | 39.94 | 33.19 | 59.64 |

| | Երևան | Արագած-ոտնի մարզ | Արմա-վիրի մարզ | Գեղար-քունիքի մարզ | Կոտայ-քի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավու-շի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարա-տի մարզ | Սյունի-քի մարզ | ԼՂՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հարազատներին, ընկերներին | | | | | | | | | | | | |
| Ուխտագնացություն | 0.30 | 0.18 | 0.61 | 0.25 | 0.42 | 0.19 | 0.07 | 0.33 | 0.37 | 0.57 | 0.56 | 0.36 |
| Այլ | 4.06 | 6.69 | 3.44 | 2.44 | 3.27 | 10.55 | 14.46 | 3.11 | 1.66 | 2.57 | 2.50 | 2.91 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

Ըստ այցելության նպատակի ճանապարհորդների այցելության տևողությանը հաշվարկված գիշերակացով նույնպես ամենաբարձր մասնաբաժինը ընկնում է Երևանին՝ 51.0%, որին հաջորդում է Շիրակի մարզը՝ 14.6%: Բոլոր մյուս վայրերից յուրաքանչյուրին ընկնում է զբոսաշրջիկների կողմից անցկացրած գիշերների 1.2-5 տոկոսը:

Երևանյան այցելություններում բարձր մակարդակ է ունեցել «գործնական», «կրթության» և «բուժման» նպատակով այցելությունները, համապատասխանաբար 76.9, 88.7 և 78.4 տոկոս բոլոր նպատակներից: Ամենացածր մակարդակը արձանագրվել է «Այլ» նպատակով այցելություններում՝ 29.8%: Այցելություն հարազատներին, բարեկամներին, ընկերներին նպատակով այցելությունները գիշերակացի առումով ամենաբարձրն են եղել, բոլոր գիշերակացերի ավելի քան 70 տոկոսը, ընդ որում այն ամենաբարձր մակարդակը ունեցել է Արարատի ու Գեղարքունիքի մարզերում՝ 87% և 85%:

**Աղյուսակ 4.6.4 Այցելության վայրերում գիշերակացի կառուցվածքն ըստ նպատակի, (%)**

| | Երևան | Արագած-ոտնի մարզ | Արմա-վիրի մարզ | Գեղար-քունիքի մարզ | Կոտայ-քի մարզ | Լոռու մարզ | Շիրակի մարզ | Տավու-շի մարզ | Վայոց Ձորի մարզ | Արարա-տի մարզ | Սյունի-քի մարզ | ԼՂՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գործնական | 8.91 | 3.11 | 2.30 | 1.25 | 2.48 | 1.59 | 2.96 | 1.29 | 2.89 | 1.84 | 13.35 | 9.22 |
| Աշխատանքի | 3.43 | 1.07 | 0.07 | 1.49 | 4.48 | 0.43 | 1.17 | 8.22 | 0.39 | 4.73 | 4.04 | 0.04 |
| Կրթության. | 7.76 | 0.41 | 1.31 | 0.40 | 0.64 | 0.60 | 2.02 | 0.50 | 0.00 | 0.47 | 0.76 | 0.13 |
| Բուժման | 5.94 | 0.91 | 2.22 | 1.62 | 0.80 | 2.03 | 2.18 | 0.54 | 2.50 | 0.98 | 0.00 | 2.73 |
| Հանգստի և ժամանցի | 10.70 | 4.34 | 7.72 | 5.50 | 8.85 | 6.31 | 5.77 | 7.28 | 12.48 | 2.26 | 12.09 | 10.74 |
| Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | 1.35 | 0.09 | 0.73 | 0.44 | 1.49 | 0.69 | 1.19 | 0.21 | 0.44 | 0.08 | 0.25 | 3.13 |
| Այցելություն հարազատներին, ընկերներին | 57.48 | 77.17 | 77.18 | 84.79 | 73.18 | 76.23 | 70.32 | 75.97 | 70.61 | 86.97 | 62.07 | 71.32 |
| Ուխտագնացություն | 0.38 | 0.00 | 1.25 | 0.67 | 0.17 | 0.09 | 0.01 | 0.10 | 0.00 | 0.10 | 0.43 | 0.18 |
| Այլ | 4.04 | 12.89 | 7.22 | 3.84 | 7.92 | 12.03 | 14.39 | 5.87 | 10.69 | 2.57 | 7.00 | 2.51 |
| **Ընդամենը** | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

## 4.7. Այցելուների ծախսերը

Քանի որ զբոսաշրջությունը կարևոր դերակատարություն ունի երկրի տնտեսության և սոցիալական կյանքում, ուստի շատ կարևոր է գնահատել, չափել ծառայությունների այն ծավալը, որը մատուցվում է ՀՀ ռեզիդենտների կողմից Հայաստանի տնտեսական տարածքում ճանապարհորդող ՀՀ ոչ ռեզիդենտներին կամ ներգնա զբոսաշրջիկների ծախսերը Հայաստանում: Վերջին հաշվով այդ ծախսերի հիման վրա է հաշվարկվում նաև զբոսաշրջության ոլորտում առաջացած ավելացված արժեքը: Բացի այդ ծախսերի չափերի ու կառուցվածքի մասին տեղեկատվության հիման վրա պետք է մշակվի ոլորտի հետագա ռազմավարությունը:

### 4.7.1. Մեկ անձին ընկնող միջին ծախսերը 8 և օրական ծախսերը

Բոլոր զբոսաշրջիկների համար ընդամենը միջին ծախսերը մեկ անձի հաշվարկով կազմում են 726.1 ԱՄՆ դոլար, այցելության միջին տևողությունն է 17.4 օր, իսկ միջին օրական ծախսերը կազմում են 41.8 ԱՄՆ դոլար:

Չնայած նրան, որ Հայաստան ճամփորդական փաթեթով այցելողները ընդհանուր զբոսաշրջիկների մեջ փոքր մասնաբաժին ունեն, նրանց ծախսերը մեկ ուղևորության հաշվարկով նշանակալիորեն ավելի մեծ են՝ կազմելով միջինում օրական 172.2 ԱՄՆ դոլար 7.7 օր միջին տևողությամբ և 1331.4 ԱՄՆ դոլար միջին ծախսեր: Ընդ որում՝ ԱՄՆ-ից ուր փաթեթով ժամանած ճանապարհորդները ամենաշատ ծախսերն են կատարում՝ 2960 դոլար, իսկ ամենաքիչը ԱՄԷ-ից և Ռուսաստանից ժամանողները՝ համապատասխանաբար 690.0 և 855.3 դոլար: Իսկ Վրաստանից և Թուրքիայից ճամփորդական փաթեթով ժամանողներ չեն

---

8 Այս՝ 4.7.1 բաժնում բերված ծախսերի (ՀՀ ոչ ռեզիդենտ այցելուները ինչքան գումար են ծախսել Հայաստանի տնտեսական տարածքում) հաշվարկման համար կիրառվել է հետևյալ մոտեցումը`.

**Տուր փաթեթի արժեքը** կրճատվել է (հարցաշարի 12-րդ տողը) 20%-ով՝ հաշվի առնելով տուր օպերատորների կոմիսիոն վաճառքի շահն այն երկրներում, որտեղից ժամանել են զբոսաշրջիկները:

Եթե փաթեթում ընդգրկված են նաև միջազգային տրանսպորտի ծախսերը, և եթե այդ ծառայությունները տրամադրվել են օտարերկրյա տրանսպորտային ընկերության կողմից, ապա փաթեթի արժեքը կրճատվել է միջինում ևս 30%-ով և բաժանվել է մարդկանց (հարցվողի, եթե հարցվողի հետ առկա է ընտանիքի անդամ՝ բոլորի վրա) թվաքանակի վրա:

Եթե փաթեթի արժեքի մեջ միջազգային տրանսպորտի ծախսերը չեն մտնում և նրանք օգտվել են հայաստանյան տրանսպորտային ընկերության ծառայություններից, ապա ավելացվել են համապատասխան տրանսպորտային ծախսերը (տող 12.1) և գումարը բաժանվել է մարդկանց համապատասխան քանակի վրա:

**Ինքնուրույն ճանապարհորդողների ծախսերը** հաշվարկվել են հետևյալ կերպ.

Միջազգային տրանսպորտի ծախսերը հանվել են ծախսերի ընդհանուր թվից, եթե այցելուն օգտվել է օտարերկրյա տրանսպորտային ընկերության ծառայություններից, և գումարը բաժանվել է մարդկանց քանակի վրա (տող 15.8):

արձանագրվել: Ինքնուրույն ճանապարհորդողների միջին ծախսերը կազմում են 711.0 ԱՄՆ դոլար 17.6 օր ընդհանուր տևողությամբ և օրական ծախսերը՝ միջինում 40.3 ԱՄՆ դոլարի(Տես աղյուսակ N4.7.1):

**Աղյուսակ 4.7.1.1. Ներգնա ճանապարհորդների ծախսերն ըստ հիմնական շուկաների**

| | Ռուսաստան | Վրաստան | Իրան | Ուկրաինա | Գերմանիա | ԱՄՆ | Լեհաստան | ԱՄԷ | Բելառուս | Ֆրանսիա | Իտալիա | Չեխիա | Բելգիա | Թուրքիա | Միջին Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Համփորդական փաթեթներ | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը մի-ջին ծախսեր | 855.3 | | 1321.3 | 1250.0 | 1263.7 | 2960.0 | 1258.3 | 690.0 | 1000.0 | 1755.2 | 1283.7 | 1319.0 | 1114.8 | | 1331.4 |
| Այցելության միջին տևողություն | 10.3 | | 5.1 | 9.0 | 8.1 | 10.3 | 5.9 | 7.8 | 11.0 | 7.4 | 7.1 | 9.4 | 6.3 | | 7.7 |
| Օրական մի-ջին ծախսեր | 83.3 | | 259.5 | 138.9 | 155.5 | 287.8 | 213.7 | 88.1 | 90.9 | 236.8 | 179.9 | 140.9 | 176.0 | | 172.2 |
| | Ինքնուրույն | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը մի-ջին ծախսեր | 1095.4 | 118.3 | 530.4 | 814.4 | 1145.5 | 2197.4 | 1108.9 | 1449.3 | 713.3 | 1416.1 | 1031.0 | 1349.4 | 1233.1 | 649.6 | 711.0 |
| Այցելության միջին տևողություն | 27.0 | 4.8 | 6.5 | 19.9 | 11.6 | 27.0 | 11.5 | 13.3 | 14.0 | 19.1 | 8.7 | 10.7 | 11.4 | 12.1 | 17.6 |
| Օրական մի-ջին ծախսեր | 40.6 | 24.7 | 81.2 | 41.0 | 98.6 | 81.3 | 96.5 | 108.7 | 50.9 | 74.0 | 118.8 | 126.1 | 108.2 | 53.9 | 40.3 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը մի-ջին ծախսեր | 1093.4 | 118.3 | 545.2 | 815.6 | 1169.5 | 2231.4 | 1133.0 | 1382.7 | 718.4 | 1494.0 | 1120.0 | 1344.0 | 1224.1 | 649.6 | 726.1 |
| Այցելության միջին տևողություն | 26.9 | 4.8 | 6.5 | 19.8 | 11.0 | 26.3 | 10.4 | 13.0 | 14.0 | 16.4 | 8.2 | 10.5 | 11.1 | 12.1 | 17.4 |
| Օրական մի-ջին ծախսեր | 40.7 | 24.7 | 83.8 | 41.2 | 106.6 | 84.7 | 108.9 | 106.6 | 51.4 | 91.2 | 136.5 | 128.4 | 109.9 | 53.9 | 41.8 |

«Ընդհանուր» ծախսերի առումով Հայաստան այցելության ժամանակ ԱՄՆ-ից ժամանած այցելուների կատարած ծախսերը նույնպես ամենաշատն են՝ կազմելով 2231.4 դոլար մեկ այցելության հաշվարկով, երբ ուղևորության միջին տևողությունը 26.3 օր է, այսինքն՝ օրական միջինում 108.9 ԱՄՆ դոլար: Նրանց հաջորդում են Ֆրանսիացիները, որոնց մեկ ուղևորությանն ընկնող ծախսերը կազմում են 1494.0 դոլար 8.2 օր տևողությամբ, այսինքն՝ օրական միջինում 136.5 դոլար: Ամենաքիչ ծախսեր կատարում են վրացիները՝ 118.3 ԱՄՆ դոլար 4.8 օր տևողությամբ յուրաքանչյուր ուղևորության համար և 13.90 ԱՄՆ դոլար օրական միջին ծախսեր: Իրանից ժամանած զբոսաշրջիկները նույնպես շատ չեն ծախսում Հայաստանում՝ միջինում 545.2 ԱՄՆ դոլար 6.5 օր տևողությամբ յուրաքանչյուր ուղևորության համար՝ ծախսելով օրական 83.8 ԱՄՆ դոլար: Իրանի պարագայում ծախսերի նման ցածր

մակարդակը, թերևս, պայմանավորված է հարևան երկրի գործոնով, ինչպես նաև այն հանգամանքը, որ իրանցիները Հայաստան են ժամանում գլխավորապես իրանական պատկանելիության տրանսպորտային միջոցներով:

**Գծապատկեր 1. Միջին օրական ծախսերը մեկ անձի հաշվարկով ճամփորդական փաթեթով և ինքնուրույն այցելուների կտրվածքով (ԱՄՆ դոլար)**




Եթե ներգնա ճանապարհորդների ծախսերը, որոնք վճարվել են ՀՀ ռեզիդենտներին, դիտարկում ենք ըստ նպատակի, ապա պատկերը հետևյալն է: Բնական է, որ ճամփորդական փաթեթով ժամանողները այցելում են միայն հանգստի և ժամանցի նպատակով և նրանք կատարում են առավել շատ ծախսերը: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր ներգնա ճանապարհորդ համեմատաբար ավելի շատ գումար է ծախսում(986.68 դոլար), երբ այցելում են հանգստի և ժամանցի նպատակով (բացառությամբ «Այլ» նպատակով այցելուների, որոնք մեծ տեսակարար կշիռ չունեն): Ամենաքիչ գումար ծախսել են բուժման և աշխատանքի նպատակով ժամանողները՝ համապատասխանաբար 256.32և 364.32 դոլար (Տես Աղյուսակ N4.7.1.2)

**Աղյուսակ N4.7.1.2.: Մեկ ներգնա ճանապարհորդի ծախսերի կառուցվածքն ըստ այցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման**

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | Միջին ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ-ՓԱԹԵԹՈՎ** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | | | | | 1331.4 | | | | | 1331.4 |
| Ուղևորության միջին տևողությունը | | | | | 7.7 | | | | | 7.7 |
| Միջին օրեկան ծախսերը | | | | | 172.2 | | | | | 172.2 |

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | Միջին ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 702.3 | 364.3 | 592.6 | 256.3 | 907.9 | 771.8 | 757.4 | 664.3 | 1129.4 | 712.6 |
| Ուղևորության մի-ջին տևողությունը | 8.2 | 15.0 | 36.1 | 7.3 | 11.2 | 13.8 | 22.1 | 19.6 | 21.2 | 17.7 |
| Միջին օրեկան ծախսերը | 85.5 | 24.3 | 16.4 | 35.0 | 80.8 | 55.8 | 34.2 | 33.9 | 53.4 | 40.3 |
| **ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ-ՓԱԹԵԹՈՎ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 702.3 | 364.3 | 592.6 | 256.3 | 986.7 | 771.8 | 757.4 | 664.3 | 1129.4 | 727.7 |
| Ուղևորության մի-ջին տևողությունը | 8.2 | 15.0 | 36.1 | 7.3 | 10.5 | 13.8 | 22.1 | 19.6 | 21.2 | 17.4 |
| Միջին օրեկան ծախսերը | 85.5 | 24.3 | 16.4 | 35.0 | 93.7 | 55.8 | 34.2 | 33.9 | 53.4 | 41.9 |

Հայկական ծագումով ճանապարհորդները, ի տարբերություն ընդհանուր ճանապարհորդների ավելի քիչ են ծախսում, բացառությամբ ճամփորդական փաթեթով ժամանողների, որոնք գրեթե 2 անգամ ավել են ծախսում, քան փաթեթով ժամանող միջին ճանապարհորդը(Տես Աղյուսակ N4.7.1.4):

**Աղյուսակ N4.7.1.3.: Հայկական ծագումով մեկ ներգնա ճանապարհորդի ծախսերի կառուցվածքն ըստ այցելության նպատակի և ճանապարհորդության կազմակերպման**

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | Միջին ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ-ՓԱԹԵԹՈՎ** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | | | | | 2716.6 | | | | | 2716.6 |
| Ուղևորության մի-ջին տևողությունը | | | | | 23.2 | | | | | 23.2 |
| Միջին օրեկան ծախսերը | | | | | 116.9 | | | | | 116.9 |
| **ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 677.3 | 679.8 | 400.4 | 249.6 | 903.3 | 1080.8 | 710.3 | 607.4 | 1166.3 | 668.4 |
| Ուղևորության մի-ջին տևողությունը | 9.5 | 40.9 | 24.2 | 7.3 | 23.2 | 26.1 | 22.4 | 19.2 | 21.7 | 20.0 |
| Միջին օրեկան ծախսերը | 71.4 | 16.6 | 16.5 | 34.2 | 38.9 | 41.4 | 31.7 | 31.7 | 53.7 | 33.4 |
| **ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ-ՓԱԹԵԹՈՎ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 677.3 | 679.8 | 400.4 | 249.6 | 919.7 | 1080.8 | 710.5 | 607.4 | 1166.3 | 669.3 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուղևորության մի-ջին տևողությունը | 9.5 | 40.9 | 24.2 | 7.3 | 23.2 | 26.1 | 22.4 | 19.2 | 21.7 | 20.0 |
| Միջին օրեկան ծախսերը | 71.4 | 16.6 | 16.5 | 34.2 | 39.6 | 41.4 | 31.7 | 31.7 | 53.7 | 33.4 |

Ցանկացած երկրի համար առավել ընդունելի ու խրախուսելի է հանգստի և ժամանցի նպատակով այցելող զբոսաշրջիկները, որոնց վարկից է կախված զբոսաշրջության զարգացման հեռանկարները, քանզի միջազգային զբոսաշրջության կառուցվածքում «հանգստի և ժամանցի» նպատակը գերակշռող է և նրանք ավելի շատ գումար ծախսող զանգվածն է: Հայաստանի պրագայում երկրորդ պայմանը(տես գծապատկեր N4.7.1.2) համահունչ է միջազգային չափանիշներին, սակայն առաջին պայմանը դեռևս շատ հեռու է միջազգային չափանիշին՝ 52%(Հայաստանի պարագայում՝ 14%):

**Գծապատկեր** 2. **Ծախսերի համեմատությունը հանգստի և ժամանցի նպատակով ժամանածների խմբում (ԱՄՆ դոլար)**




Հայկական ծագումով այցելուներն ընդամենը ծախսերը կազմել են 669.3 ԱՄՆ դոլար (մեկ ուղևորության համար), իսկ օրական ծախսերը՝ 33.4 ԱՄՆ դոլար: Երկրում գտնվելու ժամանակահատվածում նրանց՝ համեմատաբար քիչ ծախսերի դրույքաչափի վրա անդրադարձել է նրանց ուղևորության ավելի երկար ժամանակահատվածը (հայկական ծագումով զբոսաշրջիկների այցելության միջին տևողությունը 2.6 օրով ավելի երկար է), այսինքն՝ միջին զբոսաշրջիկի հետ համեմատելու դեպքում նրանց ընդամենը ծախսերը, ավելի

փոքր կլինեն, ինչը և արձանագրվել է հարցման արդյունքում՝ 33.4 դոլար 41.9 դոլարի դիմաց: Սա, հավանաբար, պայմանավորված է այն փաստով, որ հայկական ծագումով զբոսաշրջիկները երկրում եղած ժամանակահատվածում ավելի հակված են հանգրվանել իրենց ընկերների և հարազատների տանը և հետևաբար, ավելի քիչ գումար ծախսել կացարանի և սննդի վրա:

### 4.7.2. Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած զբոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների[9]

Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ յուրաքանչյուր ներգնա, ճանապարհորդությունն ինքնուրույն կազմակերպող ճանապարհորդ Հայաստան այցելելու համար միջինում ծախսում է 802.8 դոլար, ընդ որում ծախսերի շուրջ մեկ/երրորդը հատկացնում է միջազգային տրանսպորտին՝ Հայաստան գալու և գնալու համար: Տեսակարար կշռի առումով, մեկ ճանապարհորդը, միջազգային տրանսպորտի համար ամենաշատ ծախսերը կատարում են Սլովենիայից, ԱՄԷ-ից, Միացյալ Թագավորությունից ժամանող ճանապարհորդները, իսկ ամենաքիչը՝ Վրաստանից, Ռուսաստանից, Ավստրիայից ժամանողները: Տրամաբանական է, որ միջազգային տրանսպորտի վրա կատարվող ծախսերն ամենամեծը պետք է լինեն Հայաստանից հեռու գտնվող երկրների դեպքում, սակայն այստեղ, որոշ դեպքերում, պետք է հաշվի առնել մեկ հանգամանք, որ վերջին շրջանում զգալի թվով ճանապարհորդներ իրենց ճանապարհորդությունը կազմակերպում ավտոմոբիլային տրանսպորտով[10], մասամբ օգտագործելով նաև սեփական տրանսպորտը՝ հատկապես, Հայաստանին մոտ գտնվող երկրներից: Տեղավորման համար ծախսերը(որը, մեծամասամբ, իր մեջ ներառում է նաև նախաճաշը) կազմում են 10.4%, ընդ որում այն հատկապես ցածր է նախկին ԽՍՀՄ և մեծ սփյուռք ունեցող երկրներից այցելածների մոտ, որը բնական է, քանի որ նրանք մեծամասամբ մնում են բարեկամի կամ ընկերոջ տանը: Այս բաղադրիչի մասով ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Ավստրիայից ու Դանիայից այցելածների մոտ, իսկ ամենացածրը՝ Վրաստանից ու Ավստրալիայից ժամանողների մոտ

---

9 Ի տարբերություն նախորդ՝ 4.7.1 մասում ներկայացված տվյալների, այս մասում ծախսերի նվազեցումներ չեն կատարվել, այսինքն այն բնութագրում է ոչ ռեզիդենտի կողմից իրականացված բոլոր ծախսերը վճարած ինչպես հայաստանյան, այնպես էլ ոչ հայաստանյան ռեզիդենտներին:

10 Ըստ ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված տվյալների 2007թ. Հայաստանի սահմանահատումների 55%-ը կատարվել է օդային տրանսպորտով, իսկ 2013 թվականին՝ 32%-ը

Մեկ ճանապարհորդի հաշվով միջին ծախսերն առավել բարձր են եղել Սիրիայից, ԱՄՆ-ից, Կանադայից, Ավստրիայից, Իսպանիայից ժամանողների մոտ, իսկ ամենացածրը՝ Վրաստանից, Ուկրաինայից, Բուլղարիայից ժամանողների մոտ (Տես Աղյուսակ N4.7.2.1)

Աղյուսակ 4.7.2.1. **Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած զբոսաշրջիկների միջին ծախսերն ըստ շուկաների (%)**

| | Միջազ-գային տրանս-պորտի | Տեղա-վորման | Սննդի | Տեսար-ժան վայրերի այցելու-թյուն | Ներքին տրանս-պոր | Գնում-ներ | Այլ ծախսեր | **Ընդա-մենը** | **Ընդամենը միջին ծախսերը, դոլար** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **30.55** | **10.37** | **13.15** | **1.50** | **3.62** | **8.98** | **31.84** | **100.0** | **802.8** |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | **25.18** | **8.48** | **14.48** | **1.36** | **3.09** | **9.98** | **37.42** | **100.0** | **659.1** |
| Ռուսաստանի Դաշնություն | 25.45 | 8.78 | 14.69 | 1.30 | 2.81 | 9.49 | 37.48 | **100.0** | **1118.5** |
| Վրաստան | 17.52 | 4.62 | 12.93 | 1.83 | 6.12 | 13.87 | 43.10 | **100.0** | **135.3** |
| Ուկրաինա | 30.02 | 10.70 | 18.33 | 1.35 | 3.02 | 9.16 | 27.41 | **100.0** | **713.6** |
| Բելառուս | 38.96 | 12.74 | 8.40 | 2.17 | 2.02 | 14.42 | 21.30 | **100.0** | **951.6** |
| Ղազախստան | 40.63 | 10.58 | 7.49 | 0.84 | 0.73 | 9.42 | 30.31 | **100.0** | **1575.2** |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 37.48 | 3.96 | 10.45 | 0.24 | 0.64 | 17.73 | 29.49 | **100.0** | **1217.8** |
| **Մնացած աշխարհ** | **41.74** | **14.30** | **10.38** | **1.80** | **4.73** | **6.87** | **20.17** | **100.0** | **1474.1** |
| **ԵՄ երկրներ** | **33.96** | **18.51** | **8.83** | **1.82** | **7.03** | **6.36** | **23.47** | **100.0** | **1400.6** |
| Գերմանիա | 37.56 | 23.30 | 11.14 | 1.89 | 2.41 | 7.89 | 15.80 | **100.0** | **1154.1** |
| Լեհաստան | 35.21 | 10.24 | 10.64 | 1.65 | 1.37 | 5.71 | 35.19 | **100.0** | **1107.2** |
| Իտալիա | 41.40 | 23.59 | 9.51 | 2.05 | 1.73 | 8.82 | 12.90 | **100.0** | **1018.3** |
| Ֆրանսիա | 41.77 | 18.53 | 9.25 | 2.58 | 3.00 | 6.70 | 18.17 | **100.0** | **1128.1** |
| Միացյալ Թագավորություն | 43.63 | 19.28 | 10.24 | 1.09 | 2.13 | 6.41 | 17.22 | **100.0** | **1646.8** |
| Չեխիայի Հանրապետություն | 34.81 | 9.39 | 10.15 | 1.83 | 2.85 | 4.32 | 36.65 | **100.0** | **1416.7** |
| Բելգիա | 36.50 | 12.78 | 12.95 | 0.46 | 1.79 | 5.21 | 30.31 | **100.0** | **1558.0** |
| Ավստրիա | 14.11 | 42.93 | 3.33 | 0.70 | 0.81 | 2.66 | 35.46 | **100.0** | **2881.1** |
| Նիդերլանդներ | 44.87 | 13.52 | 13.33 | 1.40 | 2.58 | 2.61 | 21.70 | **100.0** | **2077.3** |
| Իսպանիա | 17.45 | 8.96 | 2.81 | 1.95 | 43.70 | 8.72 | 16.41 | **100.0** | **3562.5** |
| Դանիա | 34.88 | 38.73 | 6.05 | 2.40 | 2.44 | 12.41 | 3.10 | **100.0** | **841.7** |
| Հունաստան | 23.62 | 6.78 | 10.14 | 2.09 | 4.87 | 7.66 | 44.83 | **100.0** | **1225.3** |
| Շվեդիա | 40.34 | 18.53 | 8.75 | 1.02 | 1.72 | 4.79 | 24.87 | **100.0** | **1081.4** |
| Բուլղարիա | 37.23 | 23.82 | 12.82 | 12.44 | 0.64 | 2.25 | 10.80 | **100.0** | **802.5** |
| Սլովենիա | 45.00 | 21.15 | 6.09 | 3.20 | 4.65 | 4.54 | 15.38 | **100.0** | **775.4** |

| | Միջազգային տրանսպորտի | Տեղավորման | Սննդի | Տեսարժան վայրերի այցելություն | Ներքին տրանսպոր | Գնումներ | Այլ ծախսեր | **Ընդամենը** | **Ընդամենը միջին ծախսերը, դոլար** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հունգարիա | 38.86 | 20.76 | 8.06 | 1.64 | 2.29 | 7.71 | 20.68 | **100.0** | **730.6** |
| Այլ ԵՄ երկրներ | 43.81 | 13.88 | 6.50 | 2.38 | 2.11 | 9.52 | 21.81 | **100.0** | **1015.8** |
| **Այլ երկրներ** | **46.64** | **11.65** | **11.36** | **1.79** | **3.28** | **7.19** | **18.09** | **100.0** | **1524.4** |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 58.80 | 11.32 | 12.23 | 1.34 | 3.90 | 5.74 | 6.67 | **100.0** | **1140.4** |
| Միացյալ Նահանգներ | 39.58 | 9.55 | 10.80 | 3.08 | 2.10 | 8.69 | 26.20 | **100.0** | **2841.4** |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 44.71 | 7.14 | 8.78 | 0.93 | 1.50 | 8.22 | 28.72 | **100.0** | **1813.5** |
| Թուրքիա | 23.85 | 21.29 | 7.35 | 3.46 | 3.43 | 11.20 | 29.42 | **100.0** | **646.1** |
| Կանադա | 36.63 | 9.14 | 7.66 | 1.85 | 1.21 | 8.51 | 35.00 | **100.0** | **3191.4** |
| Իսրայել | 40.82 | 26.40 | 9.25 | 1.83 | 0.83 | 7.64 | 13.23 | **100.0** | **833.3** |
| Լիբանան | 34.16 | 6.17 | 12.35 | 1.74 | 2.39 | 18.78 | 24.40 | **100.0** | **1762.8** |
| Ճապոնիա | 54.54 | 10.20 | 1.96 | 0.54 | 0.35 | 3.16 | 29.25 | **100.0** | **1225.0** |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | 11.10 | 17.58 | 13.76 | 1.52 | 15.22 | 5.96 | 34.86 | **100.0** | **3535.3** |
| Հնդկաստան | 34.96 | 15.69 | 20.83 | 1.29 | 4.70 | 4.10 | 18.43 | **100.0** | **2092.7** |
| Շվեյցարիա | 38.54 | 17.92 | 13.70 | 1.18 | 6.60 | 4.66 | 17.41 | **100.0** | **1387.3** |
| Ավստրալիա | 69.18 | 3.70 | 10.44 | 1.45 | 0.67 | 2.96 | 11.60 | **100.0** | **1884.2** |
| Չինաստան | 28.56 | 43.66 | 6.48 | 0.53 | 0.90 | 3.36 | 16.51 | **100.0** | **2010.5** |
| Այլ | 37.02 | 17.13 | 16.35 | 1.83 | 1.62 | 7.99 | 18.05 | **100.0** | **1127.4** |

***)Թյուրըմբռնումից խուսափելու համար անհրաժեշտ է հստակեցնել, որ բերված տոկոսային հարաբերություններն այս բաժնում ներկայացնում են առավելապես ծախսերի համամասնությունը, այլ ոչ թե բացարձակ թվերը: Այդ իսկ պատճառով, չնայած նրան, որ շուկայի որոշ սեգմենտների համար ներկայացված համամասնություններն ավելի բարձր են, այնուհանդերձ, փաստացի ծախսերը կարող են լինել ավելի ցածր, քան մյուս սեգմենտներինը:**

Հարաբերականորեն քիչ ծախսեր են հատկացվել տեսարժան վայրերի այցելության և ներքին տրանսպորտից օգտվելու համար: Նշանակալի ծախսեր են կատարվել սննդի կազմակերպման (այցելություններ ռեստորաններ և բարեր) ու գնումների համար (հուշանվերներ, անձնական կարիքների համար տարբեր գնումներ): Ընդհանուր ծախսերի մեջ այս խմբերին հատկացված ամենաշատ ծախսերը կատարել են Հնդկաստանից, Լիբանանից, Վրաստանից, Ուկրաինայից ժամանողների մոտ(թերևս դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկրներից ժամանողները ավելի քիչ միջոցներ են հատկացրել տեղավորման և տրանսպորտի վրա):

**Աղյուսակ** N 4.7.2.2:. **Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպված զբոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների ըստ այցելության նպատակի** (%)

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային տրանսպորտի | 40.9 | 28.9 | 24.1 | 16.5 | 36.5 | 27.9 | 27.0 | 33.2 | 29.8 | 30.2 |
| Տեղավորման | 13.6 | 15.0 | 23.2 | 3.2 | 26.3 | 11.2 | 7.1 | 7.2 | 6.3 | 11.2 |
| Սննդի | 6.6 | 18.1 | 15.1 | 9.3 | 11.7 | 16.1 | 15.8 | 5.0 | 8.0 | 13.0 |
| Տեսարժան վայրերի այցելություն | 0.3 | 0.6 | 0.7 | 0.2 | 2.8 | 1.1 | 1.7 | 3.1 | 0.1 | 1.5 |
| Ներքին տրանսպորտ | 1.3 | 3.2 | 3.4 | 3.4 | 3.6 | 2.3 | 4.5 | 4.3 | 1.6 | 3.6 |
| Գնումներ | 4.7 | 9.1 | 8.0 | 7.5 | 6.6 | 8.6 | 10.7 | 9.5 | 9.8 | 8.9 |
| Այլ ծախսեր | 32.7 | 25.1 | 25.4 | 59.8 | 12.4 | 32.9 | 33.2 | 37.7 | 44.4 | 31.6 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| **Ընդամենը միջին ծախսերը, դոլար** | **1287.4** | **381.8** | **701.8** | **306.0** | **988.3** | **1068.7** | **788.2** | **794.9** | **1179.8** | **810.3** |

Իրենց գումարների ամենամեծ մասնաբաժինը միջազգային տրանսպորտի վրա ծախսող զբոսաշրջիկների խմբերն են գործնական (40.9%), հանգստի/ժամանցի(36.5%), և ուխտագնացության(33.2%), նպատակով ժամանողները: Միջազգային տրանսպորտի վրա ամենաքիչ ծախսերը կատարում են բուժման(16.5%) և կրթության(24.1%) նպատակով այցելողները, սակայն նրանք համեմատաբար ավելի շատ է ծախսում սննդի ու այլ ծախսերի վրա: Կրկին անգամ կարևոր է հիշել, որ կրթության նպատակով ժամանող զբոսաշրջիկները, հիմնականում, Հայաստանին ավելի մոտ տեղակայված երկրներից են և ավելի շատ ժամանակ են անցկացնում Հայաստանում, ինչով էլ պայմանավորվում են այս տարբերությունները:

Հանգստի/ժամանցի, գործնական և աշխատանքի նպատակով ժամանող զբոսաշրջիկները շատ գումարներ են ծախսում նաև տեղավորման վրա՝ իրենց բյուջեի 26.3%, 26.5% և 25.9%-ը համապատասխանաբար, մինչդեռ ընկերներին և հարազատներին այցելող ճանապարհորդների ծախսերն այս կատեգորիայում ամենացածրն են՝ 7.1%:

Բացի այդ, հանգստի նպատակով այցելող զբոսաշրջիկներն ամենաշատն են գումարներ ծախսում կազմակերպված ճամփորդականների վրա (2.8%), ինչը զարմանալի չէ, սակայն

գնումների վրա կատարվող ծախսերի առումով (6.6%) նրանց գերազանցում են գրեթե բոլոր նպատակներով, բացի գործնականից, այցելության եկած զբոսաշրջիկները:

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային տրանսպորտի | 28.29 | 26.90 | 23.03 | 16.26 | 29.23 | 26.87 | 29.31 | 27.75 | 29.54 | 28.38 |
| Տեղավորման | 11.96 | 17.30 | 22.74 | 2.91 | 12.74 | 5.52 | 6.89 | 7.84 | 6.69 | 7.31 |
| Սննդի | 10.08 | 15.92 | 12.23 | 9.24 | 13.50 | 22.98 | 15.38 | 4.94 | 8.44 | 14.09 |
| Տեսարժան վայրերի այցելություն | 0.56 | 0.44 | 0.81 | 0.24 | 2.70 | 0.90 | 1.69 | 3.35 | 0.27 | 1.46 |
| Ներքին տրանսպորտ | 2.67 | 4.36 | 3.39 | 3.49 | 3.18 | 2.80 | 4.52 | 4.38 | 1.77 | 4.05 |
| Գնումներ | 6.29 | 15.32 | 7.16 | 7.54 | 9.16 | 7.60 | 10.11 | 10.26 | 9.72 | 9.70 |
| Այլ ծախսեր | 40.16 | 19.75 | 30.64 | 60.32 | 29.48 | 33.33 | 32.10 | 41.48 | 43.57 | 35.02 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| **Ընդամենը միջին ծախսերը, դոլար** | **676.8** | **586.3** | **404.8** | **234.1** | **1013.8** | **1635.4** | **855.5** | **699.1** | **1411.5** | **750.5** |

Հայկական ծագումով զբոսաշրջիկների խմբում ամենամեծ տարբերությունն այն է, որ նրանց մոտ գրեթե 4%-ով ցածր են կացարանի վրա ծախսվող գումարները, ինչը զարմանալի չէ, քանի որ հայկական ծագումով շատ զբոսաշրջիկներ հանգրվանում են ընկերների և հարազատների տանը և ընդհանուր ծախսերն ավելի քիչ են:

## 4.8. Այցելությունների հետ կապված այլ հարցեր

### 4.8.1. Հարմարությունների և ծառայությունների որակի գնահատում

Ցանկացած երկրի զբոսաշրջային ծառայությունների մատուցման որակի բարելավման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկրի ենթակառուցվածքների շարունակական բարելավման վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել, այն հանգամանքը, որ յուրաքանչյուր զբոսաշրջիկ հակված է նվազագույն ծախսումներով ստանալ առավելագույն ծառայություններ համալիր կարգով: Նպատակ ունենալով ենթակառուցվածքների վերաբերյալ իրական գնահատականների ստացումը անմիջապես զբոսաշրջիկի կողմից հարցազրուցավարները պատասխանողներին խնդրել են գնահատել տարբեր ծառայություններ և հարմարություններ

1-5 բալային համակարգով, որտեղ 5-ը նշանակում է գերազանց հարմարություններ/ծառայություններ, իսկ 1-ը՝ շատ վատ ծառայություններ/հարմարություններ:

Ըստ հարցման արդյունքների ամենացածր գնահատականները տրվել են Հայաստանի ներքին ճանապարհներին՝ միջինում 2.76, և գների մակարդակին՝ միջինում 3.16 գնահատական: Ամենաբարձր գնահատականները տրվել են Հայաստանի զբոսավարի ծառայություններին, որոնք միջինում գնահատվել են 4.65 և առողջարաններին, որոնց միջին գնահատականը 4.4 է:

Հարկ է նշել, որ այցելուների 40.4%-ը ներքին ճանապարհները գնահատել է «շատ վատ» և «վատ» գնահատականներ», իսկ գների մակարդակը՝ 34.2%-ը(տես աղյուսակ N4.8.1.1):

**Աղյուսակ** 3 **Հարմարությունների և ծառայությունների որակի գնահատում** (%)

| Հարմարություններ և ծառայություններ | Շատ վատ (1) | Վատ (2) | Բավարար (3) | Լավ (4) | Գերա-զանց (5) | Միջին գնահատական |
|---|---|---|---|---|---|---|
| Հյուրանոցներ | 0.29 | 0.80 | 8.40 | 38.26 | 52.25 | **4.41** |
| Ռեստորաններ | 0.40 | 0.63 | 6.10 | 34.02 | 58.84 | **4.50** |
| Հանգստի գոտիներ | 1.15 | 1.06 | 8.76 | 37.73 | 51.31 | **4.37** |
| Ճամփորդական օպերատորներ | 1.01 | 2.01 | 5.70 | 30.54 | 60.74 | **4.48** |
| Գների մակարդակը | 6.43 | 27.80 | 24.77 | 25.21 | 15.78 | **3.16** |
| Միջազգային տրանսպորտ | 1.38 | 2.16 | 8.58 | 29.65 | 58.24 | **4.41** |
| Ներքին ճանապարհներ | 14.46 | 25.96 | 34.85 | 18.27 | 6.46 | **2.76** |
| Տեսարժան վայրեր | 0.35 | 1.31 | 15.97 | 11.77 | 70.59 | **4.51** |
| Զբոսավարի ծառայություններ | 0.70 | 0.93 | 4.66 | 19.81 | 73.89 | **4.65** |
| Սահմանային ծառայությունների արդյունավետությունը | 2.52 | 1.69 | 25.96 | 23.41 | 46.41 | **4.10** |

Միջին առավելագույն գնահատականը տրվել է հանգստի/ժամանցի նպատակով այցելած զբոսաշրջիկների կողմից, իսկ ամենացածր գնահատականը՝ 3.6, տրվել է կրթության նպատակով այցելածների կողմից:

## 4.8.3. Հայաստան կրկին այցելելու ցանկությունը

Հայաստան այցելած զբոսաշրջիկների գերակշռող մեծամասնությունը (98.0%) նշել է կրկին այցելելու մտադրության կամ հետաքրքրվածության մասին: Այս թիվն ավելի բարձր է և հասնում է 98.7%-ի հայկական ծագումով զբոսաշրջիկների մոտ:

**Գծապատկեր** 4.8.3.1. **Հայաստան կրկին այցելելու ցանկությունն ըստ հիմնական շուկաների (%)**




Հայաստան կրկին այցելելու ամենաքիչ ցանկությունն արտահայտել են ճապոնացիներն ու կորեացիները, որոնց շուրջ 30%-ը պատասխանել է, որ մտադիր չէ վերադառնալ: Նրանց հաջորդում են Սլովենիացիներն ու Հունգարացիները՝ շուրջ 25%: Հայաստանի համար հիմնական շուկա հանդիսացող Ռուսաստանի, Վրաստանի և Իրանի համար վերադառնալու մտադրություն չունեցողների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 1.5%:

**Գծապատկեր 4.8.3.1. Հայաստան կրկին այցելելու ցանկությունն ըստ նպատակի** (%)




Հայաստան կրկին այցելելու նկատմամբ նվազագույն հետաքրքրությունը դրսևորել են հանգստի/ժամանցի նպատակով այցելած զբոսաշրջիկները, որոնց 6.2%-ը նշել է, որ չի նախատեսում վերադառնալ: Հնարավոր է, որ հանգստի նպատակով ճանապարհորդող

զբոսաշրջիկները գերադասում են այցելել տարբեր վայրեր և երկրներ, մինչդեռ այլ տիպի զբոսաշրջիկները, ինչպիսիք են գործնական կամ ընկերներին ու հարազատներին այցելության նպատակով ճանապարհորդողները, ունեն հատուկ կապվածություն Հայաստանի հետ, որն էլ նրանց ստիպում է վերադառնալ:

### 4.8.4. Հայաստանը որպես հանգստավայր խորհուրդ տալը

Հայաստան այցելած զբոսաշրջիկների 96.1%-ը նշել է, որ խորհուրդ կտա ընկերներին և հարազատներին այցելել Հայաստան հանգիստն անցկացնելու համար: Հայաստանի, որպես հանգստավայրի մասին հիմնական շուկաներից առավել մեծ համոզվածություն են արտահայտել Լեհաստանցի և Բելառուսցի զբոսաշրջիկները՝ 100%:

**Աղյուսակ** 4.8.4.1. **Հայաստանը որպես հանգստավայր խորհուրդ տալը ըստ շուկաների (%)**

| | Ռուսաստան | Վրաստան | Իրան | Ուկրաինա | Գերմանիա | ԱՄՆ | Լեհաստան | Բելառուս | ԱՄԷ | Ֆրանսիա | Իտալիա | Չեխիա | Միացյալ Թագ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ոչ | 6.2 | 1.7 | 1.1 | 4.4 | 1.1 | 3.4 | 0.0 | 0.0 | 4.4 | 1.2 | 1.3 | 1.5 | 3.1 | 3.9 |
| Այո | 93.8 | 98.3 | 98.9 | 95.6 | 98.9 | 96.6 | 100.0 | 100.0 | 95.6 | 98.8 | 98.7 | 98.5 | 96.9 | 96.1 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

Այցելուների միայն 3.9%-ը խորհուրդ չի տա ընկերներին այցելել Հայաստան: Որպես հանգստավայր. Ռուսաստանից, ՈՒկրաինայից և Արաբական Էմիրաթներից ժամանողների շուրջ 5% հայտնել է, որ ընկերներին խորհուրդ չի տա այցելելու Հայաստան:

Եթե այցելություններն ուսումնասիրում ենք ըստ նպատակի, ապա պատկերը գրեթե նույնն է ինչ հետագա այցելությունների դեպքում՝ 2%-ն է հակված ընկերներին խորհուրդ չտալ այցելելու Հայաստան, ընդ որում ամենաբարձրը արձանագրվել է «հանգստի և ժամանցի» նպատակով այցելուների մոտ՝ 4%:

### 4.8.5. Տրանսպորտի տեսակը և պատկանելիությունը

Հարցման արդյունքում արձանագրվել է, որ Հայաստանից մեկնման պահին հարցվողները հիմնականում օգտվել են օտարերկրյա պատկանելիության տրանսպորտային միջոցներից՝ շուրջ 64%: Ընդ որում՝ Հայաստանյան տրանսպորտից օգտվելու ամենաբարձր արդյունքը արձանագրվել է Հայաստանի քաղաքացիների կողմից(հարցին պատասխանել են ընտրանքում ընկած բոլոր հարցվողները)՝ շուրջ 85%, իսկ ամենացածր արդյունքը՝ Արաբական

Միացյալ Էմիրաթների, Կանադայի, Իսպանիայի, Վրաստանի քաղաքացիների կողմից(Տես գծապատկեր N4.8.5.1):

Հայաստանյան տրանսպորտից նման ցածր մակարդակը, թերևս այլ գործոններից զատ պայմանավորված էր նաև 2013թ. ապրիլ ամսից «Արմավիայի» լուծարմամբ:

**Գծապատկեր N4.8.5.1: Այցելուների աշխարհագրական բաշխվածությունն ըստ տրանսպորտային միջոցի պատկանելիության,%:**




# 5. ԺԱՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## 5.1. Ժամանողների հետազոտություն համառոտ նկարագիրը

Ինչպես նշվեց վերևում ժամանողների հետազոտությունն իրականացվել է Հայաստանից մեկնող զբոսաշրջիկների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Դիտարկման համար ընտրվել է ժամանման պահը այն պարզ պատճառով, որ հայաստանյան ճանապարհորդները ավարտել են իրենց ճանապարհորդությունը և հնարավորություն ունեն պատասխանելու հարցաշարում ընդգրկված գրեթե բոլոր հարցերին:

Ըստ հարցմանը մասնակցած այցելուների պատասխանների ամփոփված արդյունքների, որոնց գծով արդեն իրականացվել են ստուգաճշտման և շեղումների գծով հարթեցման, միջինացման աշխատանքները, ուսումնասիրված 12 ամիսների ընթացքում սահմանային անցման կետերում հարցմանը մասնակցել են 22240

մեկնողներ, ընդ որում, ակնհայտ սխալներով և մեծ շեղումներով թվով 1018 հարցաթերթեր ճանաչվել են անվավեր: Միևնույն ժամանակ, առանձին հարցերի պատասխաններ, որոնք ակնհայտ սխալներով ու մեծ շեղումներով են եղել, նույնպես համարվել են անվավեր և չեն մուտքագրվել տվյալների բազա:

Հարցման արդյունքներով ժամանողների 40.45%-ը իրենց ճանապարհորդությունն իրականացրել են օդային տրանսպորտով՝ հիմնականում <Զվարթնոց> օդանավակայանից, իսկ 56.95%-ը՝ ավտոմոբիլային տրանսպորտով: Շատ ցածր է երկաթուղային տրանսպորտով ճանապարհորդների տեսակարար կշիռը՝ 2.6%-ի սահմաններում (Տես աղյուսակ N5.1):

**Աղյուսակ** N5.1: ***Հարցմանը մասնակցած ժամանողների բաշխվածությունն ըստ սահմանային անցման կետերի***,

(***առանց անվավեր ճանաչված հարցաթերթերի***)

| | Մեկնողներ | |
|---|---|---|
| | թվաքանակը, մարդ | տեսակարար կշիռը % |
| **Օդային տրանսպորտով** | **8997** | **40.45** |
| <Զվարթնոց> օդանավակայան | 7981 | 35.89 |
| <Գյումրի> օդանավակայան | 1016 | 4.57 |
| **Երկաթուղային տրանսպորտով** | **578** | **2.60** |
| <Այրում> կայարան | 578 | 2.60 |
| **Ավտոմոբիլային տրանսպորտով** | **12665** | **56.95** |
| Բագրատաշեն | 7705 | 34.64 |
| Բավրա | 4032 | 18.13 |
| Մեղրի | 928 | 4.17 |
| **Ընդամենը** | **22240** | **100** |

Հարցմանը մասնակցած 22240 ժամանողներից ՀՀ ռեզիդենտի կարգավիճակ են ունեցել 12537-ը, ընդ որում թվով 859 ՀՀ քաղաքացիներ (ՀՀ ռեզիդենտների 6.8%-ը ) պատասխանել են, որ իրենք հանդիսանում են այլ երկրի ռեզիդենտ կամ հիմնական բնակության վայրը Հայաստանը չէ:

## 5.2. Քաղաքացիության և հիմնական բնակության երկրի նկարագիրը

Ժամանող այցելուների շրջանում, քաղաքացիության առումով ամենամեծ թվով սահմանահատումներ ունեցել են, ինչը և բնական էր Հայաստանը, Ռուսաստանը, Վրաստանը, Իրանը և Ուկրաինան, իսկ ամենաքիչը՝ Աֆրիկայի, Ասիայի և Օվկիանիայի երկրները: Պատկերը նույնն է, երբ այն դիտարկում ենք հիմնական

բնակության երկրի հատկանիշով: Հայաստան այցելող ճանապարհորդների ամենամեծ մասնաբաժինն ընկնում է Ռուսաստանին, Վրաստանին, Իրանին, Ուկրաինաին (տես աղյուսակ 4.2.1.):

**Աղյուսակ** N5.2.1: **Այցելությունների աշխարհագրական բաշխվածությունն ըստ քաղաքացիության և հիմնական բնակության երկրի հատկանիշի**

| | Հարցվողների քաղաքացիության երկիրը, մարդ | Տեսակարար կշիռը,% | Հարցվողների հիմնական բնակության երկիրը, մարդ | Տեսակարար կշիռը,% | Տարբերությունը, մարդ |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 22240 | 100.0 | 22240 | 100.0 | 0 |
| Հայաստան | 13454 | 60.49 | 12595 | 56.63 | -859 |
| Վրաստան | 3674 | 16.52 | 3603 | 16.20 | -71 |
| Ռուսաստանի Դաշնություն | 2887 | 12.98 | 3627 | 16.31 | 740 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 714 | 3.21 | 708 | 3.18 | -6 |
| Ուկրաինա | 215 | 0.97 | 244 | 1.10 | 29 |
| Թուրքիա | 141 | 0.63 | 145 | 0.65 | 4 |
| Միացյալ Նահանգներ | 132 | 0.59 | 151 | 0.68 | 19 |
| Գերմանիա | 106 | 0.48 | 130 | 0.58 | 24 |
| Լեհաստան | 93 | 0.42 | 102 | 0.46 | 9 |
| Ֆրանսիա | 79 | 0.36 | 89 | 0.40 | 10 |
| Բելառուս | 57 | 0.26 | 73 | 0.33 | 16 |
| Ճապոնիա | 54 | 0.24 | 55 | 0.25 | 1 |
| Իսպանիա | 41 | 0.18 | 46 | 0.21 | 5 |
| Իտալիա | 39 | 0.18 | 46 | 0.21 | 7 |
| Լիբանան | 38 | 0.17 | 37 | 0.17 | -1 |
| Բուլղարիա | 36 | 0.16 | 36 | 0.16 | 0 |
| Բելգիա | 35 | 0.16 | 49 | 0.22 | 14 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 26 | 0.12 | 44 | 0.20 | 18 |
| Չինաստան | 27 | 0.12 | 26 | 0.12 | -1 |
| Ղազախստան | 24 | 0.11 | 31 | 0.14 | 7 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | 35 | 0.16 | 30 | 0.13 | -5 |
| Չեխիայի Հանրապետություն | 17 | 0.08 | 28 | 0.13 | 11 |
| Հունաստան | 26 | 0.12 | 28 | 0.13 | 2 |
| Միացյալ Թագավորություն | 26 | 0.12 | 28 | 0.13 | 2 |
| Այլ Երկրներ | 264 | 1.19 | 0 | 0.00 | -264 |

Ժամանումների հետազոտությունն իրականացվել է Հայաստանի բնակիչների միջազգային ուղևորությունների վարքագիծն ուսումնասիրելու նպատակով: Այդ իսկ պատճառով էլ զարմանալի չէ, որ հարցմանը մասնակցած Հայաստանի բնակիչների 94%-ն ունեցել է Հայաստանի քաղաքացիություն: ՀՀ քաղաքացիները կազմել են հարցմանը մասնակցած ընդամենը մեկնողների 60.5%-ը: Հաջորդ խոշոր խումբը վրացիներն են՝ 16.5% և ռուսները՝ 13.0%(Տես աղյուսակ N5.2.1): Եթե ժամանումները դիտարկում ենք ըստ հիմնական բնակության երկրի հատկանիշի, ապա պատկերը գրեթե նույն է, միայն այն տարբերությամբ, որ Հայաստանի

պարագայում հիմնական բնակության երկրով անձանց թիվը 859-ով պակաս է ՀՀ քաղաքացիություն ունեցող անձանցից, իսկ Ռուսաստանի և մի շարք այլ երկրների համար հակառակ պատկերն, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք ՀՀ քաղաքացիներ փոխելով հիմնական բնակության վայրը՝ Հայաստանը, դեռևս չեն ստացել այդ բնակության վայրի քաղաքացիություն՝ մասնավորապես, 740-ը՝ Ռուսաստանի, 29-ը Ուկրաինայի, 24-ը Գերմանիայի, 19-ը՝ ԱՄՆ-ի և այլն:

## 5.3. Այցելության երկիրը

Հարցմանը մասնակցած 22240 ժամանողներից ճանապարհորդի կարգավիճակ են ունեցել թվով 9560 այցելուներ, որոնց 75.8%-ը այցելել է նախկին ԽՍՀՄ երկրներ, առավելապես Ռուսաստան և Վրաստան, իսկ 24.2%-ը մնացած աշխարհի երկրներ՝ հիմնականում ԱՄՆ և մերձավոր արևելքի երկրներ: Սա խոսում է այն մասին, որ հայաստանյան ճանապարհորդների համար զբոսաշրջային շուկա դեռևս մնում է նախկին ԽՍՀՄ երկրները՝ մասնավորապես Ռուսաստանը (մեծ սփյուռք և աշխատանքի հնարավորություն), Վրաստան(մեծ սփյուռք և ծովում ամենաէժան հանգստի կազմակերպման վայր): Ինչ վերաբերվում է Եվրոմիության երկրներին, ապա դրանցում քիչ թվով այցելությունները հիմնականում պայմանավորված է վիզային ռեժիմի ու համեմատաբար, գնային առումով, ոչ մատչելիությամբ: Հայաստանյան ճանապարհորդների համար, գնային առումով ոչ մատչելի են համարվում նաև աշխարհագրական առումով Հայաստանից հեռու գտնվող երկրները: Եվ թերևս դրանով պայմանավորված մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Թուրքիա, Եգիպտոս, Արաբական Էմիրություններ այցելությունները(Տես Աղյուսակ N5.3.1)

**Աղյուսակ** N5.3.1: **Ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածությունն ըստ հիմնական բնակության երկրի հատկանիշի**

| Այցելության երկիրը | Ճանապարհորդների թվաքանակը, մարդ | Տեսակարար կշիռը, % |
|---|---|---|
| **Ընդամենը** | 9560 | 100.0 |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | 7246 | 75.79 |
| Ռուսաստանի Դաշնություն | 4609 | 48.21 |
| Վրաստան | 2375 | 24.84 |
| Ուկրաինա | 175 | 1.83 |
| Բելառուս | 58 | 0.61 |
| Ղազախստան | 23 | 0.24 |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 6 | 0.06 |
| **Մնացած աշխարհ** | 2314 | 24.21 |
| **ԵՄ երկրներ** | 800 | 8.37 |
| Գերմանիա | 137 | 1.43 |
| Լեհաստան | 58 | 0.61 |
| Իտալիա | 104 | 1.09 |

| **Այցելության երկիրը** | Ճանապարհորդների թվաքանակը, մարդ | Տեսակարար կշիռը, % |
|---|---|---|
| Ֆրանսիա | 69 | 0.72 |
| Միացյալ Թագավորություն | 39 | 0.41 |
| Չեխիայի Հանրապետություն | 69 | 0.72 |
| Բելգիա | 39 | 0.41 |
| Ավստրիա | 80 | 0.84 |
| Նիդերլանդներ | 23 | 0.24 |
| Իսպանիա | 45 | 0.47 |
| Հունաստան | 34 | 0.36 |
| Բուլղարիա | 32 | 0.33 |
| Այլ ԵՄ երկրներ | 71 | 0.74 |
| **Այլ երկրներ** | 1514 | 15.84 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 422 | 4.41 |
| Միացյալ Նահանգներ | 112 | 1.17 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 372 | 3.89 |
| Թուրքիա | 406 | 4.25 |
| Կանադա | 18 | 0.19 |
| Լիբանան | 19 | 0.20 |
| Շվեյցարիա | 24 | 0.25 |
| Չինաստան | 27 | 0.28 |
| Թայլանդ | 27 | 0.28 |
| Իսրայել | 12 | 0.13 |
| Եգիպտոս | 11 | 0.12 |
| Այլ | 64 | 0.67 |

Վերը նշվածն ավելի պատկերավոր արտացոլված է 5.3.1 գծապատկերում:

**Գծապատկեր N5.3.1 Արտագնա ճանապարհորդների աշխարհագրական բաշխվածությունը,%**



## 5.4. Տարիքը և սեռը

Ընդհանուր առմամբ տղամարդիկ կազմում են հայաստանյան ճանապարհորդների մեծամասնությունը՝ ներկայացնելով 59.5%: Սեռերի համամասնության ամենամեծ տարբերությունը գրանցվել է աշխատանքի նպատակով ճամփորդողների մոտ, որտեղ տղամարդիկ կազմում են 93.4%: Կանայք մեծամասնություն են կազմում կրթության(62.5%), ընկերներին և հարազատներին այցելության (62.9%) և մարզական մշակութային միջոցառումներին մասնակցության(51.8%) նպատակով մեկնողների խմբերում:

Ճամփորդողների մեծամասնությունը պատկանում են 36-63 տարիքային խմբին և կազմում են զբոսաշրջիկների ընդհանուր թվի 50.2%-ը: Տարիքային այս խումբը մեծամասնություն է կազմում հատկապես գործնական (61.2%), աշխատանքի (59.6%) և բուժման (56.0%) նպատակներով ճամփորդողների մեջ, ինչպես նաև «այլ» նպատակներով ճանապարհորդողների մեջ (53.3%): 18-35 տարեկանները մեծամասնություն են կազմում կրթության նպատակով ճանապարհորդողների թվում (91.9%), ինչպես նաև հանգստի/ժամանցի (64.4%), ուխտագնացության(59.3%) և մարզական ու մշակութային միջոցառումների կատեգորիաներում (54.7%): Հասկանալի պատճառներով 64 և ավելի տարիքային խմբին պատկանող այցելուները մեծամասնություն և են կազմում բուժման, ուխտագնացության և հարազատներին այցելության նպատակով ճամփորդողների խմբերում:

**Աղյուսակ** N4.2.1: **Արտագնա ճանապարհորդների սեռատարիքային բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի,%**

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | **Ընդամենը միջին** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տղամարդ | 70.80 | 93.40 | 37.50 | 55.95 | 59.33 | 48.24 | 38.06 | 59.26 | 68.47 | 59.46 |
| Կին | 29.20 | 6.60 | 62.50 | 44.05 | 40.67 | 51.76 | 61.94 | 40.74 | 31.53 | 40.54 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| Մինչև 17 տարեկան | 0.00 | 0.06 | 1.47 | 3.57 | 0.73 | 11.18 | 0.29 | 0.00 | 0.26 | 0.52 |
| 18-35 տարեկան | 38.45 | 40.10 | 91.91 | 27.38 | 64.37 | 54.71 | 43.39 | 59.26 | 44.66 | 46.85 |
| 36-63 տարեկան | 61.17 | 59.58 | 6.62 | 55.95 | 34.29 | 31.76 | 51.04 | 33.33 | 53.28 | 50.20 |
| 64 և բարձր տարիքի | 0.38 | 0.25 | 0.00 | 13.10 | 0.62 | 2.35 | 5.27 | 7.41 | 1.80 | 2.43 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

**Գծապատկեր N5.4.1 Ճանապարհորդների միջին տարիքը (%)**




Դիտարկելով ճանապարհորդների սեռային կազմը, ըստ հիմնական շուկաների պատկերը հետևյալն է: Հայաստանի կանայք մեծամասնություն են կազմում Ֆրանսիա, Չեխիա, ԱՄՆ, Թուրքիա, մեկնելիս, ՈՒկրաինայի ու Իտալիայի պարագայում հավասարություն է, մնացած երկրներ ավելի շատ մեկնում են տղամարդիկ(տես գծապատկեր N 4.2.2)

**Գծապատկեր 4.2.2. Արտագնա ճանապարհորդների սեռային բաշխվածության կառուցվածքն ըստ հիմնական շուկաների, %**




## 5.5. **Ճամփորդական վարքագիծը**

Չնայած ճամփորդական փաթեթով ճանապարհորդողների տեսակարար կշիռը ընդհանուր ճանապարհորդությունների մեջ գտնվում է շատ ցածր մակարդակի վրա՝ 5.46%,

այնուհանդերձ հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ ի տարբերություն ներքնակ զբոսաշրջիկների, Հայաստանյան արտագնա զբոսաշրջիկները գրեթե կրկնակի անգամ շատ են օգտվում ճամփորդական փաթեթներից քան ներքնակ զբոսաշրջիկները: Այն առավել ցածր է հատկապես նախկին ԽՍՀՄ և Հայաստանից տարածքային առումով հեռու գտնվող երկրներ այցելելիս: Մասնավորապես Նախկին երկրների համար այն կազմել է 0.59%, ընդ որում նման ճանապարհորդություններ իրականացվել են միայն Վրաստան, Ռուսաստան և Ուկրաինա այցելելիս: Նման ճանապարհորդությունները թե քանակապես և թե տեսակարար կշռով հատկապես բարձր են Թուրքիա, Եգիպտոս, ԱՄԷ, Իսպանիա Իտալիա Թայլանդ ճանապարհորդելիս(Տես Աղյուսակ N5.5.1):

**Աղյուսակ N5.5.1 Ուղևորության կազմակերպումն ըստ այցելության երկրի (%)**

| | Ընդամենը | Ճամփորդական փաթեթ | Ինքնուրույն | Ճամփորդական փաթեթով զբոսաշրջիկների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 100.0 | 100.0 | 100.0 | 5.46 |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | 75.79 | 8.24 | 79.70 | 0.59 |
| Ռուսաստանի Դաշնություն | 48.21 | 2.49 | 50.85 | 0.28 |
| Վրաստան | 24.84 | 4.98 | 25.99 | 1.09 |
| Ուկրաինա | 1.83 | 0.77 | 1.89 | 2.29 |
| Բելառուս | 0.61 | - | 0.64 | - |
| Ղազախստան | 0.24 | - | 0.25 | - |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 0.06 | - | 0.07 | - |
| **Մնացած աշխարհ** | 24.22 | 82.59 | 20.19 | 20.70 |
| **ԵՄ երկրներ** | 8.37 | 25.17 | 7.19 | 18.25 |
| Գերմանիա | 1.43 | 0.69 | 1.46 | 2.92 |
| Լեհաստան | 0.61 | 0.69 | 0.59 | 6.90 |
| Իտալիա | 1.09 | 7.24 | 0.68 | 40.38 |
| Ֆրանսիա | 0.72 | 1.90 | 0.64 | 15.94 |
| Միացյալ Թագավորություն | 0.41 | 0.34 | 0.41 | 5.13 |
| Չեխիայի Հանրապետություն | 0.72 | 1.55 | 0.66 | 13.04 |
| Բելգիա | 0.41 | 0.34 | 0.41 | 5.13 |
| Ավստրիա | 0.84 | 1.38 | 0.79 | 10.00 |
| Նիդերլանդներ | 0.24 | 0.17 | 0.24 | 4.35 |
| Իսպանիա | 0.47 | 2.93 | 0.31 | 37.78 |
| Հունաստան | 0.36 | 2.24 | 0.23 | 38.24 |
| Բուլղարիա | 0.33 | 2.76 | 0.18 | 50.00 |
| Այլ ԵՄ երկրներ | 0.74 | 2.93 | 0.59 | 23.94 |
| **Այլ երկրներ** | 15.85 | 57.41 | 12.99 | 21.99 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 4.42 | - | 4.64 | - |
| Միացյալ Նահանգներ | 1.17 | 0.86 | 1.18 | 4.46 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 3.89 | 41.38 | 1.45 | 64.52 |
| Թուրքիա | 4.25 | 5.86 | 4.09 | 8.37 |
| Կանադա | 0.19 | - | 0.20 | - |
| Լիբանան | 0.20 | - | 0.21 | - |

| | **Ընդամենը** | **Ճամփորդական փաթեթ** | **Ինքնուրույն** | **Ճամփորդական փաթեթով զբոսաշրջիկների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ** |
|---|---|---|---|---|
| Շվեյցարիա | 0.25 | 0.52 | 0.23 | 12.50 |
| Չինաստան | 0.28 | - | 0.30 | - |
| Թայլանդ | 0.28 | 4.14 | 0.03 | 88.89 |
| Իսրայել | 0.13 | 1.03 | 0.07 | 50.00 |
| Եգիպտոս | 0.12 | 1.38 | 0.03 | 72.73 |
| Այլ | 0.67 | 2.24 | 0.56 | 20.31 |

**Գծապատկեր** N5.5.1. : **Ճանապարհորդության կազմակերպումն ըստ հիմնական շուկաների,%**




Տրամաբանական է, որ ուղևորության այլ նպատակներով ճանապարհորդող զբոսաշրջիկների մոտ ճամփորդական օպերատորների ծառայություններից օգտվելու դրույքաչափ չպետք է լինի, մինչդեռ հանգստի նպատակով մեկնողների 30.8%-ն է դիմել ճամփորդական գործակալություններին իրենց ուղևորությունը կազմակերպելու համար:

## 5.6. Կացարանը և այցելության տևողությունը

**Աղյուսակ 5.6.1. Կացարանն ըստ այցելության նպատակի (մեկ զբոսաշրջիկի հաշվով յուրաքանչյուր տիպի կացարանում անցկացված գիշերների միջին քանակը)**

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | **Ընդամենը միջին** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հյուրանոց | 7.7 | 15.7 | 33.3 | 11.8 | 9.7 | 8.1 | 22.6 | 5.9 | 2.5 | **8.6** |
| Վարձու բնակարան | 61.5 | 147.2 | 64.6 | 250.0 | 18.7 | 14.9 | 109.6 | - | 118.0 | **109.6** |
| B&B / հոսթել | 4.6 | 114.3 | 16.0 | - | 7.2 | 5.5 | 16.9 | 7.0 | 2.3 | **5.5** |
| Ընկերոջ / հարազատի տուն | 17.3 | 125.5 | 63.8 | 55.8 | 29.2 | 21.6 | 32.1 | 34.7 | 23.3 | **37.2** |

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | **Ընդամենը միջին** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ | 3.5 | 120.9 | 85.0 | 18.5 | 11.5 | 36.5 | 11.7 | 3.0 | 19.1 | **89.3** |
| **Մեկ ճանապարհորդի հաշվով գիշերների միջին քանակը** | **11.1** | **124.2** | **61.2** | **47.8** | **16.6** | **11.8** | **33.2** | **22.3** | **10.8** | **41.7** |

Ինչպես և կարող էր ակնկալվել, աշխատանքի և կրթության նպատակներով ճանապարհորդողները արտերկրում ունեցել են գիշերակացերի ամենաշատ քանակը, միջինում համապատասխանաբար՝ 124.2 և 61.2 գիշեր, մինչդեռ գործնական, մարզական մշակութային միջոցառումներին մասնակցության և այլ նպատակներով ճամփորդողներն ամենակարճ այցելությունն են ունեցել՝ շուրջ 11 գիշեր յուրաքանչյուր դեպքի համար:

Յուրաքանչյուր առանձին տիպի կացարանում անցկացրած ամենաերկար ժամանակն ընկնում է վարձակալվող բնակարաններին, որի դեպքում գիշերների միջին քանակը կազմում է 109.6: Թերևս, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ընդգրկում է նաև աշխատանքի նպատակով ճանապարհորդներին, որոնք առավել երկար ժամանակով են մնում այցելության երկրում: Չնայած կրթության, բուժման և բարեկամներին ու ընկերներին այցելելու նպատակներով ճամփորդողները նույնպես ավելի երկար ժամանակահատված են անցկացրել, սակայն քանակական առումով դրանք այնքան էլ շատ չեն՝ վերջին նշված 3 խմբերի տեսակարր կշիռը ամբողջ վարձով բնակարանում մնացողների մեջ կազմել է 10.3 % (Հիմնականը աշխատանքի նպատակն է- 62.6%): Զգալի է նաև հանգստի ու ժամանցի նպատակով այցելածների գիշերակացերի քանակը՝ 20.3%, սակայն այս խումբը համեմատաբար կարճ ժամանակով են վարձակալում բնակարանները՝ 18.7 օր:

Վարձու բնակարաններից հետո գիշերների միջին քանակի ամենաբարձր ցուցանիշն ընկնում է «Այլ» տիպի կացարաններին՝ 89.3 գիշեր, որը նույնպես պայմանավորված է ավելի երկար ժամանակով՝ աշխատանքի նպատակով այցելություններով: Դրան հաջորդում է ընկերների և բարեկամների տանը պատասխանը՝ 37.2 գիշեր: Հոսթելներին և հյուրանոցներին ընկնում է ամենակարճ ժամանակահատվածը՝ միջինում 55. և 8.6 գիշեր:

Աշխարհագրական առումով հայաստանյան ճանապարհորդները ամենաշատ գիշերակացերն ունեցել են Ռուսաստան, Ղազախստան, ՈՒկրաինա, ԱՄՆ, Ավստրալիա այցելությունների ժամանակ, ընդ որում կրկին դրա վրա ազդող հիմնական գործոնը

հանդիսանում է աշխատանքի նպատակով այցելությունները: Մասնավորապես 22 և ավել գիշերակացերի մասնաբաժինը Ռուսաստանի համար կազմել է 64.4%, ԱՄՆ՝ 52.7%, Ղազախստանի համար՝ 4.5%, Ուկրաինայի համար՝ 38.3% և այլն ( Տես Աղյուսակ N5.6.2),

Աղյուսակ N5.6.2: Այցելության տևողությունն ըստ այցելության երկրի (%)

| | 1-ից մինչև 3 գիշեր | 4-ից մինչև 7 գիշեր | 8-ից մինչև 14 գիշեր | 15-ից մինչև 21 գիշեր | 22 և ավել գիշեր | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 18.81 | 20.14 | 16.83 | 8.85 | 35.38 | 100.0 |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | 19.04 | 15.87 | 13.36 | 8.97 | 42.75 | 100.0 |
| Ռուսաստանի Դաշնություն | 2.45 | 8.42 | 13.23 | 11.50 | 64.40 | 100.0 |
| Վրաստան | 53.18 | 29.60 | 12.25 | 3.62 | 1.35 | 100.0 |
| Ուկրաինա | 1.14 | 25.14 | 23.43 | 12.00 | 38.29 | 100.0 |
| Բելառուս | 0.00 | 15.52 | 36.21 | 13.79 | 34.48 | 100.0 |
| Ղազախստան | 8.70 | 17.39 | 17.39 | 13.04 | 43.48 | 100.0 |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 0.00 | 33.33 | 16.67 | 33.33 | 16.67 | 100.0 |
| **Մնացած աշխարհ** | 18.06 | 33.49 | 27.70 | 8.47 | 12.27 | 100.0 |
| **ԵՄ երկրներ** | 4.25 | 31.88 | 35.25 | 11.88 | 16.75 | 100.0 |
| Գերմանիա | 5.11 | 32.85 | 24.09 | 13.87 | 24.09 | 100.0 |
| Լեհաստան | 5.17 | 17.24 | 43.10 | 18.97 | 15.52 | 100.0 |
| Իտալիա | 2.88 | 30.77 | 45.19 | 10.58 | 10.58 | 100.0 |
| Ֆրանսիա | 1.45 | 30.43 | 34.78 | 14.49 | 18.84 | 100.0 |
| Միացյալ Թագավորություն | 2.56 | 28.21 | 35.90 | 5.13 | 28.21 | 100.0 |
| Չեխիայի Հանրապետություն | 7.25 | 39.13 | 24.64 | 10.14 | 18.84 | 100.0 |
| Բելգիա | 5.13 | 48.72 | 28.21 | 5.13 | 12.82 | 100.0 |
| Ավստրիա | 6.25 | 42.50 | 32.50 | 6.25 | 12.50 | 100.0 |
| Նիդերլանդներ | 13.04 | 21.74 | 34.78 | 0.00 | 30.43 | 100.0 |
| Իսպանիա | 4.44 | 31.11 | 44.44 | 8.89 | 11.11 | 100.0 |
| Հունաստան | 2.94 | 11.76 | 29.41 | 23.53 | 32.35 | 100.0 |
| Բուլղարիա | 0.00 | 31.25 | 62.50 | 3.13 | 3.13 | 100.0 |
| Այլ ԵՄ երկրներ | 1.41 | 32.39 | 38.03 | 21.13 | 7.04 | 100.0 |
| **Այլ երկրներ** | 25.36 | 34.35 | 23.71 | 6.67 | 9.91 | 100.0 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 70.14 | 12.09 | 5.69 | 6.40 | 5.69 | 100.0 |
| Միացյալ Նահանգներ | 0.89 | 11.61 | 19.64 | 15.18 | 52.68 | 100.0 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 2.96 | 43.01 | 44.62 | 4.57 | 4.84 | 100.0 |
| Թուրքիա | 17.24 | 64.29 | 15.02 | 1.97 | 1.48 | 100.0 |
| Կանադա | 0.00 | 5.56 | 27.78 | 27.78 | 38.89 | 100.0 |
| Լիբանան | 0.00 | 10.53 | 42.11 | 15.79 | 31.58 | 100.0 |
| Շվեյցարիա | 20.83 | 20.83 | 25.00 | 12.50 | 20.83 | 100.0 |
| Չինաստան | 0.00 | 7.41 | 55.56 | 25.93 | 11.11 | 100.0 |
| Թայլանդ | 0.00 | 25.93 | 59.26 | 11.11 | 3.70 | 100.0 |
| Իսրայել | 0.00 | 66.67 | 33.33 | 0.00 | 0.00 | 100.0 |
| Եգիպտոս | 0.00 | 18.18 | 45.45 | 36.36 | 0.00 | 100.0 |
| Այլ | 1.56 | 12.50 | 42.19 | 10.94 | 32.81 | 100.0 |

Գծապատկեր N5.6.1: Այցելությունների կառուցվածքն ըստ ճանապարհորդության գիշերակացերի տևողության,%




Աղյուսակ N5.6.3: Հայաստան այցելությունների տևողությունն ըստ այցելության նպատակի (%)

| Այցելության տևողու-թյուն | Գործ-նական | Աշխա-տանքի | կրթու-թյան | Բուժ-ման | Հանգս-տի և ժաման-ցի | մարզական, մշա-կութային միջո-ցառումներին մասնակցություն | Այցելություն հարա-զատներին, ընկերներին | Ուխտա-գնացու-թյուն | Այլ | Ընդա-մենը միջին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1-ից մինչև 3 | 35.30 | 13.65 | 0.00 | 2.33 | 3.21 | 15.34 | 14.00 | 14.29 | 56.67 | 18.76 |
| 4-ից մինչև 7 | 37.11 | 1.32 | 8.76 | 4.65 | 28.64 | 36.93 | 17.91 | 31.43 | 19.62 | 20.10 |
| 8-ից մինչև 14 | 15.09 | 0.75 | 23.36 | 16.28 | 39.20 | 28.41 | 15.90 | 22.86 | 8.97 | 16.76 |
| 15-ից մինչև 21 | 4.99 | 1.03 | 11.68 | 10.47 | 13.46 | 9.09 | 13.21 | 5.71 | 4.87 | 8.87 |
| 22 և ավել | 7.51 | 83.25 | 56.20 | 66.28 | 15.49 | 10.23 | 38.97 | 25.71 | 9.87 | 35.52 |
| **Գիշերների միջին քանակը, օր** | 11.12 | 124.15 | 61.24 | 47.83 | 16.62 | 11.80 | **33.17** | **22.31** | **10.79** | **41.73** |

Աշխատանքի, կրթության, բուժման կամ ընկերներին ու բարեկամներին այցելելու նպատակներով ճամփորդողներն ամենաշատն են անցկացնում 22+ գիշեր տևողությամբ ուղևորություններ: Մասնավորապես աշխատանքի նպատակով գիշերակացերի 83.3%-ը, բուժման՝ 66.3%-ը և հարազատներին այցելության՝ 39.0%-ը բաժին է ընկնում 22 և ավել գիշերակացերին:

## 5.7. Այցելուների ծախսերը

### 5.7.1 Մեկ անձին ընկնող միջին ծախսերը[11] և օրական ծախսերը

Հայաստանյան արտագնա ճանապարհորդների միջին ծախսերը շուրջ 250 դոլարով ավել են, քան ներգնա ճանապարհորդներինը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013թ. ապրիլից լուծարվել է «Արմավիա» ընկերությունը, իսկ միջին ծախսերի մեջ չի ներառված այն ծառայությունները, որոնք մատուցվել են ճանապարհորդներին ՀՀ ռեզիդենտ միավորների կողմից:

**Աղյուսակ** N5.7.1.1. **Մեկ արտագնա ճանապարհորդի հաշվով ընդամենը միջին և օրական ծախսերը, դոլար, առանց վերավաճառքի համար կատարված գնումների**

| | Ռուսաստան | Վրաստան | ԱՄԷ | Թուրքիա | Իրան | Ուկրաինա | Գերմանիա | Իտալիա | ԱՄՆ | Ավստրիա | Ֆրանսիա | Չեխիա | Իսպանիա | Լեհաստան | Միջին Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Համփորդական փաթեթներ** | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 1104.0 | 195.1 | 1624.3 | 1429.8 | | 1228.3 | 1181.3 | 1813.1 | 1272.0 | 1932.5 | 2273.9 | 2160.6 | 2049.2 | 1573.2 | 1611.9 |
| Այցելության միջին տևողություն | 30.3 | 5.2 | 8.9 | 9.5 | | 23.0 | 6.3 | 10.7 | 45.0 | 10.9 | 10.0 | 9.1 | 11.2 | 8.3 | 10.1 |
| Օրական միջին ծախսեր | 36.4 | 37.5 | 181.5 | 151.2 | | 53.4 | 186.5 | 168.9 | 28.3 | 177.7 | 227.4 | 236.8 | 183.0 | 190.7 | 159.7 |
| | **Ինքնուրույն** | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 1033.6 | 325.7 | 2231.9 | 660.7 | 548.0 | 1245.6 | 1982.2 | 1900.0 | 2804.0 | 2003.9 | 2579.4 | 1377.6 | 2356.0 | 2038.9 | 919.5 |
| Այցելության միջին տևողություն | 75.2 | 5.1 | 18.2 | 6.1 | 5.9 | 46.1 | 19.6 | 14.3 | 38.1 | 17.7 | 22.8 | 15.1 | 14.9 | 23.1 | 46.8 |
| Օրական միջին ծախսեր | 13.7 | 64.2 | 122.4 | 109.0 | 92.9 | 27.0 | 101.2 | 132.6 | 73.6 | 113.1 | 113.4 | 91.2 | 157.9 | 88.3 | 19.6 |

[11] Այս՝ 5.3.1 բաժնում բերված ծախսերի (ՀՀ ռեզիդենտ ճանապարհորդները ինչքան գումար են ծախսել արտերկրների տնտեսական տարածքներում) հաշվարկման համար կիրառվել է հետևյալ մոտեցումը՝.

**Տուր փաթեթի արժեքը** կրճատվել է (հարցաշարի 10-րդ տողը) 20%-ով՝ հաշվի առնելով օտարերկրյա տուր օպերատորներին վճարվող կոմիսիոն վճարները:

Եթե փաթեթում ընդգրկված են նաև միջազգային տրանսպորտի ծախսերը, և եթե այդ ծառայությունները տրամադրվել են հայաստանյան տրանսպորտային ընկերության կողմից, ապա փաթեթի արժեքը կրճատվել է միջինում ևս 30%-ով և բաժանվել է մարդկանց (հարցվողի, եթե հարցվողի հետ առկա է ընտանիքի անդամ՝ բոլորի վրա) թվաքանակի վրա:

Եթե փաթեթի արժեքի մեջ միջազգային տրանսպորտի ծախսերը չեն մտնում և նրանք օգտվել են ոչ հայաստանյան տրանսպորտային ընկերության ծառայություններից, ապա ավելացվել են համապատասխան տրանսպորտային ծախսերը (տող 10.3) և գումարը բաժանվել է մարդկանց համապատասխան քանակի վրա:

**Ինքնուրույն ճանապարհորդողների ծախսերը** հաշվարկվել են հետևյալ կերպ.

Միջազգային տրանսպորտի ծախսերը հանվել են ծախսերի ընդհանուր թվից, եթե այցելուն օգտվել է տրանսպորտային ընկերության ծառայություններից և գումարը բաժանվել է մարդկանց քանակի վրա (տող 13.8):

| | Ռուսաստան | Վրաստան | ԱՄԷ | Թուրքիա | Իրան | Ուկրաինա | Գերմանիա | Իտալիա | ԱՄՆ | Ավստրիա | Ֆրանսիա | Չեխիա | Իսպանիա | Լեհաստան | Միջին Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը մի-ջին ծախսեր | 1033.8 | 324.3 | 1760.2 | 752.0 | 548.0 | 1245.2 | 1960.8 | 1851.9 | 2736.2 | 1993.4 | 2518.3 | 1500.7 | 2216.5 | 1998.1 | 978.1 |
| Այցելության միջին տևողություն | 75.1 | 5.1 | 11.8 | 6.3 | 5.9 | 45.6 | 19.3 | 12.8 | 38.3 | 17.0 | 20.6 | 14.3 | 13.6 | 22.0 | 44.5 |
| Օրական մի-ջին ծախսեր | 13.8 | 63.9 | 148.8 | 118.4 | 92.9 | 27.3 | 101.7 | 144.8 | 71.5 | 117.5 | 122.5 | 105.1 | 163.5 | 90.7 | 22.0 |

Յուրաքանչյուր ուղևորությանն ընկնող միջին ծախսերը (ուղևորության կազմակերպման բոլոր տեսակների համար) կազմել են 978.1 ԱՄՆ դոլար(Տես Աղյուսակ N 5.7.1.1), իսկ օրեկան ծախսերը՝ 22.0 ԱՄՆ դոլար: Ճամփորդական փաթեթով ճամփորդողները միջինում նշանակալիորեն ավելի շատ են ծախսում. յուրաքանչյուր ուղևորությանն ընկնող ծախսերը կազմում են 1611.9 ԱՄՆ դոլար, իսկ օրականը՝ 159.7 ԱՄՆ դոլար: Յուրաքանչյուր ուղևորությանը ընկնող միջին օրեկան ծախսերն ամենաբարձրն են Իսպանիաից, օրեկան 163.5 ԱՄՆ դոլար, ինչպես նաև ԱՄԷ-ից՝ 148.8 ԱՄՆ դոլար և Իտալիայից՝ 144.8 ԱՄՆ դոլար վերադարձողների մոտ: Ամենացածր ծախսերը գրանցվել են Ռուսաստանից՝ օրեկան 13.8 ԱՄՆ դոլար և ՈՒկրաինայից՝ 27.3 վերադարձողների մոտ, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի նպատակով այցելությունների մեծ թվով, որոնք հակված են քիչ ծախսումներ կատարել: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ճանապարհորդ շուրջ 275 դոլար ավել է ծախսում, երբ վերը բերված աղյուսակում ընդգրկում ենք վերավաճառքի համար կատարված գնումները, որոնք առավելապես առնչվել են Թուրքիա, ԱՄԷ, Չինաստան, Վրաստան, ԱՄՆ մեկնած ճանապարհորդներին:

Ճամփորդական փաթեթով ճանապարհորդները, ինչպես և ներքնակ ճանապարհորդների պարագայում, հակված են ավելի շատ ծախսեր կատարել, քան ինքնուրույն ճանապարհորդողները: Թերևս, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ճամփորդական փաթեթից օգտվում են միայն հանգստի և ժամանցի նպատակով ճանապարհորդները և այն հասու է քիչ թե շատ միջին ու բարձր կենսապայմաններ ունեցողներին:

Եթե միջին ծախսերը դիտարկում ենք ըստ նպատակների, ապա պատկերը հետևյալն է, բոլորից շատ ծախսեր կատարում են Կրթության, Աշխատանքի ու բուժման նպատակով մեկնողները, որը տրամաբանական է, քանի որ այս խմբի ճանապարհորդները ամենաերկար են մնում արտերկրում, սակայն այս խմբերի այցելուները միջին օրական ամենաքիչ ծախսողներն են համարվում(Տես աղյուսակ N5.7.1.2)

**Աղյուսակ** N5.7.1.2: **Մեկ արտագնա ճանապարհորդի հաշվով և միջին օրական ծախսերն ըստ ուղևորության կազմակերպման ձևի և այցելության նպատակի (դոլար) – առանց վերավաճառքի նպատակով գնումների**

| | Գործ-նական | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգս-տի և ժա-մանցի | Մարզական, մշակութային միջոցառում-ներին մաս-նակցություն | Այցելություն հարազատ-ներին, ընկերներին | Ուխտա-գնացու-թյուն | Այլ | **Միջին ընդա-մենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ճամփորդական փաթեթներ** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | | | | | 1611.9 | | | | | **1611.9** |
| Այցելության միջին տևողություն | | | | | 10.1 | | | | | **10.1** |
| Օրական միջին ծախսեր | | | | | 159.7 | | | | | **159.7** |
| **Ինքնուրույն** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 1057.1 | 1256.5 | 1992.6 | 1868.5 | 827.3 | 834.1 | 712.4 | 555.4 | 519.9 | **919.5** |
| Այցելության միջին տևողություն | 10.3 | 123.6 | 54.9 | 49.9 | 19.8 | 15.3 | 38.8 | 26.2 | 9.0 | **46.8** |
| Օրական միջին ծախսեր | 102.4 | 10.2 | 36.3 | 37.4 | 41.8 | 54.4 | 18.4 | 21.2 | 58.1 | **19.6** |
| **Ընդամենը** | | | | | | | | | | |
| Ընդամենը միջին ծախսեր | 1057.1 | 1256.5 | 1992.6 | 1868.5 | 1085.2 | 834.1 | 712.4 | 555.4 | 519.9 | **978.1** |
| Այցելության միջին տևողություն | 10.3 | 123.6 | 54.9 | 49.9 | 16.6 | 15.3 | 38.8 | 26.2 | 9.0 | **44.5** |
| Օրական միջին ծախսեր | 102.4 | 10.2 | 36.3 | 37.4 | 65.2 | 54.4 | 18.4 | 21.2 | 58.1 | **22.0** |

Գործնական նպատակով ճանապարհորդողների մոտ գրանցվել են ամենաբարձր օրական միջին ծախսերը՝ 102.4 ԱՄՆ դոլար և ամենակարճ գիշերակացը(10.3 օր) «Այլ» նպատակի հետ միասին: Օրական քիչ ծախսեր ունեն նաև (18.4 դոլար) ընկերներին և բարեկամներին այցելողները:

### 5.7.2. Միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների[12]

Հայաստանյան զբոսաշրջային և ընդհանրապես ճանապարհորդության հետ կապված այլ ծախսերի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար արտագնա

[12] Ի տարբերություն նախորդ՝ 5.3.1 մասում ներկայացված տվյալների, այս մասում ծախսերի նվազեցումներ չեն կատարվել, այսինքն այն բնութագրում է ՀՀ ռեզիդենտի կողմից իրականացված բոլոր ծախսերը վճարած ինչպես հայաստանյան, այնպես էլ ոչ հայաստանյան ռեզիդենտներին:

ճանապարհորդների հարցերի մեջ ներառվել են նաև այլ հարցեր, մասնավորապես կատարված ծախսերը մինչև ճանապարհորդությունը սկսելը և Հայաստանի համար բնորոշ, գնումներ, որոնք նախատեսված են վերավաճառքի համար: Հայաստանյան մեկ ինքնուրույն ճանապարհորդ միջին հաշվով արտերկրյա ճանապարհորդության համար ծախսում է 1060.4 դոլար, իսկ հաշվի առած նաև վերավաճառքի նպատակով կատարված գնումները՝ 1334.9 դոլար: Վերավաճառքի համար ամենաշատ գումարներ ծախսվել են Թուրքիայում, Արաբական էմիրաթներում, Չինաստանում, Վրաստանում: Հաշվի առնելով, որ հայաստանցիների համար ճանապարհորդության հիմնական երկրները մնում են նախկին ԽՍՀՄ երկրները, բնականաբար և այդ երկրներում է կատարվում ծախսերի հիմնական մասը՝ մասնավորապես, միջազգային տրանսպորտային ծախսերի 60.3%-ը, տեղավորման 76.7%-ը Սննդի կազմակերպման 72.2%- և այլն(Տես աղյուսակ N 5.7.2.1):

**Աղյուսակ** N 5.7.2.1: **Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած զբոսաշրջիկների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների և այցելության երկրի** (%)

| | Միջազգային տրանսպոր ներառյալ նախորոք գնումը | Տեղավորում ներառյալ նախորոք վճարումը | Սնունդ | Էքսկուրսիաներ | Ներքին տրանսպորտ | Այլ ծախսեր | Ապրանքներ վաճառքի նպատակով | **Ընդամենը միջին ծախսեր, ներառյալ վերավաճառքի նպատակով գնումները, դոլար** | **Ընդամենը միջին ծախսերը, բացառությամբ վերավաճառքի նպատակով գնումները, դոլար** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **100.0** | **100. 0** | **100.0** | **100.0** | **100.0** | **1334.9** | **1060.4** |
| **Նախկին ԽՍՀՄ երկրներ** | **60.26** | **76.73** | **72.19** | **41.70** | **61.78** | **68.89** | **58.46** | **1073.0** | **876.1** |
| Ռուսաստան | 53.91 | 66.84 | 55.91 | 18.75 | 50.84 | 43.85 | 5.25 | **1164.7** | **1136.2** |
| Վրաստան | 3.44 | 5.79 | 11.41 | 20.54 | 6.17 | 21.22 | 52.82 | **870.8** | **358.3** |
| Ուկրաինա | 1.77 | 2.45 | 3.13 | 1.55 | 3.26 | 2.19 | 0.27 | **1311.5** | **1271.8** |
| Բելառուս | 0.64 | 1.52 | 0.84 | 0.23 | 1.39 | 0.67 | 0.07 | **1757.2** | **1720.4** |
| Ղազախստան | 0.42 | 0.10 | 0.88 | 0.63 | 0.08 | 0.64 | 0.06 | **2055.9** | **1989.2** |
| Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ | 0.09 | 0.03 | 0.02 | 0.00 | 0.04 | 0.32 | 0.00 | **1641.2** | **1641.2** |
| **Մնացած աշխարհ** | **39.74** | **23.27** | **27.81** | **58.30** | **38.22** | **31.11** | **41.54** | **2489.9** | **1872.9** |
| **ԵՄ երկրներ** | **10.87** | **13.56** | **15.96** | **25.62** | **8.61** | **13.09** | **1.63** | **2109.5** | **2041.5** |
| Գերմանիա | 1.96 | 2.40 | 3.62 | 3.66 | 1.81 | 3.62 | 0.37 | **2071.5** | **1999.3** |
| Լեհաստան | 1.31 | 0.50 | 1.36 | 2.13 | 0.77 | 0.79 | 0.06 | **2102.1** | **2068.1** |
| Իտալիա | 1.22 | 1.24 | 1.37 | 5.00 | 1.00 | 1.30 | 0.09 | **2126.4** | **2087.7** |
| Ֆրանսիա | 1.22 | 2.10 | 2.02 | 2.55 | 0.67 | 0.85 | 0.32 | **2730.8** | **2579.4** |
| Միացյալ Թագավորություն | 0.64 | 0.87 | 1.54 | 0.68 | 0.88 | 0.82 | 0.02 | **2574.3** | **2560.7** |
| Չեխիա | 0.88 | 0.95 | 0.99 | 0.18 | 0.49 | 0.73 | 0.04 | **1592.0** | **1572.8** |

| | Միջազգային տրանսպոր ներառյալ նախորոք գնումը | Տեղավորում ներառյալ նախորոք վճարումը | Սնունդ | Էքսկուրսիաներ | Ներքին տրանսպորտ | Այլ ծախսեր | Ապրանքներ վաճառքի նպատակով | **Ընդամենը միջին ծախսեր, ներառյալ վերավաճառքի նպատակով գնումները, դոլար** | **Ընդամենը միջին ծախսերը, բացառությամբ վերավաճառքի նպատակով գնումները, դոլար** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բելգիա | 0.52 | 0.56 | 0.53 | 0.52 | 0.54 | 0.63 | 0.30 | **1987.1** | **1743.0** |
| Ավստրիա | 1.07 | 3.05 | 1.70 | 1.14 | 0.65 | 1.50 | 0.10 | **2469.7** | **2434.0** |
| Նիդերլանդներ | 0.35 | 0.25 | 0.49 | 0.35 | 0.09 | 0.88 | 0.05 | **2618.1** | **2551.8** |
| Իսպանիա | 0.75 | 0.62 | 0.98 | 4.70 | 0.78 | 0.75 | 0.00 | **2404.0** | **2404.0** |
| Հունաստան | 0.23 | 0.26 | 0.21 | 1.36 | 0.29 | 0.31 | 0.21 | **1472.4** | **1226.8** |
| Բուլղարիա | 0.20 | 0.22 | 0.61 | 1.96 | 0.32 | 0.13 | 0.02 | **1679.7** | **1651.1** |
| Այլ ԵՄ երկրներ | 0.53 | 0.54 | 0.56 | 1.39 | 0.32 | 0.79 | 0.06 | **1325.2** | **1293.8** |
| **Այլ երկրներ** | **28.87** | **9.71** | **11.85** | **32.67** | **29.61** | **18.02** | **39.91** | 2700.6 | 1779.5 |
| Իրան | 3.09 | 0.29 | 2.22 | 3.07 | 21.89 | 2.23 | 2.29 | **921.3** | **761.3** |
| ԱՄՆ | 3.43 | 1.28 | 2.12 | 8.64 | 1.89 | 3.56 | 0.93 | **3108.7** | **2865.2** |
| ԱՄԷ | 17.34 | 3.04 | 3.15 | 13.97 | 2.42 | 4.23 | 2.30 | **7228.2** | **6763.2** |
| Թուրքիա | 2.18 | 1.99 | 1.90 | 3.25 | 1.34 | 4.96 | 33.14 | **2839.2** | **694.9** |
| Կանադա | 0.49 | 0.19 | 0.49 | 1.25 | 0.22 | 0.70 | 0.01 | **2880.6** | **2858.3** |
| Լիբանան | 0.25 | 0.02 | 0.13 | 0.00 | 0.58 | 0.29 | 0.14 | **1530.2** | **1294.9** |
| Շվեյցարիա | 0.37 | 1.41 | 0.35 | 0.06 | 0.19 | 0.41 | 0.00 | **2677.8** | **2673.6** |
| Չինաստան | 0.57 | 0.47 | 0.51 | 0.00 | 0.18 | 0.66 | 0.83 | **3740.7** | **2677.1** |
| Թայլանդ | 0.07 | 0.21 | 0.18 | 0.49 | 0.12 | 0.14 | 0.00 | **3790.0** | **3790.0** |
| Իսրայել | 0.11 | 0.08 | 0.02 | 0.00 | 0.00 | 0.13 | 0.01 | **1696.4** | **1663.1** |
| Եգիպտոս | 0.05 | 0.15 | 0.06 | 0.15 | 0.15 | 0.00 | 0.05 | **4313.6** | **3563.6** |
| Այլ | 0.93 | 0.58 | 0.72 | 1.79 | 0.62 | 0.72 | 0.21 | **2113.0** | **1972.4** |

Ճանապարհորդները որոշակի գումար են ծախսում նաև մինչև ճանապարհորդության սկսելը՝, մասնավորապես միջազգային տրանսպորտային, կացարանի ծախսեր, ինչպես նաև ծախսեր զբոսաշրջային պարագաների ձեռք բերման, ներքին տրանսպորտի, հուշանվերների գնման և այլ ծախսեր: Այդ բոլոր ծախսերը միասին միջին հաշվով կազմել են 372.2 դոլար, ընդ որում այդ ծախսերի հիմնական մասը կազմել են միջազգային տրանսպորտի վրա կատարված ծախսերը՝ նախօրոք կատարված ծախսերի 61.8%(Տես Աղյուսակ N5.7.2.1): Ընդ որում, Հայաստանից ավելի հեռու գտնվող երկրներ ուղևորվելու դեպքում այս կատեգորիայում այցելողների կատարած ծախսերի տոկոսային հարաբերությունը մի փոքր ավելի բարձր է: Օրինակ, Հյուսիսային Ամերիկայի երկրներ, Արգենտինա, Ճապոնիա և Արևմտյան Եվրոպայի մի քանի երկրներ այցելողներն իրենց գումարի ավելի քան 80%-ը ծախսել են միջազգային տրանսպորտի վրա, մինչդեռ Հայաստանի հարևան երկրներ՝ Վրաստան և Իրան այցելողներն

այս կատեգորիայում ամենաքիչ ծախսերն են ունեցել, համապատասխանաբար 45.9% և 64.6%: Միջազգային տրանսպորտի և կացարանի վրա կատարված ծախսերը ներառվել են նաև 5.7.2.1 աղյուսակի համապատասխան ցուցանիշներում:

**Աղյուսակ** N 5.7.2.2: **Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած ճանապարհորդների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների և այցելության նպատակի *մինչև մեկնումը*** (%)

| **Ծախսերի առարկան** | Գործ-նական | Աշխա-տանքի | Կրթու-թյան | Բուժ-ման | Հանգս-տի և ժա-մանցի | Մարզական, մշակութային միջոցառում-ներին մաս-նակցություն | Այցելություն հարազատ-ներին, ընկերներին | Ուխտա-գնացու-թյուն | Այլ | **Միջին ընդա-մենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային տրանսպորտ | 61.54 | 77.82 | 73.45 | 73.41 | 55.69 | 83.89 | 58.48 | 72.08 | 63.06 | 61.77 |
| Կացարան | 5.19 | 1.83 | 2.92 | 5.31 | 6.63 | 2.40 | 0.16 | 0.00 | 0.33 | 2.66 |
| Հագուստ և ճամփորդական իրեր | 20.64 | 8.54 | 16.16 | 3.86 | 20.83 | 5.37 | 3.32 | 8.08 | 6.99 | 10.93 |
| Ներքին տրանսպորտ | 0.94 | 3.34 | 0.13 | 0.91 | 0.81 | 0.24 | 1.26 | 5.27 | 1.83 | 1.36 |
| Այլ ծախսեր | 11.69 | 8.48 | 7.35 | 16.51 | 16.04 | 8.10 | 36.77 | 14.57 | 27.79 | 23.27 |
| **Ընդամենը միջին ծախսեր** (ԱՄՆ դոլար) | **422.1** | **264.4** | **777.7** | **502.8** | **325.3** | **278.9** | **451.6** | **232.6** | **267.8** | **372.2** |

Եթե միջին ծախսերը դիտարկում ենք ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած ճանապարհորդների համար, ապա արձանագրվել է հետևյալը, ամենաշատ ծախսերը կատարվում են կրթության(2186.4 դոլար), բուժման(1976.7 դոլար), աշխատանքի(1940.3 դոլար) և <Այլ>(դոլար) նպատակներով, ընդ որում՝ եթե առաջին երկուսի դեպքում շատ ծախսերը պայմանավորված են երկարաժամկետ այցելություններով կամ թանկարժեք ծառայություններ գնելով, ապա մյուսների պարագայում այն արդյունք է հիմնականում վերավաճառքի համար ապրանքների գնմամբ: Ճամփորդելուց առաջ զբոսաշրջիկների բյուջեի հաջորդ մեծ մասը կազմում են <Այլ> ծախսերը՝ 23.3%, որի գծով ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է <հարազատներին այցելության> և <այլ> նպատակներով այցելուների մոտ, ինչը և տրամաբանական է, քանի որ այլ ծախսերը բաղադրիչը հիմնականում կազմված է նվերներից: Արձանագրվել է նաև, որ նմանատիպ ծախսերի մեծ դրույքաչափ ունեն, մեծ սփյուռք ունեցող երկրներ այցելությունները,՝ Վրաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Գերմանիա և այլն: Կացարանի վրա կատարված ծախսերը բավականին ցածր են, միջինում 2.7%, որը

վկայում է, որ հայաստանյան ճանապարհորդների մոտ դեռևս շատ ցածր է կացարանի նախօրոք ամրագրման ու վճարման մշակույթը:

**Աղյուսակ** N 5.7.2.3: **Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած ճանապարհորդների միջին ծախսերն ըստ ծախսերի առարկաների և ըստ այցելության նպատակի** (դոլար)

| | Գործնա-կան | Աշխա-տանքի | Կրթու-թյան. | Բուժ-ման | Հանգս-տի և ժա-մանցի | Մարզական, մշակութային միջոցառում-ներին մասնա-կցություն | Այցելութ-յուն հարա-զատներին, ընկերներին | Ուխտա-գնացու-թյուն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային տրանսպորտի համար | 282.1 | 222.3 | 590.3 | 413.6 | 258.4 | 300.2 | 359.5 | 238.5 | 158.4 | 278.1 |
| Տեղավորման համար | 185.0 | 651.7 | 477.6 | 213.5 | 192.3 | 171.0 | 43.5 | 60.9 | 46.7 | 243.3 |
| Սնունդ | 107.3 | 136.0 | 316.7 | 128.1 | 156.3 | 99.1 | 76.0 | 55.5 | 51.8 | 111.0 |
| Էքսկուրսիաների, համար | 7.6 | 3.7 | 40.6 | 8.4 | 34.8 | 6.6 | 9.1 | 14.4 | 8.9 | 12.8 |
| Ներքին տրանսպորտի համար | 31.8 | 92.6 | 62.1 | 23.1 | 22.5 | 21.6 | 18.9 | 17.4 | 14.6 | 38.8 |
| **Այլ ծախսեր** | 461.5 | 188.5 | 521.9 | 1124.1 | 203.5 | 247.9 | 231.2 | 192.9 | 247.8 | 264.0 |
| **Ապրանքներ առևտրի նպատակով** | 864.9 | 45.0 | 177.2 | 65.9 | 52.5 | 44.4 | 42.5 | 498.1 | 1031.8 | 274.5 |
| **Ընդամենը** | 1940.3 | 1339.8 | 2186.4 | 1976.7 | 920.4 | 890.9 | 780.7 | 1077.8 | 1560.0 | 1222.5 |

**Գծապատկեր** N 5.7.2.1: **Ուղևորությունն ինքնուրույն կազմակերպած ճանապարհորդների միջին ծախսերի կառուցվածքն ըստ ծախսերի տեսակների** (%)



## 5.8. Այցելությունների հետ կապված այլ հարցեր

### 5.8.1. Ուղևորության ֆինանսավորումը

Դեռևս Հայաստանի արտագնա ճանապարհորդներին բնորոշ է ճանապարհորդության կազմակերպումը տրանսֆերտների հաշվին, արտերկրում ապրող բարեկամների ֆինանսավորմամբ: Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ բարեկամների ֆինանսավորմամբ ճանապարհորդությունները կազմել են 19%: Ընդհանուր առմամբ սեփական միջոցներով ճանապարհորդությունները կազմել են 73.75%: Արտերկրում ապրող բարեկամների ֆինանսավորման հաշվին բոլորից շատ իրականացվել է Ռուսաստանի Դաշնություն(ամբողջ ճանապարհորդությունների 29.3%), ԱՄՆ(24.3%), Հունաստան(23.7%), Բելառուս(22.1%) և այլն (Տես աղյուսակ N5.8.1.1):

**Աղյուսակ** 5.8.1.1: **Ուղևորության ֆինանսավորումն ըստ այցելության հիմնական երկրների (%)**

| | Սեփա-կան միջոց-ների հաշվին | Արտերկրում ապրող բարե-կամի կամ հարազատի կողմից | Միջազգային կամ այլ օտարերկրյա կազմակերպություն-ների կողմից | Կազմակերպությա ն միջոցների հաշվին (գործուղում) | Այլ աղբյուրների հաշվին |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **73.75** | **18.98** | **1.79** | **4.98** | **0.50** |
| Ռուսաստանի Դաշնություն | 65.64 | 29.26 | 1.28 | 3.50 | 0.32 |
| Վրաստան | 93.62 | 4.48 | 0.30 | 1.18 | 0.42 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 80.92 | 5.29 | 0.46 | 13.33 | 0.00 |
| Թուրքիա | 93.84 | 2.46 | 0.25 | 1.23 | 2.22 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 90.58 | 4.99 | 1.11 | 2.49 | 0.83 |
| Ուկրաինա | 60.70 | 24.89 | 3.49 | 10.04 | 0.87 |
| Գերմանիա | 61.18 | 8.82 | 6.47 | 23.53 | 0.00 |
| Միացյալ Նահանգներ | 54.67 | 24.00 | 9.33 | 11.33 | 0.67 |
| Իտալիա | 72.57 | 8.85 | 6.19 | 11.50 | 0.88 |
| Ավստրիա | 60.64 | 4.26 | 7.45 | 26.60 | 1.06 |
| Ֆրանսիա | 68.29 | 12.20 | 2.44 | 15.85 | 1.22 |
| Չեխիայի Հանրապետություն | 62.96 | 8.64 | 12.35 | 14.81 | 1.23 |
| Բելառուս | 63.64 | 22.08 | 5.19 | 9.09 | 0.00 |
| Լեհաստան | 69.74 | 18.42 | 7.89 | 3.95 | 0.00 |
| Իսպանիա | 72.55 | 9.80 | 1.96 | 13.73 | 1.96 |
| Բելգիա | 51.06 | 17.02 | 4.26 | 25.53 | 2.13 |
| Միացյալ Թագավորություն | 65.22 | 8.70 | 8.70 | 17.39 | 0.00 |
| Հունաստան | 71.05 | 23.68 | 0.00 | 2.63 | 2.63 |
| Չինաստան | 68.75 | 6.25 | 6.25 | 18.75 | 0.00 |

| | Սեփա-կան միջոց-ների հաշվին | Արտերկրում ապրող բարե-կամի կամ հարազատի կողմից | Միջազգային կամ այլ օտարերկրյա կազմակերպություն-ների կողմից | Կազմակերպությա ն միջոցների հաշվին (գործուղում) | Այլ աղբյուրների հաշվին |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **73.75** | **18.98** | **1.79** | **4.98** | **0.50** |
| Շվեյցարիա | 62.50 | 6.25 | 0.00 | 31.25 | 0.00 |
| Այլ երկրներ | 61.89 | 15.14 | 8.38 | 13.24 | 1.35 |

Ինչ վերաբերվում է ըստ նպատակի ճանապարհորդության ֆինանսավորմանը, ապա սեփական միջոցների ֆինանսավորման ամենաբարձր մասնաբաժինը արձանագրվել է <Աշխատանքի> ու <Այլ> նպատակով ճանապարհորդողների շրջանում՝ շուրջ 90%, իսկ ամենացածրը՝ մարզական մշակութային(52.8%) և <Բուժման>(52.8%) նպատակներով: Տրամաբանորեն կազմակերպության միջոցների հաշվին ճանապարհորդության ամենամեծ դրույքաչափը արձանագրվել է <գործնական> նպատակով ճանապարհորդների մոտ(Տես Աղյուսակ N5.8.1.2)

**Աղյուսակ** 5.8.1.2.: **Ճամփորդության ֆինանսավորումն ըստ այցելության նպատակի (%)**

| | Գործնա-կան | Աշխա-տանքի | Կրթու-թյան. | Բուժ-ման | Հանգս-տի և ժա-մանցի | Մարզական, մշակութային միջոցառում-ներին մասնա-կցություն | Այցելութ-ուն հարա-զատներ-ին, ընկեր-ներին | Ուխտա-գնացու-թյուն | Այլ | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սեփական միջոցների հաշվին | 69.91 | 89.53 | 66.47 | 53.33 | 87.53 | 52.82 | 65.01 | 59.46 | 89.81 | 75.44 |
| Արտերկրում ապրող բարեկամի կամ հարազատի կողմից | 2.68 | 6.47 | 9.25 | 43.81 | 11.12 | 7.69 | 34.63 | 21.62 | 9.43 | 17.64 |
| Միջազգային կամ այլ օտարերկրյա կազմակեր-պությունների կողմից | 4.05 | 0.39 | 22.54 | 0.00 | 0.45 | 26.15 | 0.22 | 2.70 | 0.00 | 1.81 |
| Կազմակերպության միջոցների հաշվին (գործուղում) | 22.93 | 3.15 | 1.16 | 0.00 | 0.32 | 12.82 | 0.00 | 13.51 | 0.25 | 4.71 |
| Այլ աղբյուրների հաշվին | 0.44 | 0.45 | 0.58 | 2.86 | 0.58 | 0.51 | 0.14 | 2.70 | 0.50 | 0.40 |
| **Ընդամենը** | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

## 5.8.2. Ստացվող եկամուտը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքի նպատակով ճանապարհորդությունը Հայաստանի համար շատ կարևոր ու նշանակալի տեղ է զբաղեցնում, դրանով պայմանավորված հարցաշարում ներառվել է նաև հարցեր եկամտի ստացման վերաբերյալ: Իհարկե, հայաստանյան ճանապարհորդները, ըստ հարցումների արդյունքների

եկամուտ ստացել են գրեթե բոլոր նպատակներով ճանապարհորդությունների ժամանակ, բացառությամբ <Բուժման> և <Ուխտագնացության>: Ըստ հարցման արդյունքների, ինչպես և սպասվում էր ամենաշատ եկամուտներ ստացել են Ռուսաստանի Դաշնություն, Իրան, Ուկրաինա այցելող ճանապարհորդները: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցած, և տվյալ հարցին պատասխանած ընդհանուր ճանապարհորդների միայն 18.4%-ն է <Այո> պատասխանել, որ ստացել է եկամուտ: Հարցման արդյունքներով, յուրաքանչյուր <Այո> պատասխանող ճանապարհորդ միջին հաշվով ստացել է 5691 դոլար եկամուտ, ընդ որում հիմնական երկրներից ամենաբարձր միջին եկամուտը ստացվել է Բելառուսում(9996 դոլար), Լեհաստանում(6905 դոլար), Հունաստանում(6573 դոլար), Ուկրաինայում(6240 դոլար), Ռուսաստանում(6083 դոլար): Իսկ ճանապարհորդների թվաքանակի և գումարի առումով ամենաբարձր մասնաբաժինը ունեցել է Ռուսաստանը(Տես Աղյուսակ N5.8.2.1):

**Աղյուսակ N5.8.2.1 Ճանապարհորդների կողմից ստացված եկամտի կառուցվածքն ու միջին եկամտի չափը ըստ երկրների**

| | Եկամուտ ստացողների կառուցվածքը ըստ թվաքանակի | Եկամուտ ստացողների կառուցվածքը ըստ գումարի | Ստացված միջին եկամուտը մեկ ճանապարհորդի հաշվով, դոլար |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **5691.2** |
| Ռուսաստանի Դաշնություն | 86.79 | 92.76 | 6082.6 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 5.63 | 2.12 | 2148.0 |
| Ուկրաինա | 1.30 | 1.43 | 6240.9 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 0.89 | 0.11 | 715.8 |
| Վրաստան | 0.71 | 0.09 | 716.0 |
| Միացյալ Նահանգներ | 0.71 | 0.52 | 4150.0 |
| Բելառուս | 0.59 | 1.04 | 9996.6 |
| Գերմանիա | 0.41 | 0.21 | 2823.1 |
| Թուրքիա | 0.41 | 0.10 | 1314.3 |
| Ղազախստան | 0.30 | 0.26 | 5040.0 |
| Ավստրիա | 0.24 | 0.04 | 1022.9 |
| Հունաստան | 0.24 | 0.27 | 6573.6 |
| Իտալիա | 0.18 | 0.06 | 1788.6 |
| Լեհաստան | 0.18 | 0.22 | 6905.3 |
| Այլ երկրներ | 1.42 | 0.78 | 3108.3 |

**Գծապատկեր N5.8.2.1 Ճանապարհորդների քանակի(ձախ) ու ստացված եկամուտների(աջ) կառուցվածքը ըստ երկրների,%**







**Աղյուսակ 5.8.2.2: Եկամտի ստացման վերաբերյալ <Այո>/Ոչ պատասխանների կառուցվածքն ու ստացվող միջին եկամտի չափը ըստ այցելության նպատակի (%)**

| | Գործնական | Աշխատանքի | Կրթության. | Բուժման | Հանգստի և ժամանցի | Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | Այցելություն հարազատներին, ընկերներին | Ուխտագնացություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Այո | 6.04 | 95.55 | 5.88 | - | 0.14 | 2.86 | 0.48 | - | 1.39 | **20.52** |
| Ոչ | 93.96 | 4.45 | 94.12 | 100.0 | 99.86 | 97.14 | 99.52 | 100.0 | 98.61 | **79.48** |
| **Միջին եկամուտը, դոլար** | **3326.3** | **5712.6** | **1060.5** | **-** | **1570.2** | **3128.4** | **770.3** | **-** | **4157.6** | **5517.7** |

Տրամաբանական է, որ աշխատանքի և գործնական նպատակներով ճանապարհորդող զբոսաշրջիկներն ամենաշատն են եկամուտ վաստակել երկրում մատուցված ծառայություն-ների դիմաց՝ համապատասխանաբար 95.6% և 6.0%: Աշխատանքի նպատակով ճամ-փորդողները միջինում ամենամեծ գումարներ վաստակողներն են՝ 25712.6 ԱՄՆ դոլար: Այցելություն հարազատներին նպատակով ճանապարհորդներն ամենացածր եկամուտ ստացողներն են՝ 770.3 դոլար, իսկ բուժման և ուխտագնացության նպատակով ճանապարհորդները ընդհանրապես եկամուտ չեն ստացել:

## 5.8.3. Տրանսպորտի տեսակը և պատկանելիությունը

Հարցման արդյունքում արձանագրվել է, որ ժամանման պահին Հայաստան այցելող ճանապարհորդները հիմնականում օգտվել են օտարերկրյա պատկանելիության տրանսպորտային միջոցներից՝ շուրջ 67%, որը գրեթե նույն մակարդակի վրա է եղել նաև նրանց մեկնման պահին: Ընդ որում՝ Հայաստանյան տրանսպորտից օգտվելու ամենաբարձր

արդյունքը արձանագրվել է Վրաստան, Իրան և Ռուսաստանի Դաշնություն այցելողների մոտ(Տես Աղյուսակ N5.8.3.1):

**Աղյուսակ N5.8.3.1 Ճանապարհորդների կողմից տրանսպորտային միջոցից օգտվելու կառուցվածքն ըստ պատկանելիության:**

| | Ժամանման պահին | | Մեկնման պահին | |
|---|---|---|---|---|
| | Հայաստանյան | Ոչ հայաստանյան | Հայաստանյան | Ոչ հայաստանյան |
| Ընդամենը | **33.11** | **66.89** | **37.48** | **62.52** |
| Ռուսաստանի Դաշնություն | 28.25 | 71.75 | 27.86 | 72.14 |
| Վրաստան | 62.91 | 37.09 | 81.76 | 18.24 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 65.17 | 34.83 | 66.67 | 33.33 |
| Թուրքիա | 5.42 | 94.58 | 1.84 | 98.16 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 6.18 | 93.82 | 0.00 | 100.00 |
| Ուկրաինա | 13.71 | 86.29 | 10.94 | 89.06 |
| Գերմանիա | 1.46 | 98.54 | 2.33 | 97.67 |
| Միացյալ Նահանգներ | 1.79 | 98.21 | 0.00 | 100.00 |
| Իտալիա | 0.96 | 99.04 | 2.44 | 97.56 |
| Ավստրիա | 1.25 | 98.75 | 1.89 | 98.11 |
| Չեխիայի Հանրապետություն | 0.00 | 100.00 | 0.00 | 100.00 |
| Ֆրանսիա | 0.00 | 100.00 | 0.00 | 100.00 |
| Բելառուս | 0.00 | 100.00 | 0.00 | 100.00 |
| Լեհաստան | 1.72 | 98.28 | 1.79 | 98.21 |
| Իսպանիա | 0.00 | 100.00 | 0.00 | 100.00 |
| Բելգիա | 0.00 | 100.00 | 0.00 | 100.00 |
| Միացյալ Թագավորություն | 2.56 | 97.44 | 7.14 | 92.86 |
| Հունաստան | 0.00 | 100.00 | 9.52 | 90.48 |
| Բուլղարիա | 3.13 | 96.88 | 3.33 | 96.67 |
| Չինաստան | 0.00 | 100.00 | 0.00 | 100.00 |
| Թաիլանդ | 0.00 | 100.00 | 0.00 | 100.00 |

Հայաստանյան տրանսպորտից նման ցածր մակարդակը, թերևս այլ գործոններից զատ պայմանավորված էր նաև 2013թ. ապրիլ ամսից «Արմավիայի» լուծարմամբ:

**Գծապատկեր N5.8.3.1: Այցելուների բաշխվածության կառուցվածքն ըստ տրանսպորտային միջոցի պատկանելիության,%:**







# 6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Աղյուսակ N5.9.1. Համեմատական աղյուսակ 2006-2077թթ. և 2013թ. հետազոտության արդյունքների**

| | 2006-2007թթ հետազոտության արդյունքներ | 2013թ հետազոտության արդյունքներ |
|---|---|---|
| **Արտագնա զբոսաշրջիկների տեսակարար կշիռը ընդհանուր մեկնողների մեջ**,% | 37.8 | 43.3 |
| **Ներգնա զբոսաշրջիկների տեսակարար կշիռը ընդհանուր ժամանողների մեջ**.% | 39.6 | 44.2 |
| **Ներգնա տղամարդ ճանապարհորդները** | 59.9 | 57.5 |
| **Արտագնա տղամարդ ճանապարհորդները** | 57.2 | 59.5 |
| **Ներգնա ճանապարհորդների նպատակը,%** | | |
| Գործնական | 22.4 | 12.18 |
| Աշխատանքի | 4.8 | 3.86 |
| Կրթության. | 1.8 | 2.15 |
| Բուժման | 3.6 | 8.47 |

| | 2006-2007թթ հետազոտության արդյունքներ | 2013թ հետազոտության արդյունքներ |
|---|---|---|
| Հանգստի և ժամանցի | 11.6 | 14.4 |
| Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | 1.5 | 1.5 |
| Այցելություն հարազատներին, ընկերներին | 44.9 | 51.22 |
| Ուխտագնացություն | | 0.28 |
| Այլ | 9.4 | 5.95 |
| **Արտագնա ճանապարհորդների նպատակը,%** | | |
| Գործնական | 26.0 | 16.1 |
| Աշխատանքի | 15.8 | 18.3 |
| Կրթության. | 1.5 | 1.4 |
| Բուժման | 2.2 | 0.9 |
| Հանգստի և ժամանցի | 12.2 | 17.0 |
| Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն | 2.0 | 1.8 |
| Այցելություն հարազատներին, ընկերներին | 32.3 | 35.9 |
| Ուխտագնացություն | | 0.4 |
| Այլ | 8.0 | 8.1 |
| **Հայկական ծագմամբ ճանապարհորդներ** | **62.2** | **65.9** |
| **Ճամփորդական փաթեթներով ներգնա զբոսաշրջիկներ** | **0.9** | **2.7** |
| **Ճամփորդական փաթեթներով արտագնա զբոսաշրջիկներ** | **2.5** | **5.5** |
| **Ներգնա ճանապարհորդների ացարանի ընտրությունը,%** | | |
| Հյուրանոց | 25.6 | 20.5 |
| Վարձով բնակարան | 6.9 | 2.8 |
| Մ/Ն (B&B ), պանդոկ | 1.8 | 1.1 |
| Բարեկամի կամ հարազատի տանը | 56.2 | 68.6 |
| Առողջարաններում | 1.6 | 0.5 |
| Այլ հանգրվաններում | 7.9 | 6.5 |
| **Արտագնա ճանապարհորդների կացարանի ընտրությունը,%** | | |
| Հյուրանոց | 22.5 | 22.9 |
| Վարձով բնակարան | 10.2 | 10.5 |
| Մ/Ն (B&B ), պանդոկ | 1.8 | 5.1 |
| Բարեկամի կամ հարազատի տանը | 52.8 | 51.8 |
| Այլ հանգրվաններում | 12.7 | 9.8 |
| **Ներգնա ճանապարհորդների միջին ծախսերը, դոլար** | | |
| Ընդամենը | 705.4 | 727.7 |
| Ճամփորդական փաթեթով | 2350.9 | 1331.4 |
| Ինքնուրույն | 667.5 | 712.6 |
| **Արտագնա ճանապարհորդների միջին ծախսերը, դոլար** | | |
| Ընդամենը | 1048.2 | 978.1 |
| Ճամփորդական փաթեթով | 1025.1 | 1611.9 |
| Ինքնուրույն | 1451.3 | 919.5 |

Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ ընդհանուր մեկնողների 45.9%-ը հանդիսացել են ներգնա ճանապարհորդներ և ընդհանուր ժամանողների 50.4%- հանդիսացել են արտագնա ճանապարհորդներ: ***Ընդհանուր հարցվողների 44.2%-ը հանդիսացել են ներգնա զբոսաշրջիկներ, իսկ 43.3%-ը արփագնա զբոսաշրջիկներ***: Համեմատության համար նշենք, որ 2006-2007թթ. հետազոտության արդյունքներով զբոսաշրջիկների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել ***էր 39.6% ներգնայի համար, 37.8%*** արտագնայի համար:

Հետազոտությամբ արձանագրվել է նաև, որ հայկական ծագումն էական ազդեցություն ունի Հայաստանի ներքնակ ճանապարհորդության վրա: Ստացված տվյալներից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ հայկական ծագում ունեցող այցելուները, մեծամասամբ, գալիս են սփյուռքից և որ սփյուռքահայերն ամենաշատը կենտրոնացած են Ռուսաստանում և Վրաստանում: Եվ այդ հանգամանքով պայմանավորված, ցավոք սրտի, ռուսական և վրացական սփյուռքի այցելուների մեծ մասը, օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, հակված են ավելի քիչ գումարներ ծախսել, բնականաբար այնքան էլ շատ եկամուտներ չեն բերում Հայաստանի զբոսաշրջության ոլորտին, որքան որ կարող էին, քանզի այս խումբը, չնայած երկար ժամանակ է անցկացնում երկրում, այնուհանդերձ, նրանք ընդհանուր առմամբ շատ ավելի քիչ գումարներ են ծախսում, մասնավորապես կացարանի, ռեստորանների և կազմակերպված ճամփորդությունների վրա: Այս խմբի տվյալները նաև ազդել են ուղևորության տևողության վերաբերյալ տվյալների վրա, քանի որ երկար ժամանակով այցելողները, հիմնականում, հայկական ծագում ունեցող, ընկերներին ու հարազատներին այցելող զբոսաշրջիկներն են:

Ստացված տեղեկատվությունից նաև պարզ է դառնում, որ Հայաստանը զբոսաշրջիկների այցելությունների տեսանկյունից չափազանց կախված է նաև նախկին ԽՍՀՄ երկրներից, ինչը, գլխավորապես, պայմանավորվում է պատմական գործոններով, չնայած դրան հնարավոր պատճառ կարող է հանդիսանալ նաև վիզային ազատ ռեժիմը:

Վերը նշված գործոններով պայմանավորված Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացման համար չափազանց կարևոր է աշխատանքներ տանել ճամփորդական փաթեթներով և մասնավորապես հանգստի և ժամանցի նպատակով հնարավորինս շատ այցելող զբոսաշրջիկներ ներգրավել, որոնց համար գրանցվել է ծախսերի ամենաբարձր

դրույքաչափը: Այս տիպի այցելուները հիմնականում Եվրոմիության երկրներից, Իրանից, ԱՄԷ-ից, Իսրայելից, Ճապոնիայից են:

Հայաստանի ավանդույթները և արկածային/ էկոճամփորդությունը նշվել են որպես Հայաստան այցելելու հիմնական պատճառներ՝ ինչը ցուցանում է, որ այս երկու նիշային շուկաները կարելի է շարունակել զարգացնել, ի լրումն ավելի ավանդական բնական, պատմական և մշակութային զբոսաշրջության վայրերի հետագա զարգացմանը: Այս առումով նախորդ հետազոտության համեմատությամբ էական փոփոխություններ չեն գրանցվել:

Երկրում գտնվելու ընթացքում հայկական ծագում ունեցող այցելուները հակված են մնալ իրենց ընկերների և բարեկամների տանը, այդպիսով ավելի քիչ ծախսելով կացարանի և սննդի վրա: Զբոսաշրջության տիպիկ կացարաններում, ինչպիսիք են հյուրանոցները, B&B-ները, հոսթելները, առողջարանները հանգրվանելու միջինում կարճ կարճ գիշերակացերը, հատկապես հանգստի/ժամանցի, գործնական և սպորտային ու մշակութային միջոցառումներին մասնակցության նպատակներով ճանապարհորդողների մոտ, խոսում է այն մասին, որ այս հաստատությունները պետք է շարունակեն բարելավել իրենց մարկետինգը և ծառայությունների որակն ու մատչելիությունը նմանատիպ հաստատություններում ավելի երկար ժամանակ հանգրվանելու համար այցելուներին գրավելու նպատակով:

Հարկ է նաև նշել, որ 55 և ավելի բարձր տարիքի զբոսաշրջկիները հակված են այցելել Հայաստան արձակուրդների կամ բուժման նպատակով, այդ իսկ պատճառով էլ այս խմբին ծառայությունների մատուցումը կարող է ավելի շատ այցելուներ գրավել:

Ճամփորդական փաթեթով այցելող զբոսաշրջիկների շրջանում ծախսերի դրույքաչափը շատ ավելի բարձր է, այդ իսկ պատճառով էլ Հայաստանի համար հնարավորություն է ստեղծվում զբոսաշրջիկների եկամուտներից ավելի շատ վաստակել, եթե զբոսաշրջիկների ավելի մեծ քանակ սկսի ճանմփորդել ճամփորդական փաթեթով (ցանկալի է, որ վերջիններս կազմակերպվեն հայկական ճամփորդական օպերատորների կողմից): Արտասահման ճամփորդող հայ զբոսաշրջիկները նույնպես շատ քիչ են ճանապարհորդում ճամփորդական փաթեթով, այդ իսկ պատճառով էլ հայկական ճամփորդական օպերատորների եկամուտները կարող են աճել, եթե ներքին զբոսաշրջիկները նույնպես ընտրվեն որպես թիրախ: Այնուհանդերձ, վերջին տարիներին որոշակի աշխուժացում է նկատվում այդ շուկայում, մասնավորապես ներգնա ճանապարհորդների 2.7%-ն է այցելում Հայաստան(2006-2007թթ.- 0.9%), իսկ արտագնա ճանապարհորդների՝ 5.5%-ը (2006-2007թթ.- 2.5%)

Երևանը նշվել է, որպես Հայաստանում ամենաշատ այցելվող վայրերը: Հանգստի նպատակով ճամփորդողներն ամենաշատ քանակով վայրերն են այցելել: Չնայած որ Հայաստանում բազմաթիվ հետաքրքիր վայրեր կան, սակայն ճանապարհորդների մոտ կոնկրետ նախասիրություններ չկան որոշակի վայրերի նկատմամբ: Այնուամենայնիվ, զբոսաշրջիկներին ավելի լավ ծառայություններ մատուցելու համար որոշակի վայրերի զարգացումը (ինչպես օրինակ՝ Դիլիջանը, Սևանա լիճը, Ջերմուկը, Ծաղկաձորը) կարող է մայրաքաղաքից դուրս ավելի շատ զբոսաշրջիկների եկամուտներ ներգրավել:

Ճանապարհորդական ծախսերի մասով արձանագրվել է, որ Հայաստան այցելող ճանապարհորդներն ավելի քիչ են ծախսում, քան Հայաստանի ճանապարհորդները արտերկրում, որը պայմանավորված է ընդհանուր ուղևորափոխադրումներում հայաստանյան տրանսպորտային ընկերությունների ցածր տեսակարար կշռով, հատկապես Ավիափոխադրումներում:

Արտագնա ճանապարհորդությունների մեջ բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատանքի նպատակով ճանապարհորդները՝ 16.5%: Ներգնայի պարագայում այն կազմել է 3.86%, որոնք հակված են քիչ ծախսումներ կատարել:

## ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՄԵԿՆՈՂԻ ՀԱՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

**Հետազոտությունն իրականացվում է համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի**

Հաստատված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
2012թ. հոկտեմբերի 12-ի թիվ 28-Ա որոշմամբ

# Մեկնողի հարցում

ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՆՎԱԳ ԴԻՏԱՐԿՄԱՆ

**Տրամադրված տեղեկությունների գաղտնիությունն ու անանունությունը երաշխավորվում է օրենքով**

երկրի անվանումը | կոդը

1. **Ո՞ր երկրի քաղաքացի եք** (քաղաքացիություն չունեցող անձանց համար նշել «քաղաքացիություն չունի») ☐ ☐ ☐ ☐

2 **Ո՞ր երկիրն է Ձեր հիմնական բնակության վայրը,** ☐ ☐ ☐ ☐

2.1 Արդյո՞ք հանդիսանում եք Հայաստանում տեղաբաշխված օտարերկրյա դեսպանատան, հյուպատոսության կամ զինվորական ստորաբաժանման ծառայող (վանդակում նշել X նշանը) այո ☐ ոչ ☐

**Նշում: Եթե հարցվողի հիմնական բնակության վայրը Հայաստանն է կամ աշխատում/ծառայում է դեսպանատներում/հյուպատոսություններում և զինստորաբաժանումներում հարցազրույցը ՉՇԱՐՈՒՆԱԿԵԼ**

3. **Ե՞րբ եք ժամանել Հայաստան, նշել՝** | քանի օր է մնացել

օրը ☐ ամիսը ☐ տարին ☐ | ☐

**Նշում: Եթե այցելուն չի ունեցել առնվազն մեկ գիշերակաց կամ մնացել է մեկ տարուց ավելի, ապա հարցազրույցը ՉՇԱՐՈՒՆԱԿԵԼ**

4. **Արդյոք ունե՞ք հայկական ծագում** (համապատասխան վանդակում նշել X նշանը) **այո** ☐ **ոչ** ☐

5. **Խնդրում ենք ասել Ձեր տարիքային խումբը** (համապատասխան վանդակում նշել X նշանը)՝

մինչև 17 ☐ 18-35 ☐ 36-63 ☐ 64 և բարձր ☐

6. **Սեռը**(համապատասխան վանդակում նշել X նշ**անը**) **արական** ☐ **իգական** ☐

7. **Ո՞րն է Ձեր ճանապարհորդության հիմնական նպատակը** (համապատասխան վանդակում նշել X նշանը, թույլատրվում է միայն մեկ պատասխան)

7.1. գործնակա................................... ☐ 7.5. հանգստի և ժամանցի ..................................................... ☐
**7.2. աշխատանքի** ........................... ☐ 7.6. մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն ☐
7.3. կրթության................................ ☐ 7.7. այցելություն հարազատներին, ընկերներին........................... ☐
7.4 բուժման………...……..................... ☐ 7.8. ուխտագնացություն.......................................................... ☐
7.9. այլ....................................................................................... ☐

**Նշում: Եթե հանգստի և ժամանցի, ապա շարունակել, այլ դեպքերում անցնել 9-րդ հարցին**

8. Ո՞րն էր Հայաստանն ընտրելու հիմնական պատճառը (կարող եք ընտրել 1-ից ավել պատասխան)՝

8.1բնությունը/տեսարժան վայրերը................ ☐
8.2մշակույթը/պատմությունը.......................... ☐
8.3մասնագիտական շրջագայություն............ ☐
8.4. արկածային շրջակայություն................. ☐
8.5 Հայաստանի ավանդույթները................ ☐
8.6 այլ՝ նշել................................................ ☐

**9. Որտե՞ղ եք հանգրվանել ՀՀ-ում գտնվելու ընթացքում** (համապատասխան վանդակներում նշել գիշերած օրերի քանակը)

9.1. հյուրանոցում .............................. ☐
9.2 վավարձով բնակարանում ........... ☐
9.3 «B&B» կամ Հոսթել..................... ☐
9.4. բարեկամի կամ ընկերոջ տանը ..................... ☐
9.5. առողջարաններում....................................... ☐
9.6. այլ հանգրվաններում.................................... ☐

10. **Նշեք Հայաստանի այն վայրերը, որտեղ այցելել եք, և քանի օր եք գիշերել այդ վայրերում** (վանդակում նշել 0, եթե կատարվել է այցելություն առանց գիշերելու)

10.1 **Երևան**.............................................................................................................. ☐ ☐
10.2 **Արագած լեռ**, **Օշական և այլն** (Արագածոտնի մարզ)............................................... ☐ ☐
10.3 **Էջմիածին**, **Սարդարապատ**, **Զվարթնոց և այլն** (Արմավիրի մարզ)........................ ☐ ☐
10.4 **Սևանա լիճ** (Գեղարքունիքի մարզ)........................................................................ ☐ ☐
10.5 **Գառնի**, **Գեղարդ**, **Ծաղկաձոր** և այլն Կոտայքի մարզ)............................................ ☐ ☐
10.6 **Վանաձոր**, **Աղթալայի**, **Հաղպատի**, **Սանահինի վանքեր և այլն** (Լոռու մարզ)....... ☐ ☐
10.7 **Գյումրի**, **Մարմաշեն վանք և այլն** (Շիրակի մարզ).................................................. ☐ ☐
10.8 **Դիլիջան**, **Հաղարծին**, **Գոշավանք վանքեր**, **Մակարավանք** (Տավուշի մարզ)....... ☐ ☐
10.9 **Նորավանք**, **Ջերմուկ առողջարան** և այլն (Վայոց Ձորի մարզ)................................ ☐ ☐
10.10 **Խոր-Վիրապ և այլն** (Արարատի մարզ).................................................................... ☐ ☐
10.11 **Տաթևի վանք**, **Խնձորեսկ**, **Զորաց Քարեր և այլն** (Սյունիքի մարզ)....................... ☐ ☐
10.12. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն**............................................................ ☐ ☐

11. **Ձեր ճանապարհորդությունը կազմակերպվել է ըստ ճամփորդական-փաթեթի, թե՞ ինքնուրույն, եթե**

11.1. զբոսաշրջային-փաթեթ................................. ☐ *անցնել 12-րդ հարցին* ⇨
11.2. ինքնուրույն, իմ հիմնարկի կամ համագործակցող հիմնարկի կողմից. ☐ *անցնել 14-րդ հարցին* ⇨

12. **Որքա՞ն եք վճարել** զբոսաշրջային **փաթեթի համար** (ներառյալ ընտանիքի անդամներին)՝

***գումարը*____________, *արժույթը*__________, *կոդը***

12.1 Քանի՞ հոգու համար են կատարվել այդ ծախսերը՝____________________

12.2 Արդյո՞ք փաթեթը ներառում է միջազգային տրանսպորտային ծախսերը՝ այո ☐ ոչ ☐

12.3 Եթե ոչ, ապա որքա՞ն գումար եք ծախսել միջազգային տրանսպորտի համար (ներառյալ ընտանիքի անդամներին, եթե այդպիսիք կան)

գումարը______, արժույթը____________, կոդը

12.4 Արդյո՞ք փաթեթի գինը ներառում է այլ երկրներում այցելությունները՝ այո ոչ , եթե այո խնդրում ենք նշել որ երկրներում______________________________

13. **Ասացեք խնդրեմ՝ բացի փաթեթից, Հայաստանում որքա՞ն գումար եք ծախսել ապրանքների ձեռք բերման և ծառայություններից օգտվելու համար** (ներառյալ ընտանիքի անդամներին, եթե այդպիսիք կան),

գումարը__________, արժույթը_________, կոդը :

Քանի՞ հոգու համար են կատարվել այդ ծախսերը՝ _______

**Անցնել** 16-**րդ հարցին :Ճանապարհորդությունն ինքնուրույն կազմակերպող զբոսաշրջիկների համար**

14. **Ամբողջությամբ որքա՞ն գումար եք ծախսել մինչև Հայաստան գալը և Հայաստանում մնալու համար** (ներառյալ ընտանիքի անդամներին, եթե այդպիսիք կան)

14.1 գումարը________, արժույթը____________________, կոդը

14.2 քանի՞ հոգու համար են կատա»Éել այդ ծախսեր՝ ________________

15. **Խնդրում ենք հնարավորինս ճշգրիտ նշել՝ որքա՞ն գումար եք ծախսել ճանապարհորդության կազմակերպման համար մինչև Հայաստան այցելելը և Հայաստանում մնալու համար**

| | գումարը | արժույթը |
|---|---|---|
| 15.1. տրանսպորտի՝ Հայաստան գալու և մեկնելու համար................................ | | |
| 15.2. տեղավորման (ներառյալ գիշերավարձ, սնունդ, խմիչք և այլն)................. | | |
| 15.3. սննդի (ռեստորանի, բարի, բացի 15.2 կետում նշվածի)................................ | | |
| 15.4. տեսարժան վայրերի այցելության, էքսկուրսիաների................................ | | |
| 15.5. տրանսպորտի՝ Հայաստանի ներսում...................................................... | | |
| 15.6. հուշանվերների և տնայնագործական իրերի գնման համար..................... | | |
| 15.7. այլ ծախսեր (ծառայությունների և գնումների համար).............................. | | |

15.8 քանի՞ հոգու համար են կատարվել այդ ծախսերը...................

**Բոլոր** այցելուների **համար**

16. **Եթե օգտվել եք հետևյալ ծառայություններից, ապա, ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք դրանց որակը** (գնահատումը՝ գերազանց-5, լավ-4, բավարար-3, միջին-2, վատ-1)

16.1. հյուրանոցների............... ☐ 16.6. միջազգային տրանսպորտի......................................... ☐

16.2. ռեստորանների............. ☐ 16.7 ներքին ճանապարհների............................................... ☐

16.3. հանգստի գոտիների...... ☐ 16.8. տեսարժան վայրերի (թանգարան, եկեղեցիներ և այլն).. ☐

16.4. ճամփորդական-օպերատ☐երի... ծառայությունների................................ 16.9. զբոսավարի ☐

16.5 գների մակարդակը........ ☐ 16.10 սահմանային ծառայությունների արդյունավետությունը.. ☐

17. **Հնարավո՞ր է, որ Դուք հաջորդ տարիներին ևս այցելեք Հայաստան**

17.1 այո ................. ☐ 17.2 ոչ ................ ☐ (եթե ոչ, ապա ինչու՞)....................................

18. **Ձեր ընկերներին և հարազատներին խորհուրդ կտաի՞ք այցելել Հայաստան**

18.1 այո ................☐ 18.2 ոչ ...........☐

| | Հարցազրուցավար | | Հարցաթերթի համարը | Ամսաթիվը | Լրացման վայրը (օդանավակայան, սահմանային անցման կետ) | Կոդը | Չվերթի համարը | Տրանսպորտային միջոցի պատկանելիությունը (հայաստանյան-1 , ոչ հայաստանյան-2) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անուն ազգանուն | համարը | | | | | | |
| Մեկնում | | | | | | | | |
| Ժամանում | X | X | X | X | X | X | | |

**Երկրների կոդերը և մգացրած վանդակները Չլրացնել, դրանք լրացվում են կոդավորողի կողմից**:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԺԱՄԱՆՈՂԻ ՀԱՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

**Հետազոտությունն իրականացվում է համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի**

Հաստատված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
2012թ. հոկտեմբերի 12-ի թիվ 28-Ա որոշմամբ

**Ժամանողի հարցում**

## ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՆՎԱԳ ԴԻՏԱՐԿՄԱՆ

**Տրամադրված տեղեկությունների գաղտնիությունն ու անանունությունը երաշխավորվում է օրենքով**

երկրի անվանումը | կոդը

1.**Ո՞ր երկրի քաղաքացի եք** (քաղաքացիություն չունեցող անձանց համար նշել քաղաքացիություն չունի) ☐

2 **Ո՞ր երկիրն է հանդիսանում հիմնական բնակության վայրը** ☐

2.1 Արդյո՞ք հանդիսանում եք արտերկրներում տեղաբաշխված հայաստանյան դեսպանատան, հյուպատոսության ծառայող (վանդակում նշել X նշանը ) այո ☐ ոչ ☐

**Նշում: եթե հարցվողի հիմնական բնակության վայրը Հայաստանը չէ կամ աշխատում/ծառայում է այլ երկրներում տեղաբաշխված Հայաստանի դեսպանատներում/հյուպատոսություննում հարցազրույցը** <u>ՉՇԱՐՈՒՆԱԿԵԼ</u>

3. **Ե՞րբ եք մեկնել Հայաստանից**, նշել

օրը ☐ ամիսը ☐ տարին ☐ քանի՞ օր է մնացել ☐

**Նշում: եթե այցելուն չի ունեցել առնվազն մեկ գիշերակաց կամ մնացել է մեկ տարուց ավել, ապա հարցազրույցը** <u>**ՉՇԱՐՈՒՆԱԿԵԼ**</u>

երկրի անվանումը | կոդը

4. **Ո՞ր երկրից եք ժամանում՝ չհաշված տարանցիկ կանգառները** ☐

5. **Խնդրում ենք ասել Ձեր տարիքային խումբը** (համապատասխան վանդակում նշել X նշանը)՝

մինչև 17 ☐ 18-35 ☐ 36-63 ☐ 64 և բարձր ☐

6. **Սեռը** (համապատասխան վանդակում նշել X նշանը) **արական** ☐ **իգական** ☐

7. **Ո՞րն է Ձեր ճանապարհորդության հիմնական նպատակը** (համապատասխան վանդակում նշել X նշանը. թույլատրվում է միայն մեկ պատասխան)՝

7.1. գործնական...................... ☐
7.2**աշխատանքի** ................. ☐
7.3. կրթության....................... ☐
7.4 բուժման........................... ☐
7.5. հանգստի և ժամանցի ........................................................ ☐
7.6. մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցություն... ☐
7.7. այցելություն հարազատներին, ընկերներին............................ ☐
7.8. ուխտագնացություն.............................................................. ☐
7.9. այլ .......................................................................................... ☐

8. **Որտե՞ղ եք հանգրվանել այդ օրերի ընթացքում**(համապատասխան վանդակներում նշել գիշերած օրերի քանակը)՝

☐ ☐

8.1. հյուրանոցային հանգրվանում....... ☐ 8.2. վարձով բնակարանում....... 8.3. B&B կամ Հոսթել ...
8.4 բարեկամի կամ ընկերոջ տանը....... ☐ 8.5 այլ հանգրվանում................ ☐

9. **Ձեր ճանապարհորդությունը կազմակերպվել է ըստ ճամփորդական-փաթեթի**, **թե՞ ինքնուրույն**, **եթե**

9.1 ճամփորդական-փաթեթ........................................................................☐...... անցնել 10-րդ հարցին

9.2. ինքնուրույն, իմ հիմնարկի կամ համագործակցող հիմնարկի կողմից..... ☐ անցնել 12-րդ հարցին

10. **Որքա՞ն եք վճարել զբոսաշրջային փաթեթի համար (ներառյալ ընտանիքի անդամներին)՝**
**գումարը________,արժույթը_______, կոդը**

10.1 Քանի՞ անձի համար են կատարվել այդ ծախսերը՝________

10.2 Փաթեթը ներառու՞մ է միջազգային տրանսպորտային ծախսերը՝ այո ☐ ոչ ☐

10.3 Եթե ոչ, ապա որքա՞ն գումար եք ծախսել միջազգային տրանսպորտի համար (ներառյալ ընտանիքի անդամներին, եթե այդպիսիք կան), գումարը________, արժույթը_______________, կոդը

11. Ասացեք խնդրեմ՝ բացի փաթեթից« արտերկրում որքա՞ն գումար եք ծախսել ապրանքների ձեռքբերման և ծառայություններից օգտվելու համար **(ներառյալ ընտանիքի անդամներին).**

գումարը_______, արժույթը_________________, կոդը

Քանի՞ հոգու համար են կատարվել այդ ծախսերը____________

**Անցնել 14-րդ հարցին** :

## Ճանապարհորդությունն ինքնուրույն կազմակերպող զբոսաշրջիկների համար

12. **Խնդրում ենք**, **հնարավորինս ճշգրիտ**, **նշել՝ որքա՞ն գումար եք ծախսել ճանապարհորդության կազմակերպման համար ՄԻՆՉԵՎ Հայաստանից մեկնելը**

որից՝

| | **Գումարը** | **արժույթը** |
|---|---|---|
| 12.1 միջազգային տրանսպորտի՝ Հայաստանից մեկնելու և վերադառնալու համար ............ | | |
| 12.2 տեղավորման համար, նախօրոք ամրագրում.............................................................. | | |
| 12.3 հագուստի և ճամփորդական պարագաների ձեռքբերման......................................... | | |
| 12.4 ներքին տրանսպորտի համար (բենզին,տաքսի)........................................................... | | |
| 12.5 այլ գնումների (հուշանվերներ, բարեկամների և ընկերների համար)............................ | | |
| 12.6 քանի՞ հոգու համար են կատարվել այդ ծախսերը........................................................ | | |

13. **Խնդրում ենք հնարավորինս ճշգրիտ նշել՝ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ որքա՞ն գումար եք ծախսել** (ներառյալ ընտանիքի անդամներին, եթե այդպիսիք կան)

| | գումարը | արժույթը |
|---|---|---|
| 13.1.միջազգային տրանսպորտի համար (ինքնաթիռ, գնացք, ավտոմոբիլ).................. | | |
| 13.2. տեղավորման համար (ներառյալ սենյակի վճարը, սնունդը, խմիչքը)................. | | |
| 13.3. սնունդ(ռեստորան,բար և այլն), բացի 13.2 կետում նշվածի............................... | | |
| 13.4. էքսկուրսիաների, շրջագայությունների կազմակերպման համար........................ | | |
| 13.5.ներքին տրանսպորտի համար (մեքենայի վարձակալում, տաքսի, բենզին)... | | |
| 13.6. այլ ծախսեր (ծառայությունների և գնումների համար).................................. | | |
| 13.7. ապրանքներ առևտրի (վաճառքի) նպատակով............................................. | | |
| 13.8. քանի՞ հոգու համար են կատարվել այդ ծախսերը ......................................... | | |

## Բոլոր այցելուների համար

**14. Ճանապարհորդությունը ֆինանսավորվել է** (համապատասխան վանդակում նշել X նշանը)

14.1 սեփական միջոցների հաշվին........................................................................ ☐

14.2 արտերկրում ապրող բարեկամի կամ հարազատի կողմից.................................. ☐

14.3 միջազգային կամ այլ օտարերկրյա կազմակերպությունների կողմից................. ☐

14.4 կազմակերպության միջոցների հաշվին (գործուղում)......................................... ☐

14.5 այլ աղբյուրների հաշվին (նշել)________________________________ ☐

15. **Արտասահմանում գտնվելու ժամանակ ստացե՞լ եք արդյոք որևէ եկամուտ Ձեր կողմից կատարված աշխատանքի կամ մատուցած ծառայության դիմաց**

15.1 այո …..... ☐ 15.2 ոչ ……………… ☐ եթե այո,

ապա գումարը ☐ արժույթը ☐

***Շնորհակալություն հարցազրույցի համար***

| | Հարցազրուցավար | | Հարցաթերթի համարը | Ամսաթիվը | Լրացման վայրը (օդանավակայան, սահմանային անցման կետ) | Կոդը | Չվերթի համարը | Տրանսպորտային միջոցի պատկանելիությունը (հայաստանյան-1, ոչ հայաստանյան-2) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անուն, ազգանուն | համարը | | | | | | |
| Ժամանում | | | | | | | | |
| Մեկնում | X | X | X | X | X | X | | |

**Երկրների կոդերը և մգացրած վանդակները Չլրացնել.դրանք լրացվում են կոդավորողի կողմից**: